նիքը արտաքնապէս բաժանուելու վտանգին ենթարկուած է, ներքնապէս ալ կեդրոնի կառավարութեան ղեկավարները, դավաճանելով մեր շահերուն, մեր թշնամիներուն հետ միասին հանդիսատեսի դերին մէջ կը մնան: Այս պատճառով ազգին կը մնար իր գլխուն ճարը նայիլ: Ահա այս նուիրական պահանջէն էր, որ ծագում առաւ Միլլի շարժումը»[20]: Նույն թերթի խմբագրականներից մեկում էլ ոչ միայն արդարացնում էին Միլլի շարժման հայահալած գործողությունները, այլև համարում էին, որ «հայ ջարդելը ինքնապաշտպանութիւն է եղեր»[21]: Ըստ հոդվածագրի՝ Ֆերիտ փաշայի կառավարությունը, փոխանակ միջոցներ գտներ, խուսափելու համար 1916 թվականի Լոնդոնի դաշնագրի համաձայն՝ Թուրքիայի արևելյան նահանգներում (այն է՝ Արևմտյան Հայաստանում) Հայաստան ստեղծելու պարտադրանքից, սկսել էր դատել հայերի տեղահանության պատասխանատուներին և սուլթանի նախագահությամբ անցկացված ժողովում հայտարարել էր, թե «արեւելեան նահանգներու մէջ Հայաստանի մը կազմութեան պատրաստ է կառավարութիւնը»[22]: Թերթը գրում էր, որ թուրքերի իրավունքները և Թուրքիայի մասնատումը թույլ չտալու նպատակով էր հենց այդ տարածքներում ծավալվել Միլլի շարժումը[23]:

«Ճակատամարտի» թղթակցություններից պարզ էր դառնում, որ Միլլի շարժման թափ հավաքելուն զուգընթաց՝ դրա հետ սկսել էին հաշվի նստել, ու քեմալականների պահանջով թե՛ արագացվել էր խորհրդարանական ընտրությունների անցկացումը, թե՛ թույլ էր տրվել քեմալականների հսկողությամբ դրանց կազմակերպումը և ընթացքի վերահսկումը[24]: Նույն օրերին «Ճակատամարտն» իր ընթերցողներին տեղեկացնում էր, որ Թուրքիայի նոր կառավարությունը Թևֆիք փաշայի գլխավորությամբ համագործակցելու էր Միլլի շարժման հետ՝ ներման արժանացնելով ու նախկին զինվորական աստիճանները վերադարձնելով այդ շարժման առաջնորդներ Մուստաֆա Քեմալին և Ռեուֆ բեյին, որը ոչ վաղ անցյալում եղել էր Թուրքիայի ծովային նախարարը[25]: Թերթն, այսպիսով, արձանագրում էր այն փաստը, որ թուրքական պետության կառավարումն ուղղորդողների խմբում հայտնվել էին նոր գործող

[20] Ճակատամարտ 1919, N 275 (Սեբաստիոյ քոնկրէին զեկոյցը):

[21] Ճակատամարտ 1919, N 278 (Հայ ջարդելը ինքնապաշտպանութիւն է եղեր):

[22] Ճակատամարտ 1919, N 278:

[23] Ճակատամարտ 1919, N 278:

[24] Ճակատամարտ 1919, N 278:

[25] Ճակատամարտ 1919, N 274 (Ներում կը շնորհուի Միլլի շարժման պետերուն):

անձինք, որոնք իրենց փոքրաթիվ զինված ուժերի և մարտավարական ծրագրերի շնորհիվ երկրում փոփոխություններ էին պատրաստվում անել:

«Ճակատամարտի» աշխատակիցներից Արտաշես Վանարյանը 1919 թ. հանդես է գալիս երկու հոդվածաշարով՝ «Միլլի շարժման էությունը» և «Հակամիլլի շարժման արժեքը»: Դրանցում նա բավական հանգամանորեն և օբյեկտիվ վերլուծում էր թուրքական իրականության մեջ ոչ պատահականորեն ու կոնկրետ պահանջված ժամանակ ծնունդ առած այս շարժման առաջացման արտաքին ու ներքին պատճառները, շարժառիթները, նպատակները, համագործակցության շրջանակները: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հոդվածագիրը փաստում էր, որ «Իթթիհատը ձևափոխուելով «Միլլի Թէշքիլաթի»՝ աստիճանաբար նուաճեց ամբողջ նահանգները և այն աստիճան հեղինակութեան տիրացաւ, որ շատ մը վայրերը սոսկ հեռագրելով իրեն հպատակեցուց»[26]: Գրում էր, որ վիլայեթներում հաստատվելուց հետո քեմալականներն իրենց հարցերը կարգավորեցին Կ.Պոլսում՝ տապալելով իթիլյաֆի կառավարությանը և այն փոխարինել տալով այնպիսի գործադիր իշխանությամբ, որը եթե նույնիսկ իրենց ամբողջովին չօժանդակեր, գոնե մինչև նոր խորհրդարանական ընտրություններն ու խորհրդարանի ձևավորումը չէր խանգարի Միլլիի գործունեությանը և իշխանազավթման ծրագրերի իրականացմանը[27]: Վանարյանը քեմալականների հաջողությունը պայմանավորում էր երկու գործոնով.

- այդ շարժման կազմակերպիչների և անդամների ներքին ուժով,
- աշխարհի զորեղ պետությունների կողմից Միլլին Թուրքիայի ներքին ազգային խնդիր համարելու պատճառով դրա ծավալման և ընթացքի մեջ Համաձայնական ուժերին ուղղված վտանգ չտեսնելու ու այն «չէթէյական շարժում» չբնորոշելու հանգամանքներով[28]:

Թեև իթթիհատական թերթերը 1919 թվականին պնդում էին, որ Միլլի շարժումն իրենց կուսակցության հետ կապ չուներ, բայց Ա. Վանարյանն իր հոդվածաշարերում հակառակն էր ապացուցում[29]: Նա ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր այն փաստի վրա, որ իթթիհատական կառույցներն

---

[26] Ճակատամարտ 1919, N 321 (Ո՞վ պիտի ըլլա հաղթողը. Միլլի՞ն, թէ՞ հակառակորդները):

[27] Ճակատամարտ 1919, N 321:

[28] Ճակատամարտ 1919, N 321:

[29] Ճակատամարտ 1919, N 279 (Ընտրական հարցին կարեւորութիւնը Իթթիհատին համար):

ամեն կերպ խոչընդոտում էին խորհրդարանական նոր ընտրությունների անցկացմանը մինչև այն պահը, երբ արևմտահայ գավառի տարածքներում թափ հավաքեր Միլլի շարժումը[30]: Ի վերջո ընտրությունների կազմակերպումը տեղի է ունենում՝ համընկնելով Միլլի շարժման աստեղային ժամին. «Այդ այն ժամանակն էր, երբ Մուսթաֆա Քէմալ փաշան իր հեղինակութիւնը տարածած Անատոլուի Արևելեան շատ մը նահանգներուն վրայ, Միլլի շարժման Կարինի համաժողովը կը գումարէր... Ու վերջապէս հնչեց վստահութեան ժամը: Գաւառէն խլրտումի ձայներ հասան Պոլիս: Մուստաֆա Քէմալ փաշա, դուրս գալով իբր Գ զօրաբանակի քննիչ իրեն տրուած իրաւասութեան սահմանէն, ինքնագլուխ կանոնագրեր կը պատրաստէր կառավարիչներու համար և շատ տեղերու մէջ բացարձակ տիքտատօրի մը պէս կը պարտադրէր իր կամքը»[31]: Ա.Վանարյանը, վերլուծելով Միլլի շարժման և Թուրքիայի նախորդ, մասնավորապես իթթիհատական իշխանությունների գործելակերպը, հանգում էր հետևյալ եզրակացությանը. չկար որևէ սկզբունքային տարբերություն Միլլիի և նախորդ կառավարությունների միջև[32]: Հոդվածագրի կարծիքով՝ Թուրքիայի ներքին կյանքում իթթիհատական կուսակցության գաղափարակիր Միլլի շարժման նպատակն էր «վերջ տալ ուրիշներու տիրապետութեան, դադրեցնել հալածանքը իթթիհատականներու դէմ, ազատել բանտարկուած ոճրագործները, պաշտօնի անցնիլ, դիրքի տիրանալ և նոր ընտրութիւններով ձեռք առնել կառավարական ղեկը»[33]: 1919 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ, ինչպես գրում էր Վանարյանը, Միլլին կարճ ժամանակամիջոցում կարողացել էր հասնել իր առջև դրված այդ նպատակների մեծ մասի իրականացմանը: Հոդվածագիրը նշում էր, որ քեմալականները նաև արտաքին քաղաքական դաշտում էին հաջողություններ գրանցել: Առաջին հերթին նրանց նպատակը Թուրքիան մասնատումից փրկելն էր, ինչի համար կարողացել էին համախմբել «ամբողջ անատօլուցի թրքութիւնը»՝ կորով ներշնչելով այն մարդկանց, որոնք «հինգ տարուան տառապալից զինուորութենէ մը ջախջախուած ու պարտուած վերադառնալով՝ պարզապէս անզգայ դիակի մը կերպարանքը առած էին, շարժելու անկարող և որ և է գործի անընդունակ»[34]:

---

[30] Ճակատամարտ 1919, N 279:

[31] Ճակատամարտ 1919, N 279:

[32] Ճակատամարտ 1919, N 287 (Ի՞նչ ազդեցութիւն գործեց Միլլին Հայաստանի և Յունաստանի վրայ):

[33] Ճակատամարտ 1919, N 287:

[34] Ճակատամարտ 1919, N 287:

Փարիզի համաժողովում հայերի պահանջատիրությունը չեզոքացնելու նպատակով քեմալականները պետք է թույլ չտային ցեղասպանությունից փրկված արևմտահայերի վերադարձն իրենց տներ (նրանք արգելել էին նաև կոտորածներից փրկված հույների ներգաղթը՝ այդպիսով քրիստոնյա ազգաբնակչությանը դարձնելով ոչ թե ազգային, այլ կրոնական փոքրամասնություն): Վանարյանն այս առիթով գրում էր. «Համաժողովին՝ «Արևելեան նահանգներու մէջ հայ չկայ» ըսել կարենալու համար Միլլին ոչ միայն չգոհացաւ բազմաթիւ քիւրտ աշիրէթներ բերել-բնակեցնելով հայոց կալուածներուն մէջ, ոչ միայն զանոնք զինեց ոտից ցգլուխ» և պաշարեց ամբողջ սահմանագլուխը, այլև փորձեց Հայաստանի սահմաններէն ներս ալ դիւային խաղ մը խաղալ, ոտքի հանել թաթարները Հայաստանի կառավարութեան դէմ, որպէս զի ան հազիւ ժամանակ ունենայ իր ներքին խռովութիւններով զբաղելու և անգամ մըն ալ չյանդգնի»[35]: Միլլին մի կողմից՝ անհնարին էր դարձնում հարյուր-հազարավոր արևմտահայերի ներգաղթը հունի մեջ դնելու Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության ջանքերը, մյուս կողմից՝ խափանում էր Մուդրոսի զինադադարից հետո իրենց հայրենի բնակավայրեր վերադարձած հայության բնականոն կյանքը՝ շուտով անգամ օրենքների միջոցով նրանց հեռացնելով սեփական հայրենիքից[36]: «Հայ տարրին ստեղծագործական կարողութիւնը մոլեգին ատելութիւն մը կ'արթնցնէ Միլլիին քինախնդիր ուղեղներուն մէջ: Անոնք իրենց աչքովն իսկ տեսան, թէ ինչպէս հատ ու կտոր հայ բեկորները քանի մը ամիսներու ընթացքին յաջողեցան նորէն արծարծել մարած ու քանդուած օճախներու մէջ ստեղծագործութեան ու վերաշինման կայծերը: Հապա ի՞նչ պիտի ըլլար, եթէ Կովկաս ապաստանած փախստականութիւնն ալ վերադառնար ու հաստատուէր իր բոյնին մէջ Վան, Կարին, թէ այլուր»[37],- գրում էր Արտաշես Վանարյանը:

«Ճակատամարտ» օրաթերթում տպագրված թղթակցություններում, լուրերում և հայտարարություններում պարզորոշ երևում էին հայկական և թուրքական տեղեկատվական աղբյուրների ու հաղորդած տեղեկատվության կամ վերլուծությունների հակասություններն ու իրարամերժությունը: Հայկական հարցի վերաբերյալ լրիվ հակասող էին երկու կողմի տեսակետներն ու ասածները: Օրինակ, ի տարբերություն Ա. Վանարյանի վերոհիշյալ վերլուծական տեսակետների, Մուստաֆա Քեմալն իր հայտարարություններում և ելույթնե-

[35] Ճակատամարտ 1919, N 287:
[36] Ճակատամարտ 1919, N 287:
[37] Ճակատամարտ 1919, N 287:

րում առաջ էր տանում թուրքական այն տեսակետը, որ հայերն ապստամբել էին Առաջին աշխարհամարտի տարիներին, դավաճանել էին պետությանը՝ անցնելով հակառակորդ Ռուսաստանի կողմը, ուստի տեղահանվել էին իրենց բնակավայրերից, որ նաև ռազմական գործողությունների թատերաբեմից հեռու մնային: Օրաթերթում բազմաթիվ են Աթաթուրքի կողմից ասված նման հայտարարությունները: Դրանցից մեկում նա, կեղծելով իրականությունը, նշում էր, թե իբր Հայաստանի Առաջին հանրապետությունում բնակվող թուրքերին և մյուս իսլամադավաններին հալածում էին, իսկ Թուրքիայում իրենք հայերին ու բոլոր քրիստոնյաներին ամեն կարգի օգնություն էին ցույց տալիս. «Այնպէս որ այն գորովալից ընթացքին առջև խելահաս հայերը կը զղջան, որ տեղահանութեան պատճառ եղող ապստամբութիւնը առաջ բերած են»[38]:

Քեմալականները Սեբաստիայի համաժողովում ներկայացրած իրենց նախնական ծրագրում նշում էին, որ պայքարելու են հույների և հայերի սկսած անջատողական ձեռնարկներից իրենց «հայրենիքի» պատիվը պաշտպանելու համար[39]: Մուստաֆա Քեմալն իր ճառի մեջ մասնավորապես Հայկական հարցի դեմ պայքարն էր կարևորում. «Արևելքի մէջ հայերն սկսան պատրաստուիլ մինչև Ալիս տարածվելու և իրենց ջարդի քաղաքականութեան, որ այժմէն մինչև մեր սահմանները եկած հասած են... Արևելքի մէջ սահմանի մեր սգաւոր նահանգները, որոնք պատերազմին ամեն տեսակ չարիքներն ու վիշտերը կրած և մանաւանդ հայոց վայրագութեանց և զուլումներուն ասպարէզ եղած են, ազգային պատիւը փրկելու համար իրաւանց պաշտպան միութիւններ կազմեցին: Նոյնը ըրաւ Տիարպէքիր, որ արևելքէն ու հարաւէն վտանգ զգացած էր»[40]:

Հայկական հարցը և քեմալականների ծրագրերն ու ձեռնարկները «Ճակատամարտ» օրաթերթի հոդվածների ու վերլուծականների կիզակետում

«Ճակատամարտ» օրաթերթի՝ 1920 թվականի հրապարակումների մեջ ավելի շատ են Միլլի շարժման և թուրքական կառավարող շրջանակների և հակամիլլի ուժերի հարաբերություններին, Փարիզի համաժողովում Թուրքիայի բռնելիք դիրքին, Թուրքիայի Ազգային ուխտին, Վուդրո Վիլսոնի Իրա-

[38] Ճակատամարտ 1919, N 323 (Մուստաֆա Քէմալի յայտարարութիւնը. հայերու ապստամբութեան հին հանկերգը):

[39] Ճակատամարտ 1919, N 277 (Մուստաֆա Քէմալի ճառը հայերու մասին):

[40] Ճակատամարտ 1919, N 277:

վարար վճռին վերաբերող վերլուծությունները, թարգմանական հոդվածներն ու լուրերը: Երբ Համաձայնական ուժերը մի պահ ցանկանում էին Կ.Պոլիսը դուրս բերել թուրքական վերահսկողությունից, Մուստաֆա Քեմալն իր զորքերը Սվազից տեղափոխում է Էնկյուրի, որտեղից երկաթգծով հեշտանում էր նրա անմիջական կապը մայրաքաղաքի հետ: «Դաշնակիցներու՝ թուրքերը Պոլսէն հեռացնելու ենթադրեալ որոշումը պատճառ եղած է, որ միլլիճիները կասկածոտ ըլլան հանդէպ դաշնակիցներու և կառավարութեան: Մուսթաֆա Քէմալ, Էնկիւրիի երեւելիներու առջև բուռն ճառախօսութիւն մը ընելով, վերստին յիշած է Ուիլսընի 14 կէտերը և բողոքած է՝ ըսելով, որ իրենց շարժումը երբեք չպիտի ընդունի Թուրքիոյ բաժանումը և ստրկացումը: Քէմալ փաշա դեռ կը շարունակէ պաշտպանել Թուրքիան դաշնակիցներու այն ամբաստանութիւններուն դէմ, թէ թուրք կառավարութիւնը ոչ մահմետական փոքրամասնութիւններու դէմ բռնակալօրէն վարուած է և թէ ան չունի կառավարելու յատկութիւնը»[41],- կարդում ենք օրաթերթում «Մորնինգ փոստ» պարբերականի հունվարի 12-ի համարից թարգմանաբար արտատպված վերլուծական հոդվածում: Թղթակիցը նաև գրում էր, թե այս ապստամբական քայլով Քեմալը հասկացնում էր, որ Միլլին կառավարությանը կաջակցեր կամ կմիանար միայն այն դեպքում, եթե հաշտության պայմանները գոհացնեին նրանց, հակառակ դեպքում՝ քեմալականները պատերազմելու էին[42]: Իր պահանջներն առաջ տանելու նպատակով Քեմալն Էնկյուրիում ստեղծում է սեփական կառավարություն՝ հրահանգելով իրեն հավատարիմ բոլոր ուժերին և անձանց, հարաբերությունները խզել Կ.Պոլսում տեղակայված երկրի օրինական իշխանությունների հետ[43]: Այս ամենը, «Ճակատամարտի» համոզմամբ, լուրջ սպառնալիքներ էր պարունակում հայերի և մյուս քրիստոնյաների կյանքի համար. «Հայ և յոյն բնակչութիւններուն կեանքը խաղալիք դարձած է»[44]: «Ընթացիկ կյանք» բաժնի լուրերից մեկում ընթերցողները շուտով տեղեկանում էին, որ Միլլի շարժումն արագ քայլերով առաջ գնալով, պարտադրում էր իր կամքը Թուրքիայի կառավարող շրջանակներին՝ փոփոխություններ կատարելով նախարարների պալատում: «Միլլին յաղթանակեց և յաջողեցաւ դահլիճէն դուրս նետել տալ իր չուզած նախարարները… Միլլի խմբակը կը պահանջէր

---

[41] Ճակատամարտ 1920, N 367 (Մուստաֆա Քէմալ կը շարունակէ իր սպառնալիքները):

[42] Ճակատամարտ 1920, N 367:

[43] Ճակատամարտ 1920, N 451 (Մուստաֆա Քէմալի դահլիճը):

[44] Ճակատամարտ 1920, N 451:

ներքին, արտաքին գործերու և դատական նախարարներու հրաժարումը»[45],-գրում էր պարբերականը՝ ավելացնելով, թե միլլիական «Հայրենիքի փրկության» խմբակը վարչապետին ներկայացրած վերջնագրով հասկացրել էր, որ իրենց պահանջը մերժելու պարագայում՝ Միլլին «դահլիճին վստահութեան քուէ»[46] չէր տալու: Թերթի հրապարակումները վկայում էին, որ միլլիականների բոլոր պահանջները բավարարվել էին, իսկ նորընտիր պատգամավոր Մուստաֆա Քեմալին[47] էլ ծափերով էին դիմավորել Թուրքիայի երեսփոխանական ժողովում[48]: Այդտեղ քեմալական պարագլուխներից երեսփոխան ընտրված Րեուֆ բեյն իր ողջույնի խոսքում ասում էր, որ իրենց շարժումն «ոչ մէկ արտաքին ուժի դրդումով չէ եղած, այլ ան Անատոլուի ժողովուրդին ինքնապաշտպանութեան ձայնն է»[49] եղել: Շերիֆ բեյն էլ վերահաստատում էր համաթրքության իրենց ծրագիրը, որը ներառում էր Օսմանյան կայսրության նախկին տարածքները և որոնցից ոչինչ չէին պատրաստվում զիջել որևէ միջազգային ճնշման ներքո կամ որևէ միջազգային համաձայնագրով ու փաստաթղթով:[50] Վկայակոչենք նրա ելույթից այս հատվածը. «Իզմիրը թուրք է և թուրք պիտի մնայ…Պատերազմը կը շարունակուի, հօն մեր երկիրը ժառանգի նման չկրնար բաժնուիլ: Անատոլու մէկ է և մէկ պիտի մնայ»[51]: Այսինքն՝ իրենք հայերին չէին պատրաստվում տալ Արևմտյան Հայաստանը: «Ճակատամարտը» նաև հստակ մատնանշում էր, որ այս մոտեցումներն ամրագրված էին քեմալականների մշակած ու խորհրդարանի կողմից հաստատված Թուրքիայի «Ազգային ուխտ» փաստաթղթի մեջ: Խմբագրակազմն արտառոց էր համարում այդտեղ ներկայացված պահանջները[52]: Այնինչ Մուստաֆա Քեմալը վաղուց՝ դեռևս 1907 թվականին էր գծագրել այդ համաթուրանական պետության քարտեզը, ինչի մասին հետագայում վկայել էր նրա մտերիմ ընկերներից Ա.Ֆ. Ջեբեսոյը[53]: Սևրի պայմանագրի մշակման և բանակցային փուլում Մուստաֆա Քեմալը հանդիպումների ընթացքում «պնդում էր, որ Թուր-

[45] Ճակատամարտ 1920, N 376 (Միլլին կը կյադթանակէ):

[46] Ճակատամարտ 1920, N 376:

[47] Ճակատամարտ 1920, N 376:

[48] Ճակատամարտ 1920, N 376 (Մուստաֆա Քէմալ ծափերով երեսփոխան կը հռչակուի):

[49] Ճակատամարտ 1920, N 376:

[50] Ճակատամարտ 1920, N 376:

[51] Ճակատամարտ 1920, N 376:

[52] Ճակատամարտ 1920, N 381 (Ազգային ուխտին ծրագիրը ինչեր կերազէ):

[53] Թուրքիայի Հանրապետության պատմություն 2018, 28:

քիայի սահմաններում գոյություն չեն ունեցել ո՛չ Արևմտյան Հայաստան, ո՛չ էլ Հայկական հարց»[54]:

Եթե Փարիզի համաժողովի գործունեության առաջին փուլում և Միլլի շարժման ձևավորման սկզբնական շրջանում Մուստաֆա Քեմալը հանդես չէր գալիս ծավալապաշտական հայտարարություններով, բավարարվում էր Առաջին աշխարհամարտից հետո գրանցված սահմանային իրողություններով, ինչի մասին կարդում ենք օրաթերթի էջերում, որ 1919 թվականի «յունիսին արևելեան նահանգներու համաժողովը գումարուեցաւ Էրզրումի մէջ…և երդում ըրաւ զինադադարի կնքման պահուն գոյութիւն ունեցող սահմանին մէջ հաշտութիւն մը կնքելու համար»[55], ապա իշխանության գալու շեմին նա գործում էր հանուն համաթուրքական հզոր պետություն կերտելու ծրագրի իրականացման[56]: «Ճակատամարտի» էջերում Քեմալի այդ նպատակներին էր անդրադարձել Տիգրան Զավենը: Վերլուծական հոդվածում նա փաստում էր, որ Միլլի շարժումը «թրքական աշխարհին և թրքական ազգայնութեան զարթումին»[57] արտահայտությունն էր: Ահա թե հոդվածագիրն ինչպես էր հասկացել այդ շարժման առաջնահերթությունները. «Մուսթաֆա Քէմալները կը ջանան փլչող Օսմանեան կայսրութեան բեկորներուն վրայ բարձրացնել թրքական կայսրութիւն մը…Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին ուրիշ նպատակ չունէր, եթէ ոչ ազատագրել Կովկասի թրքութիւնը և միացնել զայն իրեն: Թուրք ժողովուրդը կը ձգտի իր միութեան…Թուրք վարիչները մինչև հիմա ազգային, տեղական պայքարին տուին անլուր բարբարոսութեան մը ձևերը: Կուի այս վայրագութենէն իսկ պէտք է հետևցնել, թէ որքան ուժգնօրէն կը ձգտին անոնք իրենց համաթրքական ու համիսլամական իտէալի իրագործման: Որովհետև հայ ժողովուրդի ազգային միութեան գործը կը խանգարէ թուրք վարիչներու երազը, անոնք վճռեցին բնաջնջել հայութիւնը: Ու կշարունակեն երթալ նոյն ճամփով: Հակառակ պարագային, ի՞նչպէս բացատրել Միլլի շարժման ղեկավարներու անհաշտ վերաբերմունքը դէպի մեր ինքնորոշման իրաւունքը: Ի՞նչպէս բացատրել այն ճիգերը, զոր գործ կը դնէ Ատրբէջանը, տիրանալու հրով ու սրով, հայկական այն հողամասերուն, որոնք կա-

[54] Հայոց պատմություն 2010, 152:

[55] Ճակատամարտ 1919, N 275 (Միլլի շարժումին նպատակը եւ Հայաստանը): Տե՛ս նաև Ճակատամարտ 1919, N 287 (Ի՞նչ ազդեցութիւն գործեց Միլլին Հայաստանի եւ Հունաստանի վրայ):

[56] Թուրքիայի Հանրապետության պատմություն 2018, 24, 28:

[57] Ճակատամարտ 1920, N 380 (Պատմութիւնը չպիտի ներէ):

մուրջ կը կազմեն իր և Թուրքիոյ միջև»[58]: Տիգրան Զավենի այս խոսքերն առավել քան արդիական են: Այսօր Թուրքիայի Հանրապետությունը շարունակում է նախորդ վարչակարգերի համաթուրքական ծրագրի իրագործման քաղաքականությունը՝ ձգտելով Հայկական հարցը ու հայոց պահանջատիրության խնդիրը մեջտեղից հանել: Թեև այդ երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ամեն կերպ փորձում է ստվերել Աթաթուրքի ձեռքբերումներն իբրև այդ ծրագրի նախակարապետի, սակայն հենվում է նրա մշակած սկզբունքների վրա:

Թուրքիայի ներքին ու արտաքին կյանքում Մուստաֆա Քեմալի և նրա ստեղծած Միլլի շարժման խաղացած դերն անուրանալի և բացառիկ է: «Ճակատամարտի» աշխատակից Ա.Վանարյանը դեռևս 1919 թվականին գրում էր, որ այդ կազմակերպված ուժը հարգանք էր ներշնչել իր նկատմամբ արտաքին աշխարհի հզոր տերություններին[59]: Հայերը, սակայն, քեմալականների գործողությունների հետևանքով ենթարկվեցին կոտորածների ու հիմնականում վտարվեցին բնօրրան հայրենիքից կամ մնացին այնտեղ՝ ստիպված դառնալով մահմեդական քուրդ կամ թուրք: Մուստաֆա Քեմալն ի սկզբանե պատերազմ էր հայտարարել հայությանը և Հայաստանին, քանի որ հայ ժողովուրդն ու պետականություն ունենալու նրա ցանկությունը վտանգում էին Թուրքիա պետության տարածքային ամբողջականությանը: Չէ՞ որ Առաջին աշխարհամարտից հետո այդ պետության սահմանները հիմնականում ընդգրկում էին դարեր առաջ հայերից խլված հողատարածքները, որոնք վերջնականապես հայաթափվեցին հենց Աթաթուրք անվանված Մուստաֆա Քեմալի վարած քաղաքականության հետևանքով: Նա իրոք թուրքերի հայրն էր, որն իր զավակների համար ստեղծեց բնակավայր՝ հայերի հողերի վրա, հայրենիք՝ հայերի բռնազավթված հայրենիքի հաշվին և բարեկեցիկ կյանք՝ արևմտահայերից խլված ու յուրացված հարստության և ունեցվածքի հիման վրա: Ժողովրդավարական արժեքների տեսանկյունից, սակայն, Աթաթուրքը հանցագործ հայր էր, որի հանցանքների թվարկումն ի չիք է դարձնում թուրքերի համար նրա ստեղծած բարիքներն ու կեղծ արժեքները: Նա անգամ իր՝ իշխանության գալուց առաջ է խեղաթյուրել թուրքերի պատմությունը՝ Սեբաստիայի համաժողովում հայերին համարելով թուրքերին ջարդող ու երկրի դավաճան, մոռանալով, որ Թուրքիան հայերի հայրենիքը չէր, որ թուրքերը հարյուավոր

[58] Ճակատամարտ 1920, N 380:

[59] Ճակատամարտ 1919, N 287 (Ի՞նչ ազդեցութիւն գործեց Միլլին Հայաստանի եւ Յունաստանի վրայ):

տարիներ առաջ գրավել էին հայոց հայրենի երկիրը և հայերին դարձրել էին իրենց ենթակա: Հայկական հարցի լուծման բանալին դեռևս 1920 թվականին տվել էր հասարակական գործիչ, լրագրող Տիգրան Զավենը «Ճակատամարտի» էջերում: Նրա համոզմամբ՝ հայության ազատագրական պայքարին խանգարել էր ոչ իրատեսական վերլուծություններ ու դրանցից բխող հետևություններ անելը. «Մեր դժբախտութեան աղբիւրը պէտք է փնտռել կարգ մը պատրանքներու մէջ: Շատեր այն համոզումն ունէին, թէ մենք մեր ազատագրութիւնը պիտի ստանայինք «ազատատենչ» պետութիւններէն, իբրև վարձատրութիւն մեր ըրած հսկայական զոհողութիւններուն, իբրև արդար հատուցում մը մեր դարաւոր մարտիրոսագրութեան: Անոնք կ'անգիտանային, որ պետութիւնները կ'երկրպագեն մէկ կուռքի մը՝ Շահին»[60]: Հայ քաղաքական գործիչների մեծամասնությունն, ըստ հոդվածագրի, իրենց պատրանքներով և վարած վերացական քաղաքականության մղումով սպասում էին, որ Անտանտի պետությունները հայությանը նվիրելու էին Միացյալ ու անկախ Հայաստան[61]: Նրանք Հայկական հարցը բաժանել էին երկու մասի՝ արևելահայ և արևմտահայ դատերի, այնինչ դա ավելորդ էր, եթե մեկ պետություն ստեղծելու հարցն էր քննարկվում միջազգային ատյաններում՝ այն պարագայում, երբ հայ պետական ու հասարակական գործիչներից շատերը կատարված իրողություններից ավելի մեծ արժեք էին տալիս դիվանագիտական խաղերին[62]: Տիգրան Զավենի և «Ճակատամարտի» մոտեցումն այն էր, որ հայ քաղաքական կյանքում որոշումներ կայացնողները պետք է իրատես լինեին, առկա աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հանգամանքները չվերլուծեին ռոմանտիզմի դիրքերից ելնելով, այլ համադրեին տվյալ ժամանակահատվածում դիվանագիտական դաշտում առկա օբյեկտիվ իրողություններն ու բոլոր ներգրավյալ կողմերի շահերը՝ առաջ տանելով Հայկական հարցը և կարևորելով համահայկական շահերի միասնությունը և գործակցությունը: Ահա թե ինչ էր գրում այս կապակցությամբ «Ճակատամարտը». «Մեր ժողովուրդը կը հառաչէ այն սրբազան միութեան ետեւէն, զոր կը ծնի ամէն ժողովուրդ, երբ կը տեսնէ իր գոյութիւնն ու ազատութիւնը իրական վտանգի տակ: Մեր պատմութիւնը չպիտի ներէ մեր այն բոլոր առաջարկներուն, որոնք չեն դիւրացներ, չեն փութացներ արդէն ուշացած համագործակցութիւնը»[63]: Կարծես մեր օրերի

[60] Ճակատամարտ 1920, N 380 (Պատմութիւնը չպիտի ներէ):
[61] Ճակատամարտ 1920, N 380:
[62] Ճակատամարտ 1920, N 380:
[63] Ճակատամարտ 1920, N 380:

համար են ասված այս խոսքերը: Չէ՞ որ առ այսօր հայությունն անցյալի սխալների վրա չի կարողանում համապատասխան հետևություններ անել ներկայի ու ապագայի համար՝ անհատական կամ խմբային շահը գերադասելով պետականամետ մտածողությունից ու պետական շահից: Այս առումով նույնիսկ կարելի է աչքի առաջ ունենալ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի օրինակը, որը կարողացավ դրանք իրար չհակադրել ու կերտել միասնական թուրքական պետություն:

Եզրակացություն

«Ճակատամարտ» օրաթերթում կան բազմաթիվ հոդվածներ, այդ թվում՝ օտարալեզու մամուլից թարգմանված վերլուծականներ ու լուրեր, որոնցում խմբագրակազմն ընթերցողներին ներկայացրել է Միլլի շարժման առաջացման պատճառներն ու էությունը, Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ Թուրքիայի պետականության պահպանման համար ձեռնարկված քայլերը: Սկզբնապես պարբերականը չի կռահել քեմալականների ծրագրերը, բայց արդեն 1919 թվականի կեսերից հասկացել է, որ Միլլի շարժումը փրկելու է Թուրքիային մասնատումից՝ ի հաշիվ Հայկական հարցի:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գալոյան Գ. 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, «Գիտություն», 540 էջ:

Թուրքիայի Հանրապետության պատմություն, 2018, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 362 էջ:

Հայոց պատմություն, 2010, հ. 4, գիրք 1, Երևան, «Զանգակ-97», 799 էջ:

Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1919, N 271, N 274, N 275, N 276, N 277, N 278, N 279, N 287, N 321, N 323, 1920, N 367, N 376, N 380, N 381, N 451:

http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_qemalakan_sharjum

ДВИЖЕНИЕ МИЛЛИ НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «ЧАКАТАМАРТ»

ОВСЕПЯН М.

Резюме

Ключевые слова: движение Милли, война, Первая республика Армения, граница, переговоры, конфликт, Мустафа Кемаль.

Огромное число публикаций на страницах газеты «Чакатамарт», в том числе переизданных из иностранной периодики, посвящено вопросу возникновения движения Милли и предпринятым, во главе с Мустафой Кемалем, действиям по сохранению турецкой государственности. Вначале редакция газеты не вникала в суть программ кемалистов, но уже начиная с середины 1919-го года стало очевидным, что движение Милли преследует цель спасения Турции от сепарации за счёт Армянского вопроса.

MILLI MOVEMENT ON THE PAGES OF "CHAKATAMART" DAILY

HOVSEPYAN M.

Summary

Key words: Milli movement, war, the First Republic of Armenia, border, negotiations, conflict, Mustafa Kemal.

Numerous articles published in "Chakatamart" daily, including analytical ones and news translated from foreign languages, are devoted to the question of the essence of the Milli movement, as well as the steps taken under the guidance of Mustafa Kemal in order to preserve the Turkish statehood. At the very start, the editorial board of the periodical didn't give thought to the plans of the kemalists, but already in the middle of 1919 it realized that the Milli movement was meant to save Turkey from separation at the expense of the Armenian question.

NAREK SHARAFYAN*
PhD Student at
“The Armenian Genocide
Museum-Institute” Foundation
sharafyan96@gmail.com
DOI: 10.54503/1829-4073-2022.1.111-122

THE START AND PROCESS OF THE SUMGAIT POGROMS OF THE ARMENIAN POPULATION

Key words: Sumgait, pogroms, massacres, genocide, crimes against humanity, ethnic cleansing, Armenophobia.

Introduction

There are a lot of testimonies, reports of international organisations, court evidence, investigative-judicial protocols as well as court verdicts on the massacres of the Armenian population in the city of Sumgait (Sumqayit) in the Soviet Socialist Republic of Azerbaijan, committed from February 27 to February 29 in 1988. The aforementioned documents and evidence allow us to comprehensively present the course of events. However, it should be highlighted that in political and, in some cases, scientific circles, these tragic events are sometimes viewed as mere hooliganism, a result of exclusively hooligan-motivated killings.

Due to the comprehensive analysis of factual data on the circumstances of the commencement and process of the massacres of the Armenian population in Sumgait (also known as the “Sumgait pogrom”), this article attempts to substantiate that the massacres were (1) based on national hatred; 2) were organised and coordinated. The substantiation of the mentioned circumstances will contribute to the study of the nature of the discriminatory policy pursued in Azerbaijan towards the Armenian population and its consequences. In addition, this article aims at providing legal analysis of the crimes committed in Sumgait from the point of view of the international criminal law.

* *Հոդվածը ներկայացվել է 25.01.22, գրախոսվել է 27.01.22, ընդունվել է տպագրության 25.04.22:*

National Hatred at the Root of the Pogroms

On February 20, 1988, the Stepanakert Regional Council of People's Deputies of the Nagorno-Karabakh Autonomous Region decided at a special session to refer to the Supreme Soviets of the Azerbaijani and Armenian SSRs to return the NKAO from the Azerbaijani SSR to the Armenian SSR[1].

In response to the above-mentioned decision, the first demonstrations began in 1988 in the Azerbaijani town of Sumgait on February 26, initially limited to chants[2] by some groups about Nagorno-Karabakh being part of Azerbaijan, as well as "testimonies"[3] of violence against the Azerbaijani population in the town of Kapan in the Armenian SSR, and anti-Armenian calls[4].

The news on the violence against Azeris in the Armenian SSR spread by the mass media and some participants to the demonstrations were later refuted during the trials, including by the defendant Ahmedov Ahmed's advocate Yashin[5].

In 1988, in the conditions of non-denial[6] of the false public news about the ethnic clashes between Armenians and Azeris, several thousand people took part in the demonstrations in Sumgait on February 27, 1988 calling to kill Armenians, to expel them from the city and Azerbaijan. Not only the "injured in Kapan" made nationalistic speeches, but also the Director of School No. 25, a theatre actress, and so on[7].

Given the escalation of hatred towards the Armenians in 1988, the violence against the Armenian civilian population started in Sumgait on February 27. The main slogan of the demonstrations was "Death to Armenians"[8], the flags of the Azerbaijani SSR appeared in the hands of the protesters[9] [10], the calls to physically exterminate the Armenians began to sound much more firmly[11].

---

[1] de **Waal** 2013, 13–14.
[2] **Шахмурадян** 1989, 359.
[3] **Шахмурадян** 1989, 100–114.
[4] **Кривопусков** 2007.
[5] **Геворкян** 1998, 83–84.
[6] **Улубабян** и др. 1989, 21.
[7] **Улубабян** и др. 1989, 13.
[8] **Геворкян** 1998, 41, 73.
[9] **Григорян** 2018, 41.
[10] **Геворкян** 1998, 20.
[11] **Шахмурадян** 1989, 100–114.

The above-mentioned circumstances confirm the fact that the participants of the demonstrations preceding the Sumgait massacres had a clear and united idea of nationalist nature. Thus, the demonstrations in Sumgait, initially having started in response to the political demands of the NKAO Armenian population, soon started clearly expressing slogans of physical retaliation against the peaceful Armenian population of the city. It was in those conditions that the physical violence against the Armenians, the murders, the rapes, the destruction of their apartments and the destruction of their property started and was further continued.

The facts of the Sumgait massacre perpetrators, committing crimes based on national hatred are substantiated by the data available in the court cases. In particular, in the case of Ahmedov Ahmed, a lot of evidence is available on how a man with a microphone called on the protesters to take physical revenge on the Armenians. False news about the murders of Azeris in the Armenian SSR was cited as a justification of murders committed with particular cruelty[12].

The rioters attempted to find out where the Armenian civilian population resided[13]. It is noteworthy that even in the absence of receiving the addresses of the Armenians from other residents, the rioters still managed to effectively find the apartments, belonging to the Armenians[14].

The ethnic hatred behind the Sumgait massacres was confirmed in the verdicts of the Voronezh regional court. In particular, in the case of Mehdiev, Rzaev and Turabiev[15], as well as in the case of Ahmedov, Ismayilov and Jafarov[16], the fact of murders committed purely for nationalistic motives was confirmed. More importantly, the fact that the murders, the destruction of apartments, and the crimes in Sumgait were committed for nationalistic motives against the Armenians, who were a national minority in the city, was confirmed by the Supreme Court of the Azerbaijani SSR, stating that the court case proved the fact

[12] **Геворкян** 1998, 13, 38, 72.

[13] **Григорян** 2018, 17.

[14] **Геворкян** 1998, 42.

[15] Приговор Воронежского областного суда по делу Мехдиева, Рзаева, Турабиева 1988.

[16] **Геворкян** 1998, 85–87.

of inciting national hatred towards the Armenians by committing crimes against Armenians[17].

Based on the above presented factual circumstances, a conclusion can be made that in 1988 the crimes committed with particular cruelty against the Armenians in Sumgait, Azerbaijan, from February 27 to 29, were committed with the motive of national hatred.

The Organised Nature of Massacres

The study of the sources and the data available on the mass murders of the Armenian civilian population in Sumgait in February 1988 leads to the separation of certain patterns, based on which reasonable suspicions about the organized nature of the massacres can emerge. From this perspective, it is indeed necessary to discuss the most suspicious circumstances and the available evidence in regard to that accordingly.

1) Telephone Connection Failure

There is a lot of evidence pinpointing that the telephone connection failed in Sumgait during the days of the massacres. It should be highlighted that it was not about a total failure of the telephone connection, but its shutdown. Some authors and witnesses claim that the main target of the telephone connection shutdown were the apartments belonging to the Armenians[18] [19] [20]. One of the witnesses of the incident, Konstantin Pkhakadze, claimed that from Sunday of February 28 until noon of February 29, no telephone was working in the city[21]. Information about this is available in the testimonies of Ryzhkov[22] and Tayubov[23].

It is noteworthy that Omarov M., the person responsible for the telephone connection in the city, who was summoned during the trial, did not deny the information about the intentional disconnection of some of the telephone numbers, bringing the “argument” that the connection was overloaded and an order from the deputy minister had been received to act “as per procedure”. To

[17] Приговор судебной коллегии по уголовным делам по I инстанции Верховного суда Азербайджанской ССР 1989.

[18] **Улубабян** и др. 1989, 28.

[19] **Марукян** 2008.

[20] **Геворкян** 1998, 28.

[21] **Шахмурадян** 1989, 100–114.

[22] **Григорян** 2018, 40.

[23] **Григорян** 2018, 46.

the question whether it is possible to determine through this commonly used procedure which telephone numbers have been disconnected, Omarov gave a negative answer[24]. The aforementioned, nonetheless, gives grounds for doubts, taking into account the fact that Omarov himself referred to the existence of a specific procedure followed in such cases, but at the same time, the latter refused to clarify the principles of operation of such a procedure. According to Omarov, the telephone connection of the city was completely restored only as of March 2[25].

2) Police Inaction

The city police inaction, and according to some sources, the actions aimed at inciting the perpetrators of crimes, speaks of the pre-organized nature of the Armenian massacres in Sumgait with the law enforcement bodies[26].

The inaction of the police and other law enforcement bodies is evidenced both by witness testimonies, as well as court record and reports of discussions of the USSR political leadership, which possessed operational information on the cases.

As a result of following the police behaviour, the population of the city got a clear impression that the police supported and cooperated with the rioters. People who asked the city police for help received generic answers about the need to wait. Moreover, in some cases the crimes were committed in the presence of the police forces and in the conditions of the latter's criminal inaction[27] [28]. According to the testimony of the convict Turabiev, he was actively induced by the police officer to commit crimes[29].

In the conditions of the police inaction, the rioters carried out the actions of stopping cars in the city and checking the presence of Armenians in them[30]. Witnesses often claimed that the police had sufficient information about the incidents but did not take any measures to prevent them[31].

There is interesting data available in regard to the police force inaction in Sumgait in the meeting minutes of the Political Bureau of the Central Committee

[24] **Геворкян** 1998, 66.
[25] **Григорян** 2018, 50.
[26] **Марукян** 2008.
[27] **Улубабян** и др. 1989, 21–22.
[28] **Геворкян** 1998, 75.
[29] **Улубабян** и др. 1989, 24.
[30] **Геворкян** 1998, 39.
[31] **Геворкян** 1998, 48.

of the Communist Party of the Soviet Union (CPSU) on February 29, during which CPSU Secretary General Mikhail Gorbachev repeatedly criticised the police for failing to intervene in the mass massacres and insisted on the immediate replacement of the Sumgait police chief[32].

Information on the police force's Armenophobia has also been provided by the Assistant Prosecutor General of the USSR, N. Yemelyanov[33].

3) Participation of Politicians

The role of the first secretary of the city committee of the Communist Party, Jahangir Muslim-Zadeh, during the demonstrations against Armenians in Sumgait needs an additional discussion. According to witnesses, on February 27, Muslim-Zadeh made a public speech in front of the protesters, ostensibly calling them to stop. The latter insisted that Armenians should be allowed to leave the city peacefully. This request had a provocative effect on the protesters, giving them a chance of a clearer realisation of a possible alternative solution[34].

And already during the protest on February 28, he took the flag of the Azerbaijani SSR to lead the protesters from Lenin Square[35].

4) Murders Committed in Public Places

By a strange "coincidence", the vast majority of crimes committed with particular cruelty in Sumgait took place in public places. As a result of the examination of the testimonies and court documents, a conclusion can be drawn that the choice of the method of murder by the criminals is not accidental.

Among other victims, Lola Avakyan, Yuri Avakyan, Albert Avanesyan, Valeri Avanesyan, Emma Grigoryan, Nikolay Danielyan, Danielyan Seda, Garin Martirosyan, Igor Melkumyan, Eduard Melkumyan, Irina Melkumyan. Melkumyan Raisa, Melkumyan Piruza, were evicted from their apartments and publicly murdered[36] [37].

From the above presented directly follows that despite the fact that the intent was the murder of Armenians on national grounds, there were clear patterns in

[32] Стенограмма заседания Политбюро ЦК КПСС 1988.
[33] **Karabakh Records**, 2012, 00:14:27–00:15:45.
[34] **Шахмурадян** 1989, 100–114.
[35] **Улубабян** и др. 1989, 13.
[36] **Геворкян** 1998, 8, 11, 15, 32.
[37] **Григорян** 2018, 14–15, 18, 24, 30–31, 46.

the methods of the murder. In particular, they were committed with **particular cruelty** and in **public places** as much as possible**.**

5) Road Control

During the Sumgait massacres, the rioters established control over the city roads, checking the presence of Armenians in the cars. On February 29, Gary Martirosyan, who was coming from Baku to his family in Sumgait, was taken out of the car and killed[38]. The duty of controlling one road entering the city and checking the cars was carried out by 300–400 rioters, who were trying different methods to find out the nationality of all the people in the cars[39].

6) Elimination of Crime Traces and Concealment

There is information that during the night of February 27–28, repair and restoration works were immediately started in the city. The works were carried out with such vigour and in such a hurry that they seemed suspicious in the eyes of the witnesses[40]. A special government commission had been appointed for the specific purpose of organising this work[41]. There was a clear instruction given by Ganifaev, a representative of the Central Committee of the Communist Party of Azerbaijan, to burn and cover the destroyed property with soil[42].

According to the same sources, out of 16 women who reported rape, the Republican Bureau of Medical Examination of Azerbaijan confirmed the reports of only two of them. Those living illegally in the city were immediately expelled, despite the fact that many of the rioters were in the same situation[43].

In other words, following the end of the Armenian massacres in Sumgait, Azerbaijan's officials spared no effort to cover up the criminals as well as the material evidence essential for the detection of crimes.

Conclusion

According to the results of the study of the Sumgait pogroms in the Azerbaijani SSR from February 27 to 29, 1988, it is possible to single out and substantiate two allegations about the massacres.

---

[38] **Шахмурадян** 1989, 336.

[39] **Еганян** 2000.

[40] **Шахмурадян** 1989, 100–114.

[41] **Улубабян** 1991.

[42] **Григорян** 2018, 46.

[43] **Улубабян** и др. 1989, 29.

First, the Sumgait massacres were motivated by national hatred, they were aimed at physical revenge against a specific nation: the Armenians. This is evidenced by historical, including judicial detailed documentation.

Second, the study of the Sumgait events proves not only the widespread but also organized nature of the massacres. Particularly, during the days of the massacres, the telephone connection was cut off in the city, the law enforcement bodies showed criminal inaction, some of the politicians participated in rallies, made calls, there were common patterns in the killings of Armenians, the city roads were controlled, traces of destruction were operatively eliminated.

The presented factual data are sufficient to prove that in 1988 in the Azerbaijani town of Sumgait, acts condemned by the international criminal law took place. Pursuant to Article 2 of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, adopted by the United Nations General Assembly, on 9 December 1948, genocide means any of the following acts committed with intent to destroy, in whole or in part, a national, ethnic, racial or religious group, as such: (a) killing members of the group; (b) causing serious bodily or mental harm to members of the group; (c) deliberately inflicting on the group conditions of life calculated to bring about its physical destruction in whole or in part; (d) imposing measures intended to prevent births within the group; (e) forcibly transferring children of the group to another group[44].

As General Assembly Resolution 96(1) declared, genocide "is a denial of the right of existence of entire human groups, as homicide is the denial of the right to live of individual human beings"[45].

The International Criminal Tribunal for the former Yugoslavia ("ICTY") prosecution stated:

in the interests of international justice, genocide should not be diluted or belittled by too broad an interpretation. Indeed, it should be reserved only for acts of exceptional gravity and magnitude which shock the conscience of humankind and which, therefore, justify the appellation of genocide as the "ultimate crime"[46].

---

[44] UN General Assembly 1948, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

[45] UN General Assembly 1946, The Crime of Genocide.

[46] ICTY 1996, 15–16.

The ICC Elements require that the conduct took place in the context of a manifest pattern of similar conduct directed against that group or was conduct that could itself effect such destruction[47]. It must be noted that the contextual element has been criticized by the ICTY Appeals Chamber in Krstic's case[48].

Thus, from the presented legal analysis and comparison of historical data, it follows that the crimes committed in the city of Sumgait in the Azerbaijani SSR in February 1988, with their *mens rea* and *actus reus*, correspond to the elements of the crime of genocide. Nevertheless, it should be noted that courts and tribunals often exercise caution in classifying acts as genocide, reserving it only for exceptional cases. From the point of view of both the state responsibility and the international criminal responsibility of individuals, the threshold for proving the special intent of the crime of genocide is considered to be the highest.

Meanwhile, the afore-mentioned does not mean that in case the *dolus specialis* of the crime of genocide is not proved, the perpetrators will not be prosecuted for an international crime. As proving the *dolus specialis* of genocide is difficult, therefore it may lead those embarking on genocidal programs to believe that they may act with impunity. By using the lower threshold of crimes against humanity it is possible to challenge this impunity.

According to Article 7 of the Rome Statute of the International Criminal Court, "crime against humanity" means any of the following acts when committed as part of a widespread or systematic attack directed against any civilian population, with knowledge of the attack: (a) murder; (b) extermination; (c) enslavement; (d) deportation or forcible transfer of population; (e) imprisonment or other severe deprivation of physical liberty in violation of fundamental rules of international law; (f) torture; (g) rape, sexual slavery, enforced prostitution, forced pregnancy, enforced sterilization, or any other form of sexual violence of comparable gravity; (h) persecution against any identifiable group or collectivity on political, racial, national, ethnic, cultural, religious, gender, or other grounds that are universally recognized as impermissible under international law, in connection with any act referred to in this paragraph or any crime within the jurisdiction of the Court; (i) enforced disappearance of persons; (j) the crime of

[47] International Criminal Court (ICC) 2011, Elements of Crimes.

[48] ICTY 1996, 15–16.

apartheid; (k) other inhumane acts of a similar character intentionally causing great suffering, or serious injury to body or to mental or physical health[49].

To conclude, even if the described facts do not prove "beyond a reasonable doubt" the existence of genocidal intent among the perpetrators, the crimes still correspond to at least the elements of crimes against humanity.

BIBLIOGRAPHY

de **Waal T.** 2013, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York, NYU.

UN General Assembly, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948, United Nations, Treaty Series, vol. 78, p. 277, available at: https://www.refworld.org/docid/3ae6b3ac0.html (accessed 25 January 2022).

UN General Assembly, Rome Statute of the International Criminal Court (last amended 2010), 17 July 1998, ISBN No. 92-9227-227-6, available at: https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html (accessed 25 January 2022).

UN General Assembly, The Crime of Genocide, 11 December 1946, A/RES/96, available at: https://www.refworld.org/docid/3b00f09753.html (accessed 25 January 2022).

International Criminal Court (ICC), Elements of Crimes, 2011, ISBN No. 92-9227-232-2, available at: https://www.refworld.org/docid/4ff5dd7d2.html (accessed 25 January 2022).

ICTY T. Ch., Karadžic´ and Mladic´ (transcript of hearing) 27.06.1996 at 15–16.

Karabakh Records, 2012, http://karabakhrecords.info/documents_court_prigovor-3-goda.html (дата верификации 21.12.2021).

https://www.youtube.com/watch?v=6I6YHWCxoNE&ab_channel=KarabakhRecords (дата верификации 21.12.2021).

Геворкян П.С. 1998, Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, Издательский центр Степанакертского полиграфпредприятия, 87 с.

Григорян М. 2018, Сумгаит: говорят свидетели-азербайджанцы, Ереван, Центр общественных связей и информации, 136 с.

Еганян А. 2000, Увидеть свет в черный день погрома, Армянский Вестник, N 1-2, https://karabakhrecords.info/publication_articles_chernyj-den-pogroma.html (дата верификации 21.12.2021).

Кривопусков В.В. 2007, Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное, Москва, «Голос-Пресс», 384 с.

Марукян А.Ц. 2008, Правовые аспекты проявления геноцида армян на территории Азербайджана в 1988–1990 гг. на примере Сумгаита, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության

[49] UN General Assembly 1998, Rome Statute of the International Criminal Court.

ինստիտուտի հրատ. «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 9, էջ 279–287:

Приговор Воронежского областного суда по делу Мехдиева, Рзаева, Турабиева, 20 декабря 1988 г. http://karabakhrecords.info/documents_court_prigovor-voronezhskogo-oblastnogo-su.html (дата верификации 21.12.2021).

Приговор судебной коллегии по уголовным делам по I инстанции Верховного суда Азербайджанской ССР, 28 марта 1989 г. http://karabakhrecords.info/documents_court_prigovor-3-goda.html (дата верификации 21.12.2021).

Стенограмма заседания Политбюро ЦК КПСС, 29 февраля 1988 года, http://karabakhrecords.info/documents_officials_stenogramma-zasedaniya-politbyuro-tsk-k.html (дата верификации 21.12.2021).

Улубабян Г. Б. 1991, Сумгаит: «Народу нужна вся правда», Литературная Армения, N 4, http://karabakhrecords.info/publication_articles_sumgait_narod_pravda.html (дата верификации 21.12.2021).

Улубабян Г.Б. и др. 1989, Сумгаит… Геноцид… Гласность? Ереван, Общество «Знание» Армянской ССР, 63 с.

Шахмурадян С.С. 1989, Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев. Книга первая, Ереван, Армянский фонд культуры, 427 с.

ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ

ՇԱՐԱՖՅԱՆ Ն.

Ամփոփում

Բանալի բառերը՝ Սումգայիթ, պոգրոմ, ջարդեր, ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություն, էթնիկ զտում, հայատյացություն:

Սումգայիթի հայ բնակչության զանգվածային սպանությունների (հայտնի են նաև որպես «Սումգայիթի պոգրոմ») մեկնարկի և ընթացքի հանգամանքների մասին փաստական տվյալների բազմակողմանի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ազգային ատելության շարժառիթով կատարված զանգվածային սպանությունները եղել են կազմակերպված և համակարգված: Դրանք եղել են Ադրբեջանում հայ բնակչության դեմ տարվող խտրականության քաղաքականության հետևանք: Պետք է նշել, որ Սումգայիթի ջարդերում առկա են միջազգային հանցագործությունների հանցակազմի տարրերը:

НАЧАЛО И ПРОЦЕСС ПОГРОМОВ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ СУМГАИТА

ШАРАФЯН Н.

Резюме

Ключевые слова: Сумгаит, погромы, массовые убийства, геноцид, преступления против человечества, этническая чистка, арменофобия.

Всесторонний анализ фактических данных об обстоятельствах начала и ходе массовых убийств армянского населения в Сумгаите (известных также как «Сумгаитский погром») свидетельствует о том, что массовые убийства, основанные на национальной ненависти, были организованы и скоординированы. Они были результатом дискриминационной политики в отношении армянского населения, проводимой в Азербайджане. Следует отметить, что в Сумгаитской бойне присутствовали элементы международных преступлений.

ROMAN HOVSEPYAN*
PhD in Biology
Institute of Archaeology and Ethnography NAS RA
roman.hovsepyan@iae.am
DOI: 10.54503/1829-4073-2022.1.123-136

SYUNIK (ARMENIA) IN THE CONTEXT OF PERSPECTIVES OF ETHNOBOTANICAL STUDIES

Key words: Ethnobotany, plant foraging, traditional food, folk medicine, sustainable development, ecotourism, gastrotourism.

Introduction

We propose to apply a multidisciplinary and holistic study of wild plants use and plant-related practices as cultural phenomena in Syunik province of Armenia[1]. Thus, the gap in the study of peoples' and plants' interactions as an ecological and cultural phenomenon will be filled. There are three main reasons that make the study of ethnobotany of Syunik of prime importance: 1) comparatively strong preservation of traditions, including those related to the use of wild plants, 2) biological diversity of plants, and 3) geographical and environmental diversity. The preserved traditions will allow to document more details about certain plant-

* *Հոդվածը ներկայացվել է 03.12.21, գրախոսվել է 03.12.21, ընդունվել է տպագրության 25.04.22:*

[1] This study is supported by the Science Committee of the Republic of Armenia, within the frames of the research project 20TTSH-053 (“Exploitation of Natural Vegetal Resources in Syunik (Armenia): Traditions, Modern Trends and Perspectives”). The following scholars participated in the study of ethnobotany of Syunik: Dr. Nina Stepanyan-Gandilyan, Ruzanna Tsaturyan, Dr. Hasmik Abrahamyan, Dr. Allison Morrill Chatrchyan, Hasmik Knyazyan, Ani Saratikyan, Aida Papikyan and the author.

[17] В ходе пленарного заседания интересные доклады были представлены заведующей кафедрой древнеармянской и средневековой армянской литературы и методики ее преподавания Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, член-корреспондентом НАН РА, доктором филологических наук, профессором, заслуженным деятелем культуры Армении Аэлитой Долуханян – «Либретто оперы «Алмаст» Александра Спендиаряна и поэма «Взятие Тмкаберда» Ованеса Туманяна», председателем правления Ассоциации национальных культурных обществ Латвии им. И. Козакевич, доктором искусствоведения, профессором, заслуженным деятелем искусства Латвии Раффи Хараджаняном (Латвия, Рига) – «Александр Спендиарян. Несколько взглядов из сегодня», Анной Асатрян – «Вклад Института искусств НАН РА в становление и развитие академического спендиаряноведения», деканом оркестрового факультета Санкт-Петербургской государственной консерватории им. Н.А. Римского-Корсакова, кандидатом искусствоведения, доцентом Андреем Ивановым (Россия, Санкт-Петербург) – «Произведения для струнных в наследии Александра Спендиарова», ведущим научным сотрудником Института искусств НАН РА, доктором искусствоведения, заслуженным деятелем искусств Армении Маргаритой Рухкян – «Традиционная сценическая концепция оперы «Алмаст» Александра Спендиаряна по прочтении книги «Александр Спендиаров. Статьи и исследования» (1973), доцентом кафедры музыкально-инструментальной подготовки Института музыки, театра и хо-

диаряноведение.

Издание сборника «Современники об Ал. Спендиаряне»

В 1960 году вышел в свет сборник «Современники об Ал. Спендиаряне», составитель которого – Александр Тадевосян. Он также перевел с русского на армянский язык некоторые воспоминания о композиторе. В сборнике были опубликованы мемуары Александра Глазунова, Сергея Василенко, Михаила Гнесина, Максимилиана Штейнберга, Александра Оссовского, которые знали Спендиаряна еще со студенческой скамьи, а также Бориса Асафьева, Никогайоса Тиграняна, Романоса Меликяна, Ануша-

---

реографии Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, кандидатом искусствоведения Надеждой Медведевой (Россия, Санкт-Петербург) – «Творчество Александра Спендиаряна в зеркале петербургского фортепианного дуэта», профессором Казанского государственного института культуры, доктором культурологии Татьяной Гордеевой (Россия, Республика Татарстан, Казань) – «Вокальная музыка Александра Спендиаряна в учебно-педагогическом и концертном репертуаре казанских певцов», доцентом Казанского государственного института культуры, кандидатом искусствоведения Лилией Бородовской (Россия, Республика Татарстан, Казань) – «Исполнительские интерпретации музыки Александра Спендиаряна в творчестве современных музыкантов Республики Татарстан», старшим научным сотрудником Института искусств НАН РА, кандидатом искусствоведения, доцентом Анаит Багдасарян – «Имитация в опере «Алмаст» Александра Спендиаряна», заведующей Кабинетом истории национальных музыкальных культур Санкт-Петербургской государственной консерватории им. Н.А. Римского-Корсакова, кандидатом искусствоведения, доцентом Татьяной Брославской (Россия, Санкт-Петербург) – «Метаморфозы народных инструментальных традиций в творческой эволюции Александра Спендиаряна», старшим научным сотрудником Института искусств НАН РА, кандидатом искусствоведения Марианной Тигранян – «Русский фольклор в творчестве Александра Спендиаряна» и другие.

Хотелось бы особо подчеркнуть выступления сотрудников Института искусств НАН РА – представителей академического спендиаряноведения: ведущего научного сотрудника, доктора искусствоведения, профессора, заслуженного деятеля искусств Армении Лилит Ерնджакян – «Восток Александра Спендиаряна», ведущего научного сотрудника, доктора искусствоведения Назеник Саргсян – «Значение творчества Александра Спендиаряна в области танцевального искусства», ученого секретаря Института искусств НАН РА, кандидата искусствоведения Маргариты Камалян – «Александр Спендиарян глазами армянских художников», старшего научного сотрудника, кандидата исторических наук, доцента Рипсиме Пикичян – «Спендиарофон: «симфонизированный» наследник традиционных музыкальных инструментов», старшего научного сотрудника, кандидата искусствоведения Лилит Артемян – «Фортепианное творчество Александра Спендиаряна» и научного сотрудника Арусяк Петросян – «Связи Александра Спендиаряна с деятелями армянского искусства».

вана Тер-Гевондяна, Микаела Мирзояна и др.

Большую познавательную ценность имеют воспоминания Мартироса Сарьяна, Аветика Исаакяна, Александра Таманяна и Нвард Туманян, которые содержат ценную информацию о работе композитора над оперой «Алмаст», о встречах композитора с Ованесом Туманяном, о его отношении к народной музыке и, наконец, о его последних творческих замыслах. Особый интерес представляют воспоминания дочери композитора – Марины Спендиаровой и друга детства Спендиаряна – Георгия Меликенцова.

Заключение

Таким образом, неоценим вклад академического спендиаряноведения в изучение и издание творческого наследия выдающегося представителя армянской классической музыки, основоположника национальной симфонической музыки, композитора, дирижера и музыкально-общественного деятеля Александра Спендиаряна (1871–1928).

Исследования в области академического спендиаряноведения проводились в следующих направлениях:

- академическое издание полного собрания сочинений Александра Спендиаряна в 11-ти томах (1951–1984),
- научные исследования (Кнарик Григорян – «Александр Спендиаров (жизнь и творчество)» (1952)), «Спендиаров Александр: статьи и исследования» (сост. – Геворк Геодакян, 1973), а также множество научных статей,
- издание архивных материалов о композиторе (Георгий Тигранов – «Александр Спендиаров. По материалам писем и воспоминаний» (1953)),
- издание литературного наследия композитора, в частности, его писем (составитель – Кнарик Григорян, 1962),
- издание летописи жизни и творчества композитора (составитель – Мария Спендиарова, 1975),
- организация посвященных Спендиаряну юбилейных научных конференций (1951, 1971, 2021),
- публикация сборника «Современники об А. Спендиаряне» (составитель – Александр Тадевосян, 1960) и т.д.

БИБЛИОГРАФИЯ

Александр Спендиаров. Статьи и исследования, 1973, Ереван, изд.-во АН Арм. ССР, 211 с., ноты, 1 л. портр.

Будагян Г. 1999, Со Спендиаровым. Страницы воспоминаний, Ереван, «Амроц», 1999, 64 с., 16 с. илл.

Геодакян Г. От редактора. 1975, **Спендиарова М.** Летопись жизни и творчества А.А. Спендиарова, Ереван, изд-во АН Арм. ССР, с. 5–6.

Григорян К. 1955, Александр Спендиарян (опыт характеристики жизни и творчества), Автореферат на соискание ученой степени кандидата искусствоведения, Ереван, 19 с.

Спендиарова М. 1975, Летопись жизни и творчества А.А. Спендиарова, Ереван, изд-во АН Арм. ССР, 522 с., 9л. илл.

Тигранов Г. 1953, А. Спендиаров. По материалам писем и воспоминаний, Ереван, «Айпетрат», 191 с., 12 л. илл., ноты.

Хачатурян А. 1973, Вдохновенный художник, Александр Спендиаров. Статьи и исследования, Ереван, изд.-во АН Арм. ССР, с. 5–7.

Աստրյան Ա. 2010, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 395 էջ+32 էջ նկ.:

Աստրյան Ա. 2021, Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական սպենդիարյանագիտության ձևավորումն ու զարգացումը, Երևան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 171–186:

Աստրյան Ա. 2022, «Ալեքսանդր Սպենդիարյան - 150» միջազգային գիտական նստաշրջանը, ՀՀ ԳԱԱ Գիտություն, N 1, հունվար (361), էջ 7:

Աստրյան Ա. 2022, Միջազգային գիտական նստաշրջան «Ալեքսանդր Սպենդիարյան - 150», Կրթություն, 12 հունվարի, թիվ 1 (1026), էջ 12:

Գրիգորյան Ք. 1952, Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 143 էջ + 7 թ. նկ.:

Սպենդիարով Ա. 1943, Ստեղծագործությունների լրիվ ժողովածու, Առաջին հատոր, Ռոմանսներ և երգեր, խմբագրություն՝ Գ. Բուդաղյանի, Երևան, 225 էջ:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ ԵՎ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր՝ ակադեմիական սպենդիարյանագիտություն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Ալեքսանդր Սպենդիարյան, Երկերի լիակատար ժողովածու,

գիտական ուսումնասիրություններ, նամակներ, տարեգրություն:

Ծանրակշիռ է ակադեմիական սպենդիարյանագիտության դերը հայ դասական երաժշտությանականավոր ներկայացուցիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871–1928) ստեղծագործական ժառանգության հրատարակման և ուսումնասիրության գործում:

Ակադեմիական սպենդիարյանագիտության ասպարեզում աշխատանքներն ընթացել են հետևյալ ուղղություններով՝ Ալեքսանդր Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով (1951–1988), գիտական ուսումնասիրություններ (Քնարիկ Գրիգորյան՝ «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» (1952), «Александр Спендиаров. Статьи и исследования» գիտական հոդվածների ժողովածու (կազմող՝ Գևորգ Գյոդակյան, 1973) և բազմաթիվ գիտական հոդվածներ), կոմպոզիտորին առնչվող արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի հրապարակում (Գեորգի Տիգրանով՝ «А. Спендиаров. По материалам писем и воспоминаний», 1953), կոմպոզիտորի գրական ժառանգության՝ Նամականու հրատարակում (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան, 1962), կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում (կազմող՝ Մարինա Սպենդիարովա, 1975), հոբելյանական գիտական նստաշրջանների կազմակերպում (1951, 1971, 2021), «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմում և հրատարակում (կազմող՝ Ալեքսանդր Թադևոսյան, 1960) և այլն:

ACADEMIC SPENDIARYAN STUDIES: THE PATH AND ACHIEVEMENTS

ASATRYAN A.

Summary

Key words: Academic Spendiaryan Studies, NAS RA Institute of Arts, Alexander Spendiaryan, Collected Works, scholarly research, Letters, Chronicle.

Invaluable is the contribution of academic Spendiaryan Studies to the publication and research of the creative legacy of the prominent representative of

Amenian classical music, the founder of Armenian symphonic music, the composer, conductor and musical-and-public figure Alexander Spendiaryan (1871–1928).

Research in the field of academic Spendiaryan Studies was carried out in the following directions: academic publication of "Complete Works of Alexander Spendiaryan" in 11 volumes (1951–1988); scholarly research: Knarik Grigoryan's "Alexander Spendiarov. Life and Ouevre" (1952), Georgi Tigranov's "Alexander Spendiarov. Based on Letters and Recollections" (in Rus., 1953), collected scholarly papers "Alexander Spendiarov. Articles and Research" (in Rus., compiled by Gevorg Geodakian, 1973), and many others; publication of the composer's literary legacy: "Collection of Letters" (compiled by Knarik Grigoryan, 1962); compilation and publication of the chronicle of the composer's life and oeuvre (compiled by Maria Spendiarova, 1975); organization of anniversary academic conferences (1951, 1971, 2021); compilation and publication of the collection "Contemporaries about Al. Spendiaryan" (compiled by Alexander Tadevosyan, 1960), etc.

ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ*

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՄՄ անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Մատենադարան,
ԵՊՀ, Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոն
yvettetaj@yahoo.com
DOI: 10.54503/1829-4073-2022.1.153-164

ՂԱՋԱՐԱԿԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼԱՆՔԸ ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ Ղաջար, Ղաջարական Իրան, ղաջարական արվեստ, Հակոբ Հովնաթանյան, ղաջարական դիմանկարչություն, Նասեր էդ-Դին շահ, Հովնաթանյան:

Ներածություն

Կտավի վրա յուղաներկով առաջին օրինակների ի հայտ գալը և՛ իրանական[1], և՛ հայկական[2] արվեստում սկսում է XVII դարից:

* *Հոդվածը ներկայացվել է 25.12.21, գրախոսվել է 08.01.22, ընդունվել է տպագրության 25.04.22:*

[1] Կտավի վրա յուղաներկով առաջին օրինակները ի հայտ են եկել Սեֆյանների իշխանության օրոք: Սեֆյանների հզոր տիրակալներից մեկը՝ Շահ Աբբաս Առաջինը, 1598 թ. հիմնադրեց իր նոր մայրաքաղաքը՝ Սպահանը, որը պետք է դառնար մշակութային կենտրոն: Այդ նպատակին հասնելու համար Հայաստանի մի շարք գավառների այն հմուտ արհեստավորներն ու վաճառականները, որոնք եվրոպական մի շարք երկրների հետ կապեր ունեին, գաղթեցվում են Իրան: Սպահանի Նոր Ջուղան մի քանի տարի ընդմիջումից հետո շարունակեց Հին Ջուղայում մշակույթի օրինաչափ զարգացման ավանդները, և այս ամենը չէր կարող անմասն մնալ իրանցիներից: Վերջիններս ցանկանում էին Իրանը ձերբազատել հին ավանդույթներից և արտաքնապես ձևափոխելով մոտեցնել եվրոպականին:

[2] Հայ կերպարվեստի պատմության հենքի վրա քննելով նշենք, որ հաստոցային առաջին գործերը թվագրվում են XVII դարի վերջ և XVIII դարի առաջին քառորդով: Դրանց գերակշռող մեծամասնությունն ավետարանական պատկերներ են: Այս աշխատանքները հիմնականում արվել են եկեղեցիների համար և կարելի է ասել, որ փոխարինում էին եկեղեցու պատերը զարդարող որմնանկարներին: Ավելին տե՛ս **Ավետիսյան** 2007, 27:

Եվրոպական երկրների հետ կապերի աշխուժացման հետևանքով փոխվեց երկու ժողովուրդների կենցաղավարությունը: Փոփոխման գործընթացի մեջ կարևոր դեր ունեցան ինչպես Եվրոպայի հետ հայ և իրանցի վաճառականների անմիջական կապերը, այնպես էլ իրանական և հայկական միջավայր ներթափանցած եվրոպական իրերը: Արվեստի գործերը, հաճախ նաև տպագիր պատկերազարդ գրքերը, որոնք բերվում էին ճանապարհորդների կամ վաճառականների կողմից, որոշակի ազդեցություն թողեցին տեղի գեղագիտական պահանջների ձևավորման վրա, ինչի արդյունքում մեկը մյուսի հետևից սկսեցին ստեղծվել արվեստի գործեր, որոնք աչքի ընկան նոր արտահայտչամիջոցներով, իրականության արտահայտման անմիջականությամբ: Նորամուծությունները հիմնականում դրսևորվում էին թեմատիկայի ընտրությամբ, հեռանկար ստանալիս, համամասնությունների պահպանման մեջ, սիմետրիկ հորինվածքում, լույսի ու ստվերի փոխհարաբերություններում և այլն:

Սկզբնական շրջանում Իրանում այդ աշխատանքները հիմնականում արվում էին պալատները և մեծահարուստների առանձնատները հարդարելու համար (նկ. 1 և 3), իսկ հայկական միջավայրում հաստոցային աշխատանքները տեղ էին գտնում եկեղեցիներում (նկ. 2): Համաձայն Մաղաքիա Օրմանյանի՝ «Եկեղեցուց դուրս բնավ իսկ կիրառության մեջ չեն լինում»[3]:

Թեմատիկ առումով իրանական իրականության մեջ գերակշռել են աշխարհիկ բովանդակությամբ գեղանկարները, որոնք ընդգրկում էին տվյալ ժամանակաշրջանում նորաձև համարվող եվրոպական որևէ իր՝ գերմանական ժամացույց, հախճապակե գինու գավաթ կամ եվրոպական ճենապակե ծաղկաման, իսկ հայկական գեղանկարներում գերակշռողը կրոնական թեմաներն էին, որոնք ստանում են աշխարհիկ մեկնաբանումներ: Կարելի է ասել, որ երկու դեպքում էլ այդ աշխատանքները եկան փոխարինելու որմնանկարներին: Այստեղ կարևոր է մեկ այլ հանգամանք. գեղանկարը միջոց է դառնում անմիջական ու պատկերավոր լեզվով պատմելու մարդկանց կենցաղավարության, բարքերի, ավանդույթների, ծիսական արարողակարգերի փոփոխման մասին: Սա հատկապես բնորոշ էր XVII դարի Սեֆյան Իրանին, որտեղ հաստոցային գեղանկարի ներթափանցումը գալիս է ապացուցելու, որ ավանդապաշտ Իրանը փոխում է իր մշակութային դիմագիծը՝ դառնալով նոր արժեքները փառաբանող միջոց:

[3] Տե՛ս **Օրմանյան** 1992, 111:

Հայկական և իրանական հաստոցային նկարչության նմուշները. համեմատական վերլուծություն

Նորարարություն համարվող յուղաներկով աշխարհիկ կտավները քաղաքական և մշակութային կյանքի փոփոխականության արտացոլանքն էին: Հաստոցային նկարչության վաղ շրջանի ստեղծագործությունները դեռևս կրում էին որոշակի ընդհանրություններ մանրանկարչության հետ, սակայն ժամանակի ընթացքում նորարար արվեստագետների գործերի բազմազանությունն ու գեղանկարչական ընկալումները նոր ուղի հարթեցին ինչպես XVIII, այնպես էլ XIX դարի և՛ իրանական, և՛ հայկական գեղանկարչության հետագա զարգացման համար:

Արդյունքում, XVIII դարից սկսած հաստոցային դիմանկարի ստեղծումը կարող ենք համարել գեղարվեստական կյանքի զարգացման վերելք: Ղաջար դարաշրջանի նկարիչները, ի տարբերության Սեֆյան Իրանի արվեստագետների, որոնք նկարչության մեջ շեշտադրում էին կերպարների ռոմանտիզմն ու թեմաների քնարական մեկնաբանումը, սկսեցին կարևորել արտաքին շքեղությունն ու ճոխությունը: Այսպիսով, արվեստում ստեղծվեց գեղեցիկի նոր ընկալում և մեկնաբանում, որն արտահայտվում էր պատկերվողի նկատմամբ շատ ավելի իրական ու նյութական մոտեցմամբ: Արվեստաբան Նելլի Խաչատրյան-Փոլադյանը նոր ժամանակի արվեստին անցնելու ճանապարհին կարևորում է նաև մեկ այլ հանգամանք: Նա նշում է. «Հետևում թողնելով Վերածննդի ժամանակաշրջանը, մասամբ կլասիցիզմը և բարոկկոն՝ անկախության ճանապարհը բռնած և քաղաքակիրթ աշխարհ ինտեգրվող երիտասարդ երկրները պետք է անհապաղ խոսեին այս աշխարհին հասկանալի, ժամանակակից լեզվով: Նրանք հետևում էին եվրոպական օրինակին արդեն բավական աղավաղված սխեմայով՝ ստիպված լինելով առաջին հերթին հաշվի առնել կոնկրետ ազգային ավանդույթները, երկրորդ հերթին, հարմարվել XIX դարի գեղարվեստական իրականությանը: Այս նոր դպրոցների զարգացման համար յուրահատուկ, ուղեկցող հանգամանք էր դարաշրջանի ռոմանտիկական կոնտեքստը»[4]:

Համեմատելով Ղաջարական Իրանի ժամանակներում ստեղծված հաստոցային ստեղծագործությունները 1806 թվականին Թիֆլիսում ծնված[5], նոր

[4] **Хачатрян-Паладян** 2017, 223–224:

[5] XIX դարի առաջին կեսին Կովկասյան տարածաշրջանում քաղաքական խնդիրների և իրար հաջորդող հակամարտությունների պատճառով Վրաստանը և Արևելյան Հայաս-

շրջանի ազգային կերպարվեստի հիմնադիր Հակոբ Հովնաթանյանի կտավների արտահայտչամիջոցների հետ՝ կկարողանանք ավելի պատկերավոր կարծիք կազմել վերը նշված առանձնահատկությունների մասին: Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործությունները վկայում են XIX դարի առաջին կեսի թիֆլիսահայության կենցաղավարության փոփոխության մասին: Ականավոր նկարչի գեղարվեստական ինքնատիպ ոճը և ուրույն լեզուն ընդհանուր առմամբ մշակվել են 1830-ականներին կատարված աշխատանքներում («Եփրեմ կաթողիկոսի դիմանկարը», «Աստվածատուր Սարգսյանի դիմանկարը», «Շուշանիկ Գուրգենբեկյանի դիմանկարը» և այլն), իսկ արվեստի ծաղկման շրջանն է համարվում 1840–50-ական թթ. ստեղծված Նատալյա Օրբելյանի, Մելիքյանների, Գրիգոր Քարաջյանի, Մովսես Լիլիպարյանի, նկարչի տիկնոջ՝ Սալոմե Հովնաթանյանի և այլոց դիմանկարների օրինակով[6]:

Հարկ ենք համարում նշել, որ Հակոբ Հովնաթանյանը իր կյանքի վերջին տարիները ապրել և ստեղծագործել է Իրանում: Թիֆլիսում լուսանկարչության զարգացումը նպաստում է դիմանկարչի պատվերների նվազմանը: 1860-ական թթ. նա տեղափոխվում է Իրան: Պալատական հմուտ դիմանկարիչ Սանի օլ-Մոլքի[7] (1814–1866 թթ.) մահից հետո Հակոբ Հովնաթանյանը մուտք է գործում ղաջարական արքունիք՝ դառնալով արքունի նկարիչ: Ըստ Մանյա Ղազարյանի ուսումնասիրությունների՝ Հակոբ Հովնաթանյանը Իրանում ինը աշխատանք է ստեղծել: Նասեր էդ-Դին շահը նկարչին «Նաղաշ բաշի» (նկա-

---

տանը մտան Ռուսաստանի կազմի մեջ, և այս հարցը ստիպեց Ռուսաստանի կառավարությանը ավելի մեծ ուշադրություն դարձնել Թիֆլիսին: Քաղաքական այս զարգացումներից հետո Կովկասի նշանավոր արվեստագետներն ու հասարակական գործիչները (այդ թվում հայերը) կենտրոնացան Թիֆլիսում՝ այն վերածելով հայկական ամենաբնակեցված վայրերից մեկի:

[6] Տե՛ս **Աղասյան** 2007, 5:

[7] Սանի օլ-Մոլքը կամ Աբուլ Հասան Ղաֆֆարի Քաշանին աշխատում էր նկարչական տարբեր նյութերով՝ յուղաներկով, ջրաներկով, զբաղվում էր նաև խեժապատ արվեստով (պրսկ.՝ «Հոնար-է լաքի» կամ «Ջիր-է լաքի»): Նա հետաքրքրված էր եվրոպական արվեստով: 1846 թվականից նա մի քանի տարի ապրել է Եվրոպայում, ծանոթացել վարպետների գործերին: 1850 թվականին նկարիչը վերադարձել է Իրան ու նույն թվականին նրան նշանակեցին «նաղաշ-բաշի» (արքունիքի գլխավոր նկարիչ) պաշտոնին: Այս շրջանում նա ուսուցչությամբ էր զբաղվում Դար օլ-Ֆոնուն արվեստի դպրոցում (բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ ուսուցանում էին եվրոպական նորագույն գիտություններ և նկարչական հմտություններ (1848–1896 թթ.): Սանի օլ-Մոլքը 1853 թվականից մասնակցել է Նասեր էդ-Դին շահի պատվերով «Հազար ու մի գիշեր» պատմվածքների ժողովածուի նկարազարդման աշխատանքներին:

րիչների գլխավոր) տիտղոս է պարգևել, ինչպես նաև «Էլմի» (գիտություն) շքանշան[8]:

Իրանցի նկարիչների բնորդները եղել են անվանի մարդիկ՝ թագավորներ, տոհմիկ ազնվականներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, բարերարներ ու նրանց ընտանիքի անդամներ, իսկ Հովնաթանյանի մոտ տոհմիկ ազնվականներից բացի տեսանելի են ունևոր արհեստավորների՝ մոքալաքների[9], ինչպես նաև հոգևոր այրերի դիմապատկերները:

Հովնաթանյանի՝ մինչև ծնկները նկարած կերպարների թիկունքում տեսանելի է միմիայն չեզոք ֆոնը, իսկ ղաջարական նկարներում ամբողջ հասակով կանգնած բնորդը հիմնականում հենված է փայտե բազրիքին: Այս դեպքում բազրիքը աչքի է ընկնում իր երկրաչափական զարդարանքով, որը կապված է տեղական ավանդույթների հետ, իսկ եվրոպական նկարչությունից և՛ իրանցի, և՛ հայազգի նկարիչները փորձել են ընդօրինակել հեռանկարի կառուցման մոտեցումները՝ խորքում տեղադրելով պատուհան, որի մի կողմում երբեմն տեսանելի է հավաքված վարագույրը (իրանական տարբերակներում երբեմն այն հանդիպում ենք նաև երկու կողմում): Պատուհանից երևացող բնանկարի միջոցով դիտողը կապվում է բնության անծայրածիր ազատ տարածությունների հետ (նկ. 4 և 5):

Ղաջարական Իրանում նկարիչները տղամարդկանց նկարում էին գրեթե նույն դիրքով՝ սովորաբար մի ձեռքը գոտկատեղին՝ կանգնած: Հասակով մեկ կանգնած կերպարները սովորաբար ընդունում են միանման կեցվածք՝ երեք քառորդ դիրքով ոտքերը զուգահեռ մի ուղղությամբ, իսկ իրանցի կանանց դիրքերը բազմազան էին և ավելի շարժուն: Ղաջար կանանց նկարում էին պարելիս, երաժշտական գործիքներ նվագելիս կամ ակրոբատիկ անհավանական շարժումներով: Անշարժ դիրքերում նկարված տղամարդկանց (հազվադեպ դեպքերում նաև կանանց) հետ երբեմն ընտանի կենդանիներ են

---

[8] Տե՛ս **Ղազարյան** 1974, 229:

[9] Մոքալաք, քաղաքի բնակիչ, պատվավոր՝ տոհմական քաղաքացի հին Վրաստանում (հատկապես Թիֆլիսի քաղաքացի): Տե՛ս **Հայոց լեզվի բարբառային բառարան**, 2001–2002, 1391: Ժամանակի ընթացքում «մոքալաքե»-ն դառնում է պատվանուն, որ տրվում էր վրաց թագավորների կողմից Թիֆլիսի և Գորի քաղաքների այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքաբնակի հին ծագում և վճարում էին հատուկ հարկ (մախթա): Որոշ արտոնություններով օժտված մոքալաքների իրավունքներն արտահայտություն են գտել Վախթանգ VI թագավորի կազմած օրենսգրքում (XVIII դ.): Մինչև XIX դարի սկիզբը մոքալաքներն առավելապես հայերն էին (տե՛ս **Պետրոսյան** 1966, 89):

նկարված, որի ավանդույթը նույնպես եկել է Սեֆյան Իրանից[10]: Ընդունված էր նաև նկարել կանանց՝ ձեռքներին մրգեր կամ ծաղիկներ:

Հակոբ Հովնաթանյանի գեղարվեստական օժտվածության ուժեղ կետերից է հորինվածքային լուծումը, որը ստեղծվում էր յուրաքանչյուր կտավում կերպարի և ֆոնի ներդաշնակ համամասնության շնորհիվ: Հովնաթանյանի նկարներում կանանց և տղամարդկանց դիրքերն անշարժ են, հանդիսավոր, երեք քառորդ դիրքով կանգնած կամ նստած: Կանանց ձեռքում սովորաբար երևում է թաշկինակ կամ համրիչ:

Հակոբ Հովնաթանյանի արվեստում երկու աշխատանքներ իրենց հորինվածքային լուծումներով և բնորդների դիրքավորման տեսանկյունից տարբերվում են մյուսներից: Դրանք Ղաջարական Իրանի երկու թագավորներ Նասեր էդ-Դին շահի և Մոզաֆեր էդ-Դին շահի դիմանկարներն են: Սովորաբար նկարչի կտավները փոքր են, իսկ այստեղ վարպետը մեծ կտավների վրա է աշխատել: Իրանի թագավորները պատկերված են հեծյալների դիրքով, որոնք նույնպես նոր երևույթ են Հովնաթանյանի ստեղծագործության մեջ[11]:

Նկարչին վերագրվող մեկ այլ աշխատանքում նույնպես հասակով մեկ կանգնած է Նասեր էդ-Դին շահը, որի մի ձեռքին հեռադիտակ է, իսկ մյուսը դրված է գոտկատեղին: Կտավը, որը իր չափերով նույնպես մեծ է, պահվում է Վիեննայի Բելվեդերյան թանգարանում[12]: Շահը հագել է «թերմե»[13] գործվածքից կարված նորաձև վերնահագուստ՝ այսպես կոչված «բադամչե»[14] կամ «բոթե ջեղղե»[15] նախշերով ծածկված (նկ. 6): Այս աշխատանքը իր ոճական

[10] Սեֆյան Իրանի ժամանակների գեղանկարներում հանդիպող ընտանի կենդանիների պատկերման ավանդույթը ներթափանցել էր Եվրոպայից՝ ժողովրդի հետ շփման և եվրոպական նկարչության հետ ծանոթացումից հետո: Եվրոպական գեղանկարներում կար սովորույթ, որ բարձրաշխարհիկ ընտանեկան կամ անհատական դիմանկարներում տեղ էին գտնում նաև ընտանի կենդանիները:

[11] Տե՛ս **Ղազարյան** 1974, 237:

[12] Վիեննայի Բելվեդերյան թանգարանում 2021 թ. սեպտեմբերի 9-ից մինչև 2022 թ. մարտի 27-ը «IN-SIGHT» ցուցահանդեսների շարքի ներքո ցուցադրվեց Հակոբ Հովնաթանյանի, Րաֆեն Սալեհի և Օսման Համդի Բեյի ստեղծագործություններից մեկական կտավ: Այս շարքն անցկացվում է տարեկան երեք անգամ և կենտրոնանում է սեփական թանգարանի՝ Բելվեդերի հավաքածուի եզակի օրինակների վրա:

[13] Թերմե՝ պարսկական (իրանական) բարձրակարգ ձեռագործ գործվածքի տեսակ:

[14] Նշաձև նախշ:

[15] Բոթե ջեղղե՝ կորացած նռճու նախշ, որը խոնարհության խորհրդանիշ է համարվում Իրանի և իրանցիների համար: Այն իրանական ավանդական արվեստի դեկորատիվ տարրերից մեկն է, որը հիմնականում օգտագործվում է գեղանկարչության, մանրանկարչութ-

հատկանիշներով տարբերվում է նկարչին բնորոշ ձեռագրից: Հովնաթանյանի նկարները առաջին հայացքից աչքի են ընկնում իրենց հարթապատկերայնությամբ, բայց խորը հայացք նետելով՝ սկսում ենք վերանայել մեր առաջին տպավորությունը: Գույների նուրբ ու փափուկ անցումների, լույս ու ստվերի ներդաշնակ համակցության արդյունքում ի հայտ են գալիս ծավալատարածական հատկությունները, որոնք այնքան նուրբ են ու հասուն, որ հատուկ են միայն հմուտ նկարչին, իսկ այստեղ հասակով մեկ կանգնած շահի կեցվածքը, գունային անցումները նման չեն իրեն և համոզիչ չեն: Ծավալային ձևերի վերարտադրման մեջ բացակայում են ներդաշնակ անցումները: Ամենաբացահայտ տարբերությունն այստեղ բնորդի հոգեբանական բնութագիրն է՝ անհատական առանձնահատկությունների բացակայությունը կամ անորոշությունը: Անգամ եթե հաշվի առնենք, որ այս աշխատանքը ստեղծվել է բոլորովին այլ միջավայրում՝ Իրանում, որտեղ նկարիչը ազդվել է տեղի նկարչական դպրոցից,ապա դեռ չի նշանակում, որ վարպետը այսքան կհեռանար իր համբավված գեղանկարչական որակներից: Այնուամենայնիվ, այս ստեղծագործության հեղինակը համարվում է Հակոբ Հովնաթանյանը:

Նմանության խնդիրը ղաջար նկարիչների համար ինքնանպատակ չէր: Ե՛վ ղաջար նկարիչների, և՛ Հակոբ Հովնաթանյանի մոտեցումները և արդյունքները տարբերվում են: Ի տարբերություն Հովնաթանյանի լավագույն աշխատանքների՝ հատուկ բանաստեղծական տրամադրությամբ և հուզականությամբ դիմանկարների, ղաջարական ստեղծագործություններում բացակայում են բնորդի զգացումներն ու ապրումները: Ղաջարական գործերում մարմնի ծավալային կերպավորումը հասնում է առավելագույն հարթեցվածության, իսկ բացակայող ծավալի պատճառները տարբեր են: Իրանցի նկարիչները չեն էլ ձգտում ծավալ ստեղծել, և դիտողը կերպարի ծավալային բնութագիրը հիմնականում ստանում է երեք քառորդ շրջադարձով կեցվածքից: Ղաջար նկարիչների ուշադրության կենտրոնում նրբագեղություն և մանրամասնություններ են հայտնվում[16]: Ինչպես ղաջարական ժամանակների ձեռագրերում, այնպես էլ մեծածավալ կտավներում այդ մանրամասնությունների շնորհիվ առաջին հայացքից ամեն ինչ գեղեցիկ է, տպավորիչ ու հարուստ, բայց առանց որևէ լուրջ ակադեմիական մոտեցման:

յան, ասեղնագործության, ոսկերչության, գործվածքների, փորագրության, խեցեգործության, սալիկների, փայտագործության և գորգագործության մեջ:

[16] Այլ մանրամասնություններին ծանոթանալու համար տե՛ս **Թաջարյան** 2020, 130–131:

Հովնաթանյանի կերպարները առաջին պլանում են՝ ֆոնի հարթության առջև, բայց ֆոնից չանջատված: Իսկ ղաջարական դիմանկարներում կերպարը և ֆոնը մեկը մյուսից անկախ են՝ անջատված, դրա կապը համոզիչ չէ:

Ղաջարական դիմանկարներում բնավորության գծեր չեն նկատվում: Այստեղ նկարիչները բնորդների ներքին աշխարհը ներթափանցելու որևէ ջանք չեն ցուցաբերել: Ավելի գերիշխող է անտարբերությունը: Մինչդեռ Հովնաթանյանի կերպարների բնավորության գծերի մասին կարելի է երկար խոսել: Նկարչի դիմանկարներին հատուկ է անհատական և հոգեբանական բնութագրերի հատուկ մոտեցում՝ կենդանություն, համոզիչ անմիջականություն ու ճշմարտացիություն: Անհատական բնութագրերի արտահայտման կամ բացակայության հիմքում, իհարկե, նկատում ենք նկարչի գործոնը, որն արտահայտվում է նկարչական տարբեր հմտությունների, մոտեցումների՝ գծի և գույնի կարևոր երևույթների միջոցով: Ղաջար նկարիչների դիմանկարներում նկատելի են գծանկարային շեշտադրումները, մինչդեռ Հովնաթանյանին բնորոշ չէ չոր գծային երիզավորումը: Հովնաթանյանի յուրաքանչյուր դիմանկար օժտված է անհատական գունային բնութագրով (նկ. 7): Նկարիչը մեծ տեղ է տվել գունային նուրբ կիսատոներին, ինչը նկատելի չէ ղաջար նկարիչների գործերում: Գեղանկարչական այս հմտություններին տիրապետելով՝ նկարիչը դիմանկարում ստանում է իրականին մոտ ծավալ կամ հակառակ դեպքում՝ ծավալի պատրանք:

Այնուամենայնիվ, գեղեցիկի ընկալումը դեմքերի մոդելավորման մեջ և՛ ղաջար նկարիչների, և՛ Հակոբ Հովնաթանյանի մոտեցումներում նույնանման են՝ նրբագեղ, վեհ, հպարտ և ինքնաբավ: Հակոբ Հովնաթանյանի նկարած կերպարները առանձնանում են հատկապես ազգային ինքնատիպությամբ ու հոգեբանական զուսպ արտահայտչականությամբ: Հակոբ Հովնաթանյանի վրձնած կանանց դիմանկարում տեսանելի է հայ կնոջը մարմնավորող հավաքական կերպարը, իսկ Ղաջարական Իրանում ստեղծված դիմանկարները առանձնահատուկ են տեղական արևելյան երանգով: Իրանցի նկարիչները ինչքան էլ փորձում էին իրենց ստեղծագործություններին թարմություն հաղորդել, այնուամենայնիվ, չէին կարող երբեմնի հռչակված և իրանական ազգային դիմագիծ ունեցող ավանդույթներից ամբողջապես ձերբազատվել: Միջնադարյան պարսկական գրական ստեղծագործություններում գեղեցկության չափանիշ համարվող խալին այնքան էին կարևորություն տալիս, որ նույնիսկ իրական կյանքում դիմահարդարման բաղադրիչ էին դարձնում: Խալն այն տարրերից էր, որից նորարար ղաջար նկարիչը չի կարողացել հրաժարվել:



Սպահանի Չեհել
Սոթուն պալատի
գլխավոր սրահի
որմնանկարներից,
17-րդ դար




Սևանի Աստվածամայր,
կտ./յուղ., 79 × 57 սմ, Անհայտ
հայ նկարիչ, 17-րդ դար,
Հայաստանի ազգային
պատկերասրահ



Խոջա Սուլթանի (Աղանուր Տեր-Բարսեղյան) և իր կնոջ դիմանկարը, որմնանկար, 17-րդ դար, խոջա Սուլթանի ապարանք, Նոր Ջուղա, Սպահան



Շուշանիկ Նադիրյանի դիմանկարը, կտ./յուղ., 80 × 64 սմ., գործ՝ Հակոբ Հովնաթանյանի, 1840–50-ական թթ., Հայաստանի ազգային պատկերասրահ



Իրանցի պարուհին՝ ղաջարական ժամանակաշրջան, Անհայտ նկարիչ, մոտավորապես 1845 թ., մասնավոր հավաքածու



Նասեր էդ-Դին՝ ղաջարական Պարսկաստանի շահը, կտ./յուղ., 236 × 149 սմ, գործ՝ Հակոբ Հովնաթանյանի, 1860–70-ական թթ., Վիեննայի Բելվեդերյան թանգարան



Աստվածատուր Սարգսյանի դիմանկարը, կտ./յուղ., 43 × 35 սմ, գործ՝ Հակոբ Հովնաթանյանի, 1834 թ., Հայաստանի ազգային պատկերասրահ



Ֆաթհ Ալի շահի դիմանկարը, կտ./յուղ., գործ՝ Միհր Ալիի, 1813–14-ական թթ., Էրմիտաժ

խորհրդավորություն հաղորդող խալը ղաջարական ժամանակների կտավներում նկատելի է կանանց դեմքի կամ պարանոցի հատվածում: Խալերը ավելի հազվադեպ են հանդիպում երիտասարդ տղամարդկանց պատկերներում:

XIX դարում նկարչությունը և՛ Ղաջարական Իրանի արվեստում, և՛ Հակոբ Հովնաթանյանի գործերում ավելի նյութական իմաստ ստացավ: Նկարիչները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել հանդերձանքի ծալազարդմանն ու մանրամասների պատկերմանը: Նրանք ամենայն մանրամասնությամբ պատկերում էին կանանց զարդերը: Մանրակրկիտ մշակմամբ աչքի են ընկնում ոսկյա զարդերը և մարգարիտներով զարդարված գլխանոցները: Տղամարդկանց նկարելիս նկարիչները կենտրոնանում էին նրանց գլխարկների, թագերի, գոտիների վրա՝ ձգտելով ստանալ ակնեղենի փայլն ու հմայքը: Նկարիչները ուշադրություն էին դարձնում գործվածքի նյութի վրա՝ փորձելով ստանալ թավշի փայլն ու ծանրությունը, բամբակյա կտորի թեթևությունը, ժանյակի նրբությունը, ատլասի յուրահատուկ փայլը, քողի շղարշի թափանցիկությունը և այլն: Եվ այս բոլորը չէր խանգարում, որպեսզի առաջնահերթ դառնան բնորդի դեմքն ու ձեռքերը:

Միևնույն ժամանակ կարող ենք եզրակացնել, որ XIX դարի հայ և իրանցի նկարիչների յուրացրած եվրոպական նկարելաոճը զուգակցվում էր իրենց էությանը բնորոշ արևելյան փառավորության, արտաքին շքեղության և դեկորատիվ գունագեղության հետ:

Ղաջարական ժամանակներին վերագրվող դիմանկարների համեմատությամբ՝ Հովնաթանյանի կերպարները ավելի խորհրդավոր են, առանձնահատուկ՝ իրենց ազգային ինքնատիպությամբ, հայկական բնորոշ դիմագծերով, տեղական միջավայրի յուրահատկության կերպավորմամբ: Նկարներում առաջնայինը մուգ ֆոնի վրա պատկերված անձն է՝ իր արտաքին առանձնահատկություններով և ներքին զուսպ հոգեվիճակով: Հովնաթանյանը զգալի տեղ է հատկացնում զգեստների դեկորատիվ զարդերի, տարբեր հումքերով գործվածքների վերարտադրմանը, որոնք արված են մանրանկարչության նրբությամբ, իսկ ղաջարներին բնորոշ է պերճության ու հանդիսավորության արտացոլանքը (նկ. 8):

Եզրակացություն

Կարող ենք արձանագրել, որ խնդրո առարկա դիմանկարները իրանցի և հայազգի նկարիչների ռեալ իրականության ու աշխարհիկ միջավայրի տպա-

վորության, տվյալ ժամանակաշրջանի ճաշակի ու նախասիրությունների արդյունք են: Ակնհայտ է, որ անկախ ղաջար նկարիչների ու Հովնաթանյանի նկարած դիմանկարներում նկատված գեղանկարչական փոխառնչություններից, ղաջարական ստեղծագործությունների գեղարվեստական որակը ակնհայտորեն զիջում է Հակոբ Հովնաթանյանի գեղանկարչության արժանիքներին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղասյան Ա. 2007, Բացման խոսք, Հակոբ Հովնաթանյանի 200-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 78 էջ:

Ավետիսյան Ք. 2007, 17–18-րդ դարերի Աստվածամոր սրբապատկերների գեղարվեստական առանձնահատկությունները, Հակոբ Հովնաթանյանի 200-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 78 էջ:

Թաջարյան Ի. 2020, Արևելյան մանրանկարչություն. դպրոցների առանձնահատկությունները, Պատմություն և մշակույթի հարցեր, Երևան, 400 էջ:

Ղազարյան Մ. 1974, Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 284 էջ:

Պետրոսյան Ա. 1966, Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, թիվ 12, էջ 89–99:

Օրմանյան Մ. 1992, Ծիսական բառարան, Երևան, «Հայաստան», 196 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001–2002, «Նաիրի» հրատարակչություն, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2792 էջ:

Хачатрян-Паладян Н. 2017, Акоп Овнатанян и становление армянского искусства нового времени, Ереван, изд. «Антарес», 255 с.

ОТРАЖЕНИЕ КАДЖАРСКИХ ЖИВОПИСНЫХ ТРАДИЦИЙ В ИСКУССТВЕ АКОПА ОВНАТАНЯНА

ТАДЖАРЯН И.

Резюме

Ключевые слова: Каджар, Каджарский Иран, каджарское искусство, Акоп Овнатанян, каджарский портрет, Насер ад-Дин Шах, Овнатанян.

Первые образцы масляной живописи на холсте в иранском и армянском искусстве восходят к XVII веку. С активизацией отношений с евро-

пейскими странами изменился образ жизни двух народов. Картины на житейские темы, написанные маслом, в свое время считались нововведением и являлись отражением политической и культурной жизни.

Разнообразие произведений художников-новаторов и художественных представлений открыло новую веху в развитии иранской и армянской живописи XVIII–XIX веков. Сравнивая картины представителей Каджарской школы с работами Акопа Овнатаняна, родившегося в Тифлисе в 1806 году и ставшего основоположником нового периода национального изобразительного искусства, можно составить представление о новом искусстве двух народов. Рассматриваемые портреты свидетельствуют о вкусовых и эстетических предпочтениях, характерных для живописи данного периода, и позволяют заключить, что по своим художественным качествам произведения Каджара явно уступают живописи Акопа Овнатаняна.

THE REFLECTION OF QAJAR PAINTING TRADITIONS IN HAKOB HOVNATANYAN'S ART

TAJARIAN Y.

Summary

Key words: Qajar, Qajar Iran, Qajar art, Hakob Hovnatanyan, Qajar portrait, Naser al-Din Shah, Hovnatanyan.

The first examples of oil paintings on canvas both in Iranian and Armenian art date back to the 17^{th} century. As a result of the intensification of ties with European countries, the life of the two peoples changed. Secular oil paintings, which were considered an innovation in their time, were the reflection of the diversity of political and cultural life.

The variety of works of innovative artists and artistic perceptions paved a new path for the further development of both Iranian and Armenian painting of the 18^{th} and 19^{th} centuries. Comparing the oil paintings of Qajar Iran with the works of Hakob Hovnatanyan, born in 1806 in Tiflis and the founder of the national fine arts of the new period, we come to have an understanding of the new art of the

two peoples. The portraits in question are an evidence of the tastes and preferences of the Iranian and Armenian artists of the given period. They bring us to the conclusion that the works of Qajar art are clearly inferior to the merits of Hakob Hovnatanyan’s paintings as far as their artistic quality is concerned.

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
MEDIA THEORY

АРМАН САФАРЯН*
аспирант Российско-Армянского университета
arman.safaryan1@rau.am
DOI: 10.54503/1829-4073-2022.1.165-176

ВОЗНИКНОВЕНИЕ И СТАНОВЛЕНИЕ МУЛЬТИМЕДИЙНЫХ ПЛОЩАДОК И КОНВЕРГЕНТНОЙ ЖУРНАЛИСТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

Ключевые слова: мультимедийная журналистика, конвергентная журналистика, жанрово-форматные подходы, инфотейнмент, блогосфера, гражданская журналистика, мессенджеры.

Вступление

Возникновение мультимедийной и конвергентной журналистики связывается с технологическим прогрессом (в частности с распространением интернета) в прошлом столетии. Процессы диджитализации и интернетизации обеспечили достижение подлинной конвергенции и мультиплатформенности распространения информации. Естественно и стремление журналистов постсоветского пространства (в частности, РА и РФ) использо-

* *Հոդվածը ներկայացվել է 20.01.22, գրախոսվել է 22.02.22, ընդունվել է տպագրության 25.04.22:*

вать возможности интернета (сайтов) для достижения творческих задач (с конвергентым и мультимедийным инструментарием).

Общеизвестно, что античные риторы (ораторы) не ограничивались вербальными формами коммуникации, но использовали также и невербальные средства общения (язык тела, мимику, жесты), религиозная проповедь сопровождалась музыкой и визуальными (архитектурно-иллюстративными) феноменами, а письменная (позже печатная) коммуникация (текст) – иллюстрациями. Первые примеры печатной прессы также использовали подобную «конвергенцию» – слияние текстовых и иллюстративных практик, однако, в силу технологического развития, рассуждать о синтезе визуальных и аудиальных каналов распространения информации в журналистике можно лишь с появлением аудиальных и аудио-визуальных медиа (в частности радио и телевидения)[1]. До появления специфических жанров радиожурналистики (таких как радиорепортаж и радиоинтервью) «проходил процесс механического объединения прессы и радио» – дикторы «зачитывали» газетные новости, имел место обзор печатных публикаций[2]. С появлением телевещания работники телевидения также начали использовать «инструментарий» радио и печатных форм распространения информации в своей деятельности. Примером могут послужить западные «мыльные оперы», присущие радиоэфиру до популяризации на телевидении. С появлением телевидения создаются также и первые прообразы мультимедийной и конвергентной журналистики: британская корпорация BBC, которая с момента запуска телеканала BBC Television Service в 1936 году (до 1955 года остававшаяся единственным телеканалом в Великобритании[3]) одновременно использовала радио – и телеформаты вещания.

Формально отсчет истории конвергентной журналистики в СССР можно начать с учреждения Государственного комитета СССР по телевидению и радиовещанию. Безусловно, рассуждать о конвергентной и муль-

---

[1] Мультимедийная журналистика 2017, 44–46.

[2] **Зиновьев** 2012, 82.

[3] http://news.bbc.co.uk/onthisday/hi/dates/stories/september/22/newsid_3131000/3131477.stm

тимедийной журналистике в современном понимании можно лишь с момента распространения интернета (как было отмечено ранее), но «модель» Гостелерадио (просуществовавшая до реорганизации начала 1990-х годов), являвшегося «монопольным» радио – и телевещательным органом в стране (каковыми на территориях союзных республик были местные «комитеты»), фактически представляла собой своеобразный исторический прототип мультимедийной и конвергентной журналистики (действовавшей в условиях сверхцентрализации и идеологизированности).

Уже телевидение использовало несколько каналов распространения информации – текстовые (титры), аудиальные (звук) и иллюстративные (фото и видео), однако и такая конвергенция не являлась достаточной для выявления мультимедийного характера СМИ. О процессах мультимедизации заговорили с «развитием компьютерных аудиосистем», появлением технологии «записи с помощью CD-ROM», «массовым распространением персональных компьютеров» и интернет-технологий (так как важным аспектом развития мультимедийной журналистики является «интерактивность»)[4].

Об этапах развития мультимедийной журналистики в Армении и России

Отсчет истории мультимедийной журналистики в России некоторые исследователи предлагают начать с регистрации домена «.ru» (7 апреля 1994 года) и появления Рунета – российского Интернета[5] (следует также отметить, что армянский верховный домен «.am» был зарегистрирован 26 августа того же года). В 1995 году появляются электронная версия печатного издания «Учительская газета» и сайт РБК (РосБизнесКонсалтинг). С 1990-х годов в российском интернете действуют также сайты радиостанций («Серебряный дождь», «Радио 101»), электронных изданий, не имеющих печатных версий («Журнал.ru») и др. Одновременно исследователи, на наш взгляд, справедливо отмечают, что на вышеупомянутом этапе следует рассуждать лишь об электронной (сетевой, интернет, онлайн) журна-

[4] **Зиновьев** 2012, 82–83.
[5] Мультимедийная журналистика 2017, 47–48.

листике – «механическом перемещении журналистских процессов и соответствующей профессиональной деятельности в цифровую среду, «смене» рабочего инструментария с бумажных носителей на экранные, о первых попытках адаптации журналистских текстов к новым условиям существования», так как еще не существовало «подлинного мультимедийного языка»: в частности, интернет-изданиям была также присуща «номерная» логика (первые интернет-издания ограничивались электронными версиями печатных номеров)[6].

Второй этап развития российской «мультимедийной журналистики» связывается с возникновением «конкуренции между «старыми» и «новыми» медиа» (1999–2004 гг.)[7]. Создаются ежедневное интернет-издание «Газета.ru», издания и порталы «Lenta.ru», «Вести.ru» и др., сайты «Комсомольской правды», «Известий», «Коммерсантъ»-а, «РИА Новости», а также множество тематических (развлекательных, кулинарных и др.) изданий. Считается, что именно в это время возникли самостоятельные производители продукции и целевая аудитория интернет-СМИ (предпочитающая данный канал распространения информации традиционным).

В этот же период были созданы первые армянские интернет-издания: в 1999 году – информационное агентство «Медиамакс» (позже превратившееся в интернет медиа-холдинг, так как с 2006 г. агентством были запущены интернет-порталы «Banks.am» (2006), «Job.Banks.am» (2008), «Itel.am» (2009), «Bravo.am» (2009), «Adver.am» (2010) и др.), а в 2000 году – информационно-аналитическое агентство «PanArmenian.Net». С 2001 года медиа-рынок изобиловал множеством интернет-изданий («Hetq.am», «Panorama.am», «Aysor.am», «Tert.am», «News.am», «7or.am», «Asekose.am» и др), которые сегодня кроме текстовых материалов, представленных на сайте, имеют также YouTube каналы и позиционируют себя как онлайн телевидение, что в свою очередь свидетельствует о протекающих процессах конвергенции и мультимедизации в армянском интернет-пространстве.

---

[6] Мультимедийная журналистика 2017, 49; **Уланова** 2014, 15–17.

[7] Мультимедийная журналистика 2017, 49–50.

Третий этап становления российской мультимедийной журналистики, по мнению разных специалистов, охватывает период 2005–2008 гг. и характеризуется использованием более широкого спектра возможностей интернета (в частности интерактивных – рейтинги, комментарии и др.) «традиционными СМИ» (которые до этого лишь копировали материалы печатных изданий в интернете). Интернет-версии радиостанций прибегают к использованию аудиоподкастов, а также на соответствующих сайтах появляются чаты и другие интерактивные элементы. Распространяется феномен онлайн-радио (интернет-радио) и онлайн-телевидения (интернет-телевидения). Радиожурналист «вместе с магнитофоном стал брать с собой фотоаппарат, потом – в придачу к подготовке и ведению радиоэфиров – добавилась необходимость писать колонки на сайт .... Еще через некоторое время к расшифровке звука программ стали прикручивать видеоанонс, на сайте появились видеокомментарии, специальные репортажи, мультфильмы, документальные проекты и, наконец, стрим-вещание»[8]. Вышеупомянутое не только знаменует собой возникновение такого феномена как «видеорадио в сети», но и формирование качественно нового «универсального журналиста», работающего в реалиях мультимедийности.

Следует отметить, что сегодня большинство армянских традиционных СМИ также представлено в интернет-пространстве. В частности, канал «Общественного радио» доступен для радиослушателей не только в формате традиционного радиовещания, но и в интернет-пространстве: существует официальный сайт, где можно ознакомиться с онлайн трансляцией радиоэфира, а также новостной контент в текстовом формате (с наличием фотографий) и видеоматериалы, что свидетельствует о попытках создания материалов мультимедийного характера. Телекомпании «Шант» и «21 век» представляют на сайтах качественно новый, не связанный с телевизионными репортажами печатный (текстовый) материал. Интернет-версии армянских печатных периодических изданий в основном ограничиваются наличием официального сайта, страницы в социальных сетях и YouTube канала (аудиальный же формат распространения информации

---

[8] Мультимедийная журналистика 2017, 52.

отсутствует). Несмотря на это, использование сайта и YouTube канала позволяет данным изданиям (в частности «Иравунк», «Азг», «Аравот», «Айкакан жаманак», «168 жам» и «Жоховурд») осваивать возможности онлайн телевидения – создаются видеорепортажи и другой видео контент новостного характера.

Этот период мультимедизационных процессов характеризуется развитием блогосферы, гражданской журналистики, появлением мобильных версий, e-paper-версий (совпадающих с печатными версиями) и kindle-версий (отображающих лишь вербальный текст) печатных газет. На протяжении этого периода блоги не только стали своеобразным источником получения информации для традиционных форм СМИ, но и на разных информационных сайтах и порталах появились разделы, посвященные блогам (например, еженедельные обзоры блогосферы, проводимые сайтом «Lenta.ru»). Применительно к блогам стали употреблять термин «гражданская журналистика». Одновременно многие теоретики и журналисты-практики и сегодня не считают блогеров профессиональными журналистами из-за отсутствия «профессиональной ответственности» в противовес наличию таковой у «журналистов традиционных СМИ»[9]. Конечно же блогосфера является лишь частным проявлением феномена UGC (англ. – User Generated Content, традиционно переводимого как «пользовательский контент» или «контент, созданный пользователями»), получившего распространение в этот же период: «площадками» для реализации UGC являются также Википедия, YouTube, SoundCloud, социальные сети и другие ресурсы, в свою очередь также повлиявшие на работу журналиста.

В 2007–2008 гг. BBC начинает трансляцию всех каналов корпорации в интернете, активно работает с блогами, домашними видео, музыкой,

---

[9] В частности, подобной аргументации последовательно придерживается и российский журналист В. Познер. См. подробнее – Почему блогер – не журналист **https://rg.ru/2016/03/15/vladimir-pozner-u-blogera-net-nikakoj-otvetstvennosti-za-tekst.html**, Познер отказался ставить журналистов и блогеров в один ряд **https://lenta.ru/news/2016/03/17/pozner_blogers/**. Он раскрыл секрет: почему телеведущий не станет блогером и не откроет YouTube-канал **https://ru.armeniasputnik.am/20200923/Pozner-raskryl-sekret-pochemu-televeduschiy-ne-stanet-blogerom-i-ne-otkroet-YouTube-kanal-24564472.html**, Владимир Познер – о долге, ответственности, свободе и воле **https://pozneronline.ru/2021/01/31185/** (дата обращения: 07.11.2021).

предоставляет пользователям сайтов возможность «персонализированных медиа» (настраивание сайтов под собственные приоритеты), доступ к архивным материалам, тем самым формируя новую модель «мультимедийной журналистики».

Исследователи отмечают, что в результате третьего этапа формирования «мультимедийная журналистика» окончательно отказывается от модели «сайт – копия бумажной версии», обретает новые характеристики, такие как использование пользовательского контента и продвижение журналистского материала посредствам мобильных приложений и социальных сетей[10]. Констатируется также начало четвертого этапа развития данной сферы, связанное с жанрово-форматными, тематическими и функциональными трансформациями, а также с использованием мессенджеров как канала распространения «журналистской продукции». В качестве новых жанрово-форматных решений журналистского творчества в контексте мультимедийной журналистики воспринимаются блог, лонгрид, «аудиослайд-шоу», «интерактивная видеоколонка», «мультимедийное ток-шоу», «интерактивный видеомост», «мультискрипт», «информативные игры» («интерактивный инфотейтмент»), «инфографика», «лонгрид», «статичная иллюстрация», «фоторепортаж», «подкаст», «аудиоверсия текста», «потоковое видео или прямой эфир» и др[11].

К проблеме функциональных трансформаций журналистики в контексте процессов «мультимедизации»

На наш взгляд, следует отдельно отметить функциональные трансформации журналистики, обусловленные процессами мультимедизации и конвергенции СМИ, что, в свою очередь, способствует возникновению новых специализаций: речь идет об «оправданном» с экономической точ-

---

[10] Мультимедийная журналистика, 2017, 56.

[11] См. и ср. **Экгардт** 2010, 220–223; Журналистика и конвергенция 2010, 129; **Филатова** 2010, 281–287; **Лосева** 2010, 129–154; **Савенков** 2018, 16–26; **Мелешевич** 2018, 147–153; **Сафарян** 2021, 231–234; Мультимедийная журналистика 2017, 43; А. Бурдина, Что такое мультимедийная журналистика: понятие, типология, особенности https://its-journalist.ru/articles/chto-takoe-multimedijnaya-zhurnalistika-ponyatie-tipologiya-osobennosti.html#i-2 (дата обращения: 07.11.2021).

ки зрения «универсальном журналисте» – «с мультимедийным рюкзаком, владеющим и словом, и искусством фото- и видеосъемки, и умением работать со звуком, и знанием технологий монтажа, и навыками интерактивного общения с аудиторией»[12].

Չարենցը Խանջյանին գիտեր 1920 թվականից: Նրա ստորագրությամբ է ստացել կուսակցական տոմսը, իսկ Խանջյանն այնքան ոգևորված էր Չարենցով, որ նրա ռադիոպոեմները արտագրում էր իր նոթատետրում: 1930 թ. մայիսի 7-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի լիագումար նիստը Հայկազ Կոստանյանին ազատում է առաջին քարտուղարի պարտականություններից և նրա փոխարեն ընտրում է Աղասի Խանջյանին, երկրորդ քարտուղար՝ Ամատունուն: Կուսակցության VII համագումարը 1930 թ. մայիսի 25-ին հաստատում է լիագումար նիստի ընտրության արդյունքները:

Մյասնիկյանից հետո Չարենցը դժգոհ էր հանրապետության տնտեսական վիճակից, կոլեկտիվացումից, սովի մատնված լեռնային գյուղերի կացությունից, մշակութային շինարարությունից: Այդ հարցերով ապարդյուն դիմել է 1928–1930 թթ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Կոստանյանին: Խանջյանի հետ հույսեր էր կապում:

Բանաստեղծի և կուսակցության ղեկավարի հարաբերություններն ավելի ակնհայտ դարձան Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի հրատարակության ժամանակ: Գիրքը լույս է տեսնում, բայց դառնում է քաղաքական հարձակումների թիրախ:

---

[5] Խորհրդային Հայաստան, 1925, 03.27, թիվ 69, 27 մարտ:

[6] Տե՛ս **Ջաքարյան** 1989, 219:

[7] Պոեմի մի հատված 1925-ին տպագրվել է «Մարտակոչ»-ում (թիվ 172), ամբողջությամբ՝ ԽՀ-ում (թիվ 191, 192, 195, 196, 197), նույն թվին՝ նաև առանձին գրքով, 60 էջ, 1.000 օրինակ: Ունի ուղերձ՝ «Այս պոեմս նվիրում եմ հիշատակին Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մյասնիկյանի (Մարտունու), ընկերոջ, կոմունիստի, մարդու»:

1933 թ. նոյեմբերի 13-ին տեղի է ունենում Կենտկոմի բյուրոյի փակ նիստ: Հոկտեմբերի 20-ին բուժման նպատակով Գագրա մեկնած Խանջյանի փոխարեն կուսակցության ղեկավարությունը ժամանակավորապես անցել էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի 2-րդ քարտուղար Արամ Միրզաբեկյանի ձեռքը, ով Բերիայի դրածոն էր: Օգտվելով Խանջյանի և ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի բացակայությունից՝ Միրզաբեկյանը և համախոհները, Խանջյանին վարկաբեկելու և պաշտոնանկ անելու նպատակով, կենտրոնից եկած «պատասխանատու աշխատողի» հրահանգով գաղափարական աշխատանքի վերանայման պահանջ են դնում: Առիթը «Պրոլետարսկայա լիտերատուրա» ամսագրի խմբագրությանը Ստալինի հղած նամակի երկրորդ տարելիցն էր: Բյուրոյի փակ նիստը որոշում է. «Հանձնարարել ընկ. ընկ. Աշրաֆյանին և Արիսյանին հինգօրյա ժամկետում տալ Չարենցի «Գիրք ճանապարհի» գրքի գնահատականը և պարզել նրա հրատարակման հանգամանքները»: Դրանից բացի 1933 թ. նոյեմբերի 13-ին լուսժողկոմ Արիսյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմ է ուղարկում գրություն, ըստ որի՝ Չարենցի և Ա. Բակունցի կազմած «Հայ գրականության պատմության քրեստոմատիա»-ն արատավոր հրատարակություն է, քանի որ նրանում տեղ գտած հեղինակները՝ Պատկանյան, Շահազիզ, «վայրագ (զոոլոգիական) մարտնչող հայ ազգայնական բուրժուազիայի ներկայացուցիչներ» ու «շովինիստական ստեղծագործողներ» են, և պահանջում է անհապաղ շրջանառությունից հանել[8]:

1933 թ. նոյեմբերի 14-ին դարձյալ Խանջյանի բացակայության պայմաններում ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունում է քարտուղարության որոշում՝ «Հայպետհրատի արտադրանքի իդեոլոգիական անկայունության մասին»[9]: Ըստ այդմ՝ Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն որակվում է որպես «հակահեղափոխական տրոցկիստական զրպարտություն կուսակցության դեմ, տրոցկիզմի դեմ կուսակցության մղած պայքարի և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի դեմ, մի գիրք, որը թունդ նացիոնալիստական մեկնաբանում է տալիս Հայաստանի պատմությանը, ակնհայտորեն արտահայտելով հայկական մարտնչող նացիոնալիզմը»: Թիրախում էր նաև «Հայ գրականության քրեստոմատիան», որի մեջ «զետեղված են ծայրահեղ շովինիստական ստեղծագործություններ (Գամառ-Քաթիպա, Րաֆֆի, Շահազիզ և ուրիշներ)»: Այլևայլ արգելանքների հետ մեկտեղ ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է գործածությունից հանել քրեստոմատիան և արգելել Չարենցի «Գիրք ճանապարհի»-ի հրա-

[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 25, թ. 167–168:

[9] Տե՛ս Խորհրդային Հայաստան, 18.11.1935, թիվ 267:

տարակումը: Եվ քանի որ Չարենցը Հայպետհրատի պաշտոնյա էր՝ նման գրքեր հրատարակելու համար «նրան հեռացնել գեղարվեստական սեկտորի վարիչի պաշտոնից»[10]:

«Գիրք ճանապարհի»-ն արգելելու կապակցությամբ 1933 թ. նոյեմբերի 14-ին Չարենցը գրությամբ դիմում է ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղարությանը, պատճենը՝ Ա. Միկոյանին և հայտնում, որ իր «Գիրք ճանապարհի»-ն «...հիմնական մասերով նախապես ծանոթ է եղել և՛ Խանջյանին, և՛ Աշրաֆյանին, որից հետո միայն հանձնվել է տպագրության»: Շարունակում է, որ ինքը համոզված է մասնավորապես «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» երկի «իդեոլոգիական միանգամայն անխոցելի լինելու մեջ» և խնդրում իր վրայից վերացնելու «այն ծանր, ճնշող, ծայրաստիճանի անհանդուրժելի մթնոլորտը, որի մեջ կարող է ընկնել խորհրդային բազմամյա գրողը...»[11]: Նաև 1933 թ. նոյեմբերի 21-ին Չարենցը դիմում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի ԿՎՀ նախագահ Ա. Գալոյանին և բողոքում Կենտկոմի քարտուղարության՝ նոյեմբերի 14-ի իրեն աշխատանքից ազատելու որոշման դեմ. «Խնդրում եմ կատարել ամենախիստ քննություն Պետհրատում ունեցած իմ գործունեության և, եթե ես իրոք հանցապարտ եմ, ոչ միայն «հեռացնել» ինձ Պետհրատից, այլև հանձնել ինձ դատական պատասխանատվության, իսկ եթե ես անմեղ եմ իմ վրա բարդած մեղադրանքներում – վերականգնել ինձ իմ պաշտոնում, որը միակ ճանապարհն է ոչ միայն իմ «հիմնարկային», այլև գրական-քաղաքական ռեաբիլիտացիայի»[12]:

1933 թ. նոյեմբերի 22-ին իրադրությանը տեղյակ Խանջյանը վերադառնում է Գագրայից, Թիֆլիսում հանդիպում է Բերիային, Երևանում կանխում հեղաշրջման փորձը և դավադիրներին ազատում զբաղեցրած պաշտոններից: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի ընդլայնված նիստում որոշվում է վերանայել «Կենտկոմի բյուրոյի նոյեմբերի 14-ի որոշման առանձին մասեր»: Սա Խանջյանի քաղաքական հաղթանակն էր և Չարենցի վիճակը բարելավելու նախապայման: Խորացող տագնապները Չարենցին մղում են ճակատային ծանր խոստովանության. «Եվ ո՛ւշ հասկացար, որ երգերդ քեզ // Գցելու են մի ամեհի կրկես, // Ուր արյամբ են լոկ հոչակ նվաճում»[13]:

1933 թ. նոյեմբերին տասը օրով Հայաստան է ժամանում մոսկովյան գրողների մի խումբ՝ նախապատրաստելու ԽՍՀՄ գրողների հիմնադիր հա-

---

[10] **Գասպարյան** 1994, 583–584:

[11] **Չարենց** 1996, 224:

[12] **Չարենց** 1996, 226–227:

[13] **Չարենց** 1983, 66:

մագումարը: Պատվիրակության առանձին ներկայացուցիչների հետ Չարենցը համագործակցում է գրական-թարգմանական հարցերում: Բայց «Գիրք ճանապարհի»-ի արգելման պատճառով, մատնված լինելով հոգեբանական ծանր կացության, չի մասնակցում հանդիպումներին: Այս ընթացքում կազմակերպվում է ռուս գրագետների կողմից հայ գրողների ստեղծագործությունների ուսումնասիրության հարցը: Չարենցին բաժին է ընկնում կուսակցական քննադատ Վալերի Կիրպոտինը: Հյուրանոցում Չարենցը հանդիպում է նրան և «Գիրք ճանապարհի»-ի արգելված օրինակը ձեռքին մեկնաբանում «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիան՝ որպես Պյերո ներկայացնելով Տրոցկուն:

Արգելանքը քիչ էր, այս ընթացքում Չարենցի գրքի դեմ կազմակերպվում է նաև բանսարկություն. զրպարտիչ Ա. Ոսկերչյանի միջոցով լուր է տարածվում, թե «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիան գրել է ոչ թե Չարենցը, այլ մի ամբողջ «գաղտնի կազմակերպություն», որ դա գրողների մի խմբակի կողմից դավադրություն է խորհրդային իշխանության, կուսակցության և անձամբ առաջնորդ Ստալինի դեմ: Ոսկերչյանի հայտարարությունը նախապես հաստատել են Ս. Հարությունյանը (4.XII.1933) և Գ. Մասյանը (9.XII.1933)[14]: Քննարկվել է ՀԽԳՄ կազմկոմիտեի ֆրակցիայի նիստում և որոշվել «հարցը հետաձգել, ստուգել <…> և ապա քննության դնել ֆրակցիայի հաջորդ նիստին»[15]: 1933, նոյեմբերի 28-ին Չարենցը դիմում է ՀԽԳՄ կազմկոմիտեի նախագահ Դ. Տեր-Սիմոնյանին՝ պատժելու զրպարտչին[16]:

1933 թ. դեկտեմբերի 1-ին հայ գրողների ընդհանուր ժողովում զեկուցում է Կիրպոտինը, քննադատում Մ. Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին»[17] ծրագրային հոդվածը և դատապարտում Չարենցի, Բակունցի և համախոհների գրական դիրքորոշումը: Չարենցը ելույթ է ունենում և տալիս անհրաժեշտ բացատրություններ:

Բարոյական այլասերումի հասած գրական այս միջավայրում 1933 թ. դեկտեմբերի 1-ին Չարենցը զայրալից ու վրդովված ծավալուն նամակ է հասցեագրում Մ. Շահինյանին և խոսում այն ծանր կացության մասին, ինչի մեջ հայտնվել էր ինքը «Գիրք ճանապարհի»-ն կալանավորելու, կալանքից ազատելու իր միջնորդության և ծանր հոգեվիճակի մասին: Տեղեկացնում է, որ

---

[14] ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 1, թ. 2–3:
[15] ՀԱԱ, ֆ. 1, ց. 14, գ. 51: **Չարենց** 1996, 501:
[16] ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 1, թ. 1:
[17] Տե՛ս Գրական թերթ, 21.04.1933, թիվ 7:

համանման բովանդակության մի նամակ երկու օր առաջ ուղարկել է Ստալինին:

Նամակում գրում է «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիայի մասին, ասում, որ այն թարգմանվել է ռուսերեն, քննարկվել Անդրերկրկոմի կուլտբաժնում. «Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ ապրումներ ես պիտի ունենայի այդ օրերին. չէ՞ որ ես կարող էի սպանել և՛ ինձ, և՛ իմ ընտանիքը, խելագարվել, և ես զարմանում եմ, թե ինչու դա չարեցի»: Ավելացնում է, որ ինքը դեռևս վերականգնված չէ Պետհրատում, իսկ մթնոլորտն այնպիսին է, որ «Դեռևս կարող են ինձ սպանել: <…>: Այս փոքր նայիրյան աշխարհում ես շատ թշնամիներ ունեմ: Առանց ձեր ազնիվ պաշտպանության նրանք ինձ կուտեն: Դուք ավելի լավ եք պատկերացնում մեր երկրի ամբողջ հետամնացությունը: <…>: Եվ կրկին, վերջին անգամ, աղաչում եմ, օգնեք ինձ!»[18]: Ծրարին՝ հետադարձ կապի համար, Մ. Սարյանի հասցեն է, որովհետև իրեն վերահսկում էին:

«Գիրք ճանապարհի»-ի հետ կապված թնջուկը, ի վերջո, լուծվում է. այդ գործը Տիգրան Հախումյանի ռուսերեն թարգմանությամբ ուղարկվել էր Ստալինին: Պահպանվել է Ստալինի՝ ԽՍՀՄ Գլավլիտի միջոցով փոխանցված կարծիքը. «Ես ուշադրությամբ կարդացի Չարենցի այդ պոեմը: Եվ ահա թե ինչ կասեմ այդ մասին: Որպես գեղարվեստական գործ լավ է մտահղացված ու գրված: Սակայն որոշ նկատառումներով պետք չէ դա տպագրել: Ուստի, իմ անունից Չարենցին պետք է ասել, որ առայժմ հրաժարվի դրա հրատարակությունից»[19]: Սա Չարենցի հաղթանակն էր. ժողովածուից հանում է «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո»-ն, դրա փոխարեն ընդհանուր ծավալը պահպանելու համար ավելացնում նոր գործեր, և գիրքը լույս է տեսնում: Այս ընթացքում Խանջյանի ջանքերով նա հրատարակչությունում արդեն վերականգնվել էր իր պաշտոնում, իսկ գրքի լույս աշխարհ գալը փրկություն էր, որից հետո, համեմատաբար խաղաղված, 1934 թ. Չարենցը օգոստոսին Մոսկվայում մասնակցում է ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարին և ելույթ ունենում արվեստի հարցերի վերաբերյալ: Անձնական հանդիպումների ժամանակ Խանջյանը նրան և Բակունցին դրդել է գեղարվեստական երկեր գրել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի մասին: Մի բան, որ երկու գրողներն էլ արեցին[20]: Չարենցը

---

[18] **Չարենց** 1996, 270–273:

[19] **Գասպարյան** 1994, էջ 592:

[20] Տե՛ս Ե. Չարենցի «Դեպի լյառը Մասիս», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» պոեմները, Ա. Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպը:

նաև անգամ ուշ ժամերի ազատ ելումուտ է ունեցել Խանջյանի մոտ, նրան կարդացել իր նոր գրած գործերը:

1935 թ. սկզբին Չարենցով հետաքրքրվում է ՆԳԺԿ-ն: Հարցաքննություններում նրան ուղղված հիմնական մեղադրանքներն էին՝ «տեռորիստ և նացիոնալիստ»: Իբր, ահաբեկությամբ պետք է վերջ տար Լ. Արիսյանին, ով այնքան դառնություն էր նրան պատճառել «Գիրք ճանապարհի»-ի հարցով՝ անգամ Խանջյանի և Դ. Տեր-Սահակյանի դրական վճիռից հետո երկու ամիս ձգձգել էր գրքի հրատարակությունը: Եվ Չարենցը, իրոք, վերջ է տալիս Լևոն Անանյանին, բայց ոչ թե օրենքով արգելված ահաբեկությամբ, այլ՝ օրենքով թույլատրելի էպիգրամներով:

Այս ամենից հետո, այսպես, թե այնպես, Չարենցի հանդեպ վստահությունը թուլանում է, և խզվում են կապերը Խանջյանի հետ: Դա 1935-ին էր, երբ Չարենցին հեռացնում են պետհրատում զբաղեցրած պաշտոնից, որից անմիջապես հետո նա գրավոր հայտարարություն է ներկայացնում՝ Գրողների միության շարքերից դուրս գալու մասին: Նրա հայտարարությունը քննարկում են, դրան տալիս են քաղաքական որակավորում և իր իսկ ծննդյան օրը՝ 1935 թ. մարտի 13-ին, հեռացնում Գրողների միությունից: Բառացիորեն այս օրերին է գրել ինչպես Խանջյանին, այնպես և իրեն ուղղված այս տողերը.

Կոչված եմ այսօր ահա ես Չեկա...
Կարծես թե ուրիշ հերյուրանք չըկա,
Որով «օրենքից դուրս» համարեն ինձ...
Մատնում է մի «հին բարեկամ» Մակինց,
«Գրողները» ինձ «դուրս են շպրտում
Դրաստամատյան Գրական Տնից»,
Իսկ վերից Խանջյանն ի՛նքն է հոխորտում,
Թե ինձ «կհանի իմ հիմար քնից...»:
....
Էհ, վաղուց եմ ես «քնից» արթնացել,-
Այդ դո՛ւք եք, ավա՜ղ, քնած մնացել...[21]:

Պետությունն՝ ամբողջ իր ապարատով
Ելել է ահա... մի պոետի դեմ,–
Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ
Ու չհիանամ իմ «բիրտ» սֆաթով,–

[21] **Չարենց** 1996, 88:

Եվ… զարհուրելի իմ ուժով հպարտ,–

Չբացականչեմ՝ «– Հերո՛ս եմ ու մարդ!!!»[22]:

Այսքանից հետո, երբ 1935 թ. դեկտեմբերի 30-ին ՀԽՍՀ կազմավորման 15 – ամյակի կապակցությամբ Ստալինը Կրեմլում հետաքրքրվում է Չարենցով, նրա վիճակը մի կարճ շրջան դրական շրջադարձ է ունենում՝ վերականգնվում են Խանջյանի հետ խզված հարաբերությունները: Մինչ այդ, Անդրերկրկոմի միջնորդությամբ նա վերականգնվել էր նաև Գրողների միության շարքերում:

1936 թ. հունվարի 7-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Չարենցը նշանակվում է Պուշկինի մահվան 100-րդ տարելիցը նշող հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ[23]: Չարենցը կազմում է հոբելյանը նշելու արտակարգ հարուստ ծրագիր՝ ցանկանալով մեծ բանաստեղծին արժանին հատուցել: Նախատեսված էր, որ ինքը պետք է թարգմանի Պուշկինի «Պղնձե հեծյալը». «Ե. Չարենցը մասնավորապես աշխատում է «Պղնձե հեծյալի» թարգմանության վրա»[24]: Ծրագրի ընդգրկումը լայն էր՝ հրատարակել գրքեր և հոդվածների ժողովածուներ Պուշկինի մասին, Պուշկինի գիտական կենսագրությունը, Պուշկինը և Հայաստանը, Տինյանովի «Պուշկին» գիրքը, թարգմանել և առանձին գրքերով հրատարակել նրա գեղարվեստական արձակը, պոեմները, պոեզիան, թատերգությունները, քննադատական հոդվածները: Առանձին ներկայացված են զանգվածային աշխատանքները՝ ներկայացումներ թատրոններում, կինոցուցադրություններ, ռադիոհաղորդումներ, երեկույթներ ու ցերեկույթներ, գիտական միջոցառումներ[25]:

Խանջյանը նաև մտահոգվում է Չարենցի առողջական խնդիրներով. 1936 թ. հունիսի 22-ին նա «Շտապ» հեռագրում է Մոսկվա, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլանային, ֆինանսական և առևտրական բաժին. «Չարենցի անձնագիրն ստացվել է: Խնդրում եմ հեռագրել, թե ումից և ինչպես նա պիտի ստանա տարադրամը»[26]: 1936 թ. հունիսի 29-ին Չարենցի հարցը լսում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն. «Հանձնարարել Լուսժողկոմատին (ընկ. Եղիազարյան)՝ 1) Բուժման նպատակով ընկ. Չարենցի արտասահմանում գտնվելու ընթացքում ամեն ամիս նրա ընտանիքին հատկացնել ութ հարյուր ռուբլի: 2) Անհրաժեշտ

[22] **Չարենց** 1996, 89:

[23] Գրական թերթ, 20.01.1936, թիվ 2:

[24] **Չարենց** 1967, VI, 364:

[25] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 30, թ. 27–63; ֆ. 1, ց. 24, գ. 19ա, թ. 73–74:

[26] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 70, թ. 33:

միջոցներ հատկացնել Չարենցին, ինչպես նաև նրան մինչև Մոսկվա ուղեկցող ընկերոջը: Կենտկոմի քարտուղար՝ Ա. Խանջյան[27]:

Չարենցը ոգևորված էր. «Նորից կտեսնեմ Եվրոպան՝ Վենետիկը, գոնդոլաները... Ախր ես Եվրոպան տեսա, ինչպես ասում են, «քառասմբակ վազքով»[28]:

Բայց երկրով մեկ ուժեղանում էր քաղաքական լարվածությունը: 1936 թ. հուլիսի 7-ին Ալազանը հանդիպում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունիսյան լիագումար նիստից նոր վերադարձած Խանջյանին. «Հուլիսի սկզբներին Խանջյանը Մոսկվայից վերադարձավ Երևան: Հուլիսի յոթին ես եղա նրա մոտ: Երբ հարցրի հունիսյան պլենումի արդյունքների մասին, Խանջյանը տխուր ասաց. «Ես այդ պլենումից արյան հոտ առա... Շատ վատ բաներ են սպասվում մեր երկրում»: Խանջյանը շարունակել է. «...դեռ մինչև Մոսկվա գնալս այդ սրիկաները (Բերիան և համախոհները՝ Դ.Գ.) պնդում էին, որ ես համաձայնեմ բանտարկեն ոչ միայն Ներսիկին, այլև Չարենցին, Բակունցին և քեզ, բայց ես չթույլատրեցի: Պատկերացնո՞ւմ ես, Չարենցի, Բակունցի և քո բանտարկությամբ մենք կխայտառակվեինք ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում»[29]:

Նույն օրը Թիֆլիս՝ Անդրերկրկոմի Կենտկոմի խորհրդակցության մեկնելուց առաջ, Երևանի երկաթգծի կայարանում Ռեգինա Ղազարյանի միջոցով Չարենցը Խանջյանին է փոխանցում մի գրություն, որի բովանդակությունը անհայտ է, սոսկ կռահումներ կարելի է անել: Խանջյանը Թիֆլիս է մեկնում մռայլ տրամադրությամբ:

1936 թ. հուլիսի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսկոլեգիայում տեղի է ունենում գրողների կուսակցական հավաքը (կուսկոլեգիայի անդամ Մինաս Սարգսյանի առաջարկով): Մասնակցում են՝ Ն. Զարյանը, Հ. Սիրասը, Վ. Նորենցը, Դ. Տեր-Սիմոնյանը, Հ. Գյուլիքևխյանը, Վ. Ալազանը, Հ. Մկրտչյանը, Ն. Դաբաղյանը, Գ. Հովնանը:

Ելույթներից. **Մ. Սարգսյան**. Հայաստանում հայտնաբերվել է տրոցկիստական-նացիոնալիստական խմբակ, որը ղեկավարել է «քայքայված կոմունիստ» Ն. Ստեփանյանը. «Արդեն մասամբ հայտնի է Ակսել Բակունցի և Գուրգեն Վանանդեցու կապը Ստեփանյանի հետ»: **Ն. Զարյան**. «Հատկապես Ակսելի նացիոնալիստական սխալները հայտնի են մեր մի շարք գրողներին,

[27] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 39, թ. 81:

[28] Չարենցի հետ, 1997, 297, 319:

[29] **Ալազան** 1990, 3–4:

որոնք հաճախակի առիթ են ունեցել պայքարելու Ակսելի դեմ: Ընկերնե՛ր, Ակսելը հայհոյել է մեր կառավարությանը, մեր կուսակցությանը, անգամ Ստալինին <...>: Ակսելը մի անգամ չէ, որ հայտնել է, որ մեր ժողովուրդն ապագա չունի, մեր կուլտուրան չի զարգանա այս պայմաններում»: **Միրաս.** «Նա (Ակսելը՝ Դ. Գ.) զարմանալի բարձրից է նայում մեր գրողներին և նրանց գրական աշխատանքներին: Նա, բացի իրենից և Չարենցից, չէր ուզում մյուսներին տեսնել: <...>: Ն. Դաբաղյանը երբ մի անգամ վեր կացավ ու մերկացրեց Ա. Բակունցի սխալները, Բակունցը նրա երեսին զարկեց թանաքամանը, այդ լկտի արարքի համար նրան ոչ ոք չպատժեց»: **Հովնան.** Ակսելը կտրված էր մեր կուսակցական աշխատանքներից, անդամավճարը կանոնավոր չէր մուծում, պետք է դադարեցնել նրա գրքի տպագրությունը: **Վ. Նորենց**. «Ամենապրովինցիալ և սահմանափակ գրողը մեր գրականության մեջ Ակսել Բակունցն է»: **Դ. Տեր-Սիմոնյան**. «Ակսելը վարկաբեկում էր մեր բոլոր կոմունիստ ընկերներին, նա միայն Չարենցին էր ճանաչում որպես գրողի»: **Հ. Գյուլիքևխյան**. «Իմ կարծիքով ճիշտ չէ, որ Ակսել Բակունցը խոշոր գրող է: Մեր աշխատավոր լայն մասսաները նրան չեն կարդացել և չեն կարդում, ինչպես չեն կարդում «Գիրք ճանապարհին» Չարենցի, դա (դրանք՝ Դ. Գ.) մեր աշխատավորության համար խորթ ստեղծագործություններ են»: Ելույթ են ունենում նաև **Վ. Ալազանը, Հ. Մկրտչյանը: Մ. Սարգսյանը** ամփոփիչ խոսքում, առանց անունը տալու, Բակունցի հարցում իբր լիբերալ վերաբերմունքի համար մեղադրում է Խանջյանին՝ «դե՛, գրող է, ոչինչ»: Չարենցի նկատմամբ նույն «չդիպչել», «չվիրավորել» վերաբերմունքն է:

Այս ակնարկները բացահայտորեն ուղղված են Խանջյանի դեմ, իսկ նրանց շատ լավ հայտնի էր, որ նա Թիֆլիսում է. վերջինիս սպանության լուրը դեռևս չէր տարածվել, արյունոտ դեպքը դեռ նոր էր կատարվելու: Որտեղի՞ց Մինաս Սարգսյանին այնքան հանդգնություն, որ բացահայտորեն քննադատեր հանրապետության կուսակցական ղեկավարին, իսկ գուցե նա ինչ-որ բան նախապես գիտե՞ր՝ նույն օրը Խանջյանի հետ կատարվելիք առաջիկա հաշվեհարդարի մասին[30]:

Ամեն ինչ կանխորոշված էր. 1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում Բերիան սպանում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Դեպքը տեղի է ունեցել երեկոյան՝ ժամը 17-ից հետո, ժամը 20-ին արդեն «մի քանի ժամ» «քնած» էր:

---

[30] ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 4, թ. 34–44:

Թերթերը տպագրում են մահախոսականը. «ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը հայտնում է Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Խանջյանի մահը, որ տեղի ունեցավ 1936 թ. հուլիսի 9-ին ինքնասպանության ակտի հետեվանքով»: Ինքնասպանության ակտը դիտելով որպես փոքրոգության արտահայտություն՝ [հայտնվում է], որ ընկ. Խանջյանը վերջին ժամանակներս իր աշխատանքի մեջ մի շարք քաղաքական սխալներ էր թույլ տվել, որոնք արտահայտվել էին նացիոնալիստական ու հակահեղափոխական-տրոցկիստական տարրերի մերկացման գործում բավարար զգաստություն չցուցաբերելու մեջ»:

Բերիայի գործակալները Խանջյանին վարկաբեկող լուրեր են տարածում:

Խանջյանի ողբերգական մահը ցնցում է Հայաստանը: Սկզբից ևեթ ոչ ոք՝ առաջին հերթին Չարենցը, չի հավատում ինքնասպանության վարկածին, այլ միայն սպանություն, ինչը հետագայում հաստատվեց: Ըստ հուշագիր Ա. Աբրահամյանի՝ գույժը ձայնասփյուռով Չարենցը լսել է Ծաղկաձորի գրողների տանը, գիշերվա ժամը 3.30-ին և հաղորդել ծանոթներից մեկին. «Դու պատկերացնո՞ւմ ես, չկա՛ Աղասին, չկա՛ Աղասի Խանջյանը: Թիֆլիսում սպանել են: Հենց նոր Ամերիկայից հաղորդեցին, թե իբր ինքնասպան է եղել: Սո՛ւտ է, չհավատա՛ս: Նա ինքնասպանություն չէր գործի, էն էլ օտար հողում: Նրան սպանել են»[31]: Այս օրերին անում է այսպիսի գրառում. «Խանջյանը մեր վերջին հերոսն էր, որին սպանեց Բերիան»[32]:

Հոգեհանգստին Չարենցը գնում է դաշնակահար և նկարիչ Աղավնի Մեսրոպյանի ու նրա 13-ամյա որդու՝ Ծովակ Համբարձումյանի հետ: Անցնում են սգակիր ժողովրդի միջով, Չարենցի հանդեպ կար «հիրավի համաժողովրդական պատկառանք»: Խանջյանի տունը, որ ժողովուրդը համարում էր «կլոր դաչա», Չարենցի սոնետների շարքում վերածվել է «Նաիրյան Բելվեդեր»-ի: «Խանջյանի դագաղը դրված էր իր առանձնատան երկրորդ հարկի ընդարձակ ճաշասենյակում՝ կարմիր կերպասով ծածկված սեղանի վրա»: Սիմֆոնիկ նվագախումբը Սարաջևի գլխավորությամբ նվագել է Բեթհովեն ու Գրիգ: Ռուս սպասուհի Քսենյան օծանելիք է շաղ տվել գլխի վերքի վրա: Չարենցը օծանելիքի սրվակն ուժով խլել, պատուհանից դուրս է շպրտել և աղախնի ընդդիմությանն առարկել. «Մի պղծեք այս սուրբ մարմինը»:

Թոքաբույժ Գրիգոր Սաղյանին Չարենցն ասել է. «Աղասուն բուժում էին տուբերկուլյոզից, իսկ նրան սպանեց ատրճանակի գնդակը»: Բժիշկներ Սաղ-

[31] Գրական թերթ, 1.04.1993:

[32] **Չարենց** 1983, 542:

յանն ու Միրզա-Ավագյանը հրաժարվել են ստորագրել «ինքնասպանության» եզրակացությունը: «Խանջյանի անձնական բժիշկ Սաղյանը և հայտնի վիրաբույժ Միրզա-Ավագյանը, տեսնելով Խանջյանի զույգ քունքերի վերքերը, կասկածանքով ասել են, որ այդ վերքերը ինքնասպանի վերքեր չեն, այլ մեկն ու մեկի ձեռքով նա սպանված է: Այս կասկածի համար երկու բժիշկները բանտ նետվեցին: Սաղյանին գնդակահարեցին, իսկ Միրզա-Ավագյանը բանտում մահացավ»[33]:

«Ինքնասպանության» կեղծիքին նպաստել է Խանջյանի թիկնապահ Հովհաննես (Վանյա) Սանոյանը. պատմել է՝ Խանջյանի հեռախոսը անընդհատ զնգում էր, չէր վերցնում, ինքը վերցրել է, Բերիան էր, կարգադրել է արթնանալուն պես իրեն զանգահարի, մոտեցել է մահճակալին՝ արթնացնելու, տեսել է աչքերը բաց, մեռած, բարձին արյուն, կանչել է վարորդին, փորձել են բարձրացնել, գետնին է ընկել «Բրաունինգ» տեսակի կանացի ատրճանակը. կրակելիս «համարյա ձայնը չէր լսվում»:

Չարենցը նրան ասել է. «Ա՛յ տղա, աչքերիս մեջ նայիր, ի՞նչ ինքնասպանություն, ի՞նչ եք խոսքը մեկ արել, ո՞ւմ եք խաբում: <...>: Ես Աղասուն լավ եմ ճանաչում, նա ուժեղ կամքի տեր մարդ էր, այսպիսի բան երբեք չէր անի»[34]: Սանոյանը հետագայում լռել է:

Այս սպանությունն իր աչքով անմիջապես տեսել է Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների աշխատանքների վերահսկողության կոմիտեի հանձնաժողովի նախագահ Իվան Կորոտկովը, տարիներ շարունակ լռել և այդ մասին արտահայտվել է միայն քսան տարի անց. «Աշխատանքային օրը մոտենում էր ավարտին: Հանկարծ Բերիայի աշխատասենյակում հնչում է կրակոց: Կորոտկովը անմիջապես սլանում է կրակոցի կողմը, բացում է դուռը: Լավրենտի Բերիան սեղանին է նետում ատրճանակը, իսկ գորգի վրա արյան լճի մեջ պառկած է գլխից վիրավոր Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը: Կորոտկովը հետ է գալիս իր սենյակ, կատարվածի մասին պատմում Ա. Իվանովային և ավելացնում. «Երբեք ոչ ոքի ոչ մի տեղ չպատմել այդ մասին: Եթե ուզում ես ապրել»: Մոսկվա վերադառնալիս գնացքում Կորոտկովը կրկնում է. «Տե՛ս, Աննա՛, ոչ մի խոսք, այլապես երկուսս էլ կորած ենք»[35]:

---

[33] **Ալազան** 1990, 4:

[34] Չարենցի հետ: Հուշեր, 1997, 290–291:

[35] **Антон-Овсеенко** 1999, 270.

Փաստն արձանագրվել է ԽՄԿԿ XXII համագումարում (1961, հոկտեմբեր). Մալենկովի գործունեությանը համագումարի ելույթում անդրադառնում է ԽՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր Պետանվտանգության կոմիտեի նախագահ Ա.Ն. Շելեպինը. «Մալենկովի խղճին է մնում նաև Հայաստանի կուսակցական և խորհրդային ապարատի բազմաթիվ աշխատողների հիշատակը, որոնք ձերբակալվեցին նրա կարգադրությամբ՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Խանջյանի սպանության կապակցությամբ, որին, ինչպես հետագայում պարզվեց, անձամբ սպանել էր Բերիան իր առանձնասենյակում»[36]:

Նույն տեսակետին են նաև Անատոլի Ռիբակովն իր «Արբատի զավակները» վեպում (հայերեն թարգմանությունը՝ 1988) և Ռոյ Մեդվեդևը: Վերջինս գրում է. «Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին Թիֆլիսում սպանել է անձամբ Բերիան: Բերիայի աշխատասենյակի հարևանությամբ գործատեղում գտնվող կուսակցական վերահսկողության կոմիտեի երբեմնի աշխատակցուհի Ա. Իվանովայի վկայությամբ, ով լսել է կրակոցի ձայնը, Խանջյանի դիակը տեղափոխել են այն հյուրանոցը, որտեղ սովորաբար իջևանում էին Հայաստանից ժամանած կուսակցական աշխատողները: Բերիայի մեղսակիցները Խանջյանի դիակը դրել են մահճակալին և օդ կրակել»[37]:

Խանջյանի թաղումը տեղի է ունեցել հուլիսի 12-ին: Մուղդուսու խուզարկու հայացքի ներքո ոչ ոք չի հանդգնել պատվո պահակ կանգնել: Թաղման թափորը նկատի ունենալով՝ Ալազանը գրում է. «Սեղմված-խճողված շարքերում քայլում էի, հանկարծ կողքիս տեսա Ստեփան Զորյանին: <…>: Մեզանից քիչ առաջ նկատեցի Եղիշե Չարենցին»[38]:

Ժողովուրդն ալեկոծված էր, մինչդեռ Բերիայի դրածոները տարբեր տեղերում հավաքներ էին կազմակերպում և վանկարկում՝ «Կորչի իմպերիալիզմի լակեյ դավաճան Խանջյանը», «Շնորհակալություն ընկեր Լավրենտի Բերիային»: Թաղման գիշերը նրանց, ովքեր հրապարակավ հայտարարում էին՝ ոչ թե ինքնասպանություն է, այլ սպանություն, ձերբակալել են:

Խանջյանի հանդեպ Չարենցի վերաբերմունքը ազատ էր, հարգալից, վստահող և գնահատող: Խանջյանի սպանությունից հետո Չարենցն իրեն

---

[36] XXII съезд Коммунистической партии Советского союза. Стенографический отчет, 1962, т. 2, 404.

[37] **Медведев** 1990, 220.

[38] **Ալազան** 1990, 7–8:

զգում է կատարելապես անպաշտպան: Ինքն իր առջև կանգնում է որպես հակառակորդների կողմից պաշտոնապես հռչակված հանցապարտ. «9. VII. 1936» վերնագրված բանաստեղծության մեջ պարզ ասում է.

… Կարծես թե միայն իննից հուլիսի,
Այդ քստմնելի օրվանից է, որ
Իմ գրած ամեն մի ոտանավոր
Իր նյութի, իր ողջ իմաստի մասին,
Իբրև դրվատող կամ նշավակող,
Կարդալուց առաջ անբառ ավետող
Մի չոր թվական սկսեց կրել…
Եվ վերնագրերն այդ անբառ, անանուն
Դարձան մահվան պես ահեղ ու անհունն[39]:

Նույն այդ օրը Չարենցն արել է Սահակ Տեր-Գաբրիելյանին վերաբերող գրառումներ՝ աշխատանքից նրան ազատելու կապակցությամբ:

1936, հուլիսի 14-ին տեղի է ունենում ՀԽԳՄ կուսկազմակերպության ժողովը. Խանջյանի սպանության մասին զեկուցում է Ն. Դաբաղյանը: Ներկա էին՝ Դ. Տեր-Սիմոնյան, Ն. Զարյան, Վ. Ալազան, Գ. Հովնան, Վ. Նորենց, Հ. Քոչար, Գ. Ղազարյան, Ա. Սարգսյան: Ելույթ ունեցողները դաժան քննադատության են ենթարկում Խանջյանին, որի «դավաճանական ինքնասպանությունը» հարված էր «Անդրերկրկոմին և ընկեր Բերիային»: Քննադատվում են նրա հովանավորյալ գրողները: **Ն. Զարյան**. «Ընկերնե՛ր, Խանջյանի դավաճանական ինքնասպանությունը նոր լույս է սփռում այն քաղաքականության վրա, որ նա տանում էր կուլտուրայի, մասնավորապես գրականության ասպարեզում»: Ըստ նրա՝ Խանջյանի «երկդիմի նացիոնալիստական քաղաքականությունը» Բակունցի հետ մեկտեղ պաշտպանել են նաև Նորենցը, Ալազանը, իսկ Տեր-Սիմոնյանն ինձ ասում էր. «Նայի՛ր, ես էլ գիտեմ, որ Բակունցն ու Չարենցը նացիոնալիստներ են, բայց հասկացիր, որ Խանջյանը նրանց պաշտպանում է: Զգուշացի՛ր, նրանք քեզ կհալածեն»: **Վ. Նորենց**. «Հայտնի է, որ երբ Բակունց-Չարենց-Մահարի-Արմեն խմբակը հրապարակ եկավ բացահայտ նացիոնալիստական տենդենցներով, մենք բոլորս միասնական ուժերով պայքարի ելանք նրա դեմ, և սկզբնական շրջանում պայքարը շատ հաջող էր ընթանում: <…>: Ա. Խանջյանի երկդիմի գրական քաղաքականությունից գլուխ չհանելով՝ մենք այն համոզմունքն էինք կազմել, որ Ա. Բակունցն

[39] **Չարենց** 1983, 131:

ու Ե. Չարենցը մեր գրականության համար մեծություններ են: <...>: Ինչպես հայտնի է, այդ պայքարի մեջ Չարենցի «Գիրք ճանապարհին» կենտրոնական հարց էր մեզ համար: Մեզ թվում էր, թե այդ գիրքը ինչ-որ մի չտեսնված նվաճում է լինելու խորհրդային գրականության համար: Մենք ամեն ջանք գործ էինք դնում, որ այդ գիրքը լույս տեսնի նախքան գրողների համագումարը: Չարենցի գրքի հարցն այդ շրջանում լուծվելու վրա էր: Անդրերկրկոմի կազմած հատուկ հանձնաժողովը մի շարք նյութեր դուրս էր հանել, և գիրքը պիտի լույս տեսներ: Մենք դիմեցինք Ն. Ստեփանյանին, որ իր «լուսժողական հեղինակությամբ» Կենտկոմում պահանջի գիրքն շտապ լույս ընծայելու: Նա ասաց, որ գիրքն ուշանում է Խանջյանի կողմից անկախ, որ Արիսյանը տանում է մեծապետական շովինիզմի քաղաքականություն, և նա է հիմնական արգելակողը: Այդ համոզումն ուներ և Ե. Չարենցը, և դրանով է բացատրվում նրա այն ժամանակվա խայտառակ տեռորիստական սպառնալիքն ընկ. Արիսյանի հասցեին»: **Հ. Քոչար**. «Ալազանն այնտեղ հասավ, որ ամենակրքոտ կերպով պաշտպանեց Բակունց-Չարենց-Արմենի նացիոնալիստական խմբակը... Ալազանի մասին կուսակցական ակտիվի նիստն ասել է, որ նա քծնող է: Դա ճիշտ որակում է: Խանջյանի դավաճանական սպանությունից առաջ բոլորիս հայտնի էր Ալազանի այդ քծնանքը: Բոլոր առիթներով գովելով Խանջյանի գանգուր մազերը՝ Ալազանն իր բոլոր հոդվածներն սկսում, շարունակում ու վերջացնում էր Խանջյանով»: **Գ. Հովնան**. «Աններելի է մեր գրական քննադատության համար, որ մինչև հիմա չի մերկացրել Ակսելի հանցագործությունների նացիոնալիստական բնույթը»: Այնուհետև. «Հ. Մկրտչյանը մի ընդարձակ հոդված էր գրել նաև Չարենցի նացիոնալիստական սխալների մասին՝ հատկապես կանգ առնելով «Գիրք ճանապարհի» աշխատության վրա»: Ցավում է, որ այն չտպագրվեց:

Ելույթ ունենալով, **Վ. Ալազանն** իր քաղաքական վրիպումներից մեկն էլ համարում է. «Հաշտվողական, անզգոն, երբեմն հովանավորող և պաշտպանող վերաբերմունքը դեպի Ա. Բակունցի և Ե. Չարենցի նացիոնալիստական սխալները: <...>:

Խանջյանը Չարենցի նացիոնալիստական մի հոդվածը ուղարկեց «Գրական թերթ»-ին՝ տպագրելու (խմբագրում էր Ն. Դաբաղյանը). ես, բոլոր ընկերների հետ միասին, միաձայն որոշեցինք չկատարել Կենտկոմի քարտուղարի առաջարկը և հոդվածը վերադարձրինք Խանջյանին: <...>: Ա. Խանջյանը իր բացարձակ պաշտպանության տակ էր առել Բակունցի, Չարենցի, Թոթովենցի, Մահարու, ինչպես նաև մյուս գրողների նացիոնալիստական սխալները

<…>: Ինչպես ընկերները հիշում են, 1933 թվի վերջերին Չարենցը ռեստորանում, գիշեր ժամանակ, հարբած վիճակում ամբողջ հասարակության առաջ ինձ հայտարարեց «Չեկայի ագենտ, դավաճան, գրողներին չեկային մատնող, Բուլգարին և այլն»: Այս դեպքից հետո ես խիստ տոնով նամակ գրեցի Խանջյանին՝ խնդրելով կա՛մ պատժել Չարենցին, կա՛մ էլ ազատել ինձ գրողների միության աշխատանքներից: Խանջյանը ո՛չ այն արեց և ո՛չ էլ մյուսը: Բացի այդ, այս դեպքից հետո մեր գրողների միության կոմֆրակցիան և վարչությունը որոշում ընդունեցին Չարենցին արտաքսել միությունից: Այն մոմենտին, երբ այդ որոշումը տպագրվում էր «Գրական թերթ»-ում (թերթը խմբագրում էի ես), Խանջյանը զանգահարեց ինձ և կարգադրեց այդ որոշումը հանել թերթից: Ինչպես հայտնի է, հենց այդ նույն շրջանում, կարծես որպես արձագանք չեկայի դեմ ուղղված Չարենցի խոսքերի, Բակունցը գիշեր ժամանակ, հարբած վիճակում հայհոյել է ընկ. Ստալինին, չեկային և իրեն՝ Խանջյանին (այդ մասին լսել էին Ա. Վշտունին և Ս. Խաչատրյանը). Բակունցը մնաց անպատիժ՝ կոնտրոլնի կոմիսիայից ստանալով միայն նկատողություն: Խանջյանը Բակունցի նկատմամբ բռնել էր բացարձակ հովանավորող դիրք: <…>: Ալազանը նշում է նաև, որ 1934 թվին գրողների համամիութենական համագումարից վերադառնալիս գնացքում, մի քանի գրողների ներկայությամբ Բակունցը հայհոյել է նաև Խանջյանին: Իրեն տեղեկացնելուց հետո հանգիստ ասել է. «Ոչինչ, գրող է, հարբած է եղել, կարևորություն չպիտի տալ»: Նա վերին աստիճանի լիբերալ վերաբերմունք ուներ դեպի գրողն առհասարակ <…>: Մեզանում՝ գրականության նացիոնալիստական շրջաններում, այն միտքն էր տիրապետում, որ Հայաստանում միայն երկու գրող կա՝ Չարենց և Բակունց, որոնք երկուսն էլ, և հատկապես Բակունցը, նացիոնալիզմի կրողներն էին մեր գրականության մեջ. այս կարծիքն ամենից առաջ բխում էր Խանջյանի քաղաքականությունից»: «Բակունցը կատարում էր քայքայիչ աշխատանք անկուսակցական գրողների մեջ՝ իր ազդեցության տակ առնելով ոչ միայն Չարենցին, այլև Թոթովենցին, Դեմիրճյանին, Զ. Եսայանին…»: «Գրականության ասպարեզում նա [Խանջյանը] տուրք էր տալիս Բակունցի և Չարենցի տրամադրություններին»: «1934 թվին մեր գրականության մեջ բորբոքվեց խմբակային ուժեղ պայքար: Այդ պայքարն ավելի սրվեց Ե. Չարենցի «Գիրք ճանապարհին» արգելելուց հետո: Ես պաշտպանում էի Չարենցի գրքի լույս ընծայումը…»: Ներսիկ Ստեփանյանը «մեծ ակտիվությամբ հարձակվում էր ընկ. Արիսյանի և ընկ. Ակոպովի վրա՝ նրանց համարելով հայ կուլտուրայի թշնամիներ, նա մեծ ակտիվությամբ պաշտպանում էր Չարենցի գրքի անփոփոխ

լույս ընծայումը: Երբ Չարենցի գիրքը վերանայելու համար Անդրերկրկոմի կողմից նշանակվեց հանձնաժողով՝ ընկ. Բերիայի և Արիսյանի մասնակցությամբ, Ստեփանյանը, սաստիկ գազազած, գոռում էր, թե՝ «վրացի՞ն պիտի գա հայ գրողի գիրքը քննի և թույլատրի կամ չթույլատրի»: Այդ գազազած տրամադրությունը Ստեփանյանի միջոցով փոխանցվում էր նաև Չարենցին»: Ալազանի ելույթից՝ որպես մեղադրանք, հայտնի են դառնում նաև հետաքրքրական մանրամասներ. Աբովյանի մասին վեպ գրելու գաղափարը Խանջյանն է հուշել Բակունցին, Չարենցին հորդորել է վեպ գրել Նալբանդյանի մասին: Շատ է հավանել Մահարու և Թոթովենցի ինքնակենսագրական վեպերը, հրատարակիչներին ցուցում է տվել տպագրել հայ դասականներին: Ալազանը նորից է բողոքել Խանջյանին, թե՝ Բակունցը խուսափում է ժամանակակից նյութից: Խանջյանը վրդովվել է. «Եղբա՛յր, հանգիստ թողեք այդ մարդուն, նրան ժամանակակից նյութ չի հաջողվում, թողեք գրի իր «Աբովյան» վեպը, Խանջյանը նամակ է գրել Զոպանյանին և գովաբանել «Գիրք ճանապարհի»-ն, Զոպանյանին պատվիրել է կազմել Քուչակի երկերի ժողովածուն, որ պետք է տպագրեր Պետհրատը, հավանել է «Արևմտահայ բանաստեղծներ» (1930) գիրքը, Չարենցի խմբագրությամբ լույս տեսած Մեծարենցի հատորը (1934): Խանջյանի հանդեպ նախկին հիացմունքը, ըստ Ալազանի, հիմա իր մեջ «փոխվել է ատելության, որովհետև նա քայքայեց մեր կուլտուրայի ճակատը, մեր կուսակցության համար ստեղծեց մեծ դժվարություններ»: «Պանծալի և աննկուն ղեկավար» Բերիայի առջև Ալազանը խոստովանում է իր «մեղքերը», ասում, որ բավականին լուրջ «սխալներ և հանցանքներ» է գործել կուսակցության առջև և հայցում է ներողամտություն:

Դ. Տեր-Սիմոնյան. «Աղասի Խանջյանի ինքնասպանությունը դա մի պրովոկացիոն, դավաճանական ակտ էր ընդդեմ Անդրերկրկոմի, ընկ. Բերիայի և մեր կուսակցության գծի: Այդ ինքնասպանությունը տրամաբանական վախճանն էր այն երկդիմի, երկերեսանի քաղաքականության, որ վարում էր Խանջյանը... <...>: Խանջյանը իր քաղաքականության բոլոր ասպարեզներում աշխատում էր Հայաստանը պահել Անդրկովկասից կղզիացած վիճակում...»: Հովանավորում էր «նացիոնալիստական ինտելիգենցիային», «հալածում էր կուսակցության կայուն կադրերը, պատասխանատու ընկերներին աշխատում էր լարել իրար դեմ»: «Ակսել Բակունցին նա համարում էր ամենատաղանդավոր գրողը. երբ բազմաթիվ առիթներով ես հայտնում էի Խանջյանին, որ Բակունցը խուսափում է խորհրդային թեմատիկայից, չի ուզում կապվել արդյունաբերության, կոլտնտեսությունների հետ, վարկաբեկում է կոմու-

նիստ քննադատներին, նացիոնալիստական տրամադրություններ է տարածում անկուսակցական գրողների մեջ,- նա ասում էր. «Գրող մարդ է, ինչ եք հալածում»: Ասում է նաև, որ որպես միության նախագահ պայքարել է Չարենցի ու Բակունցի դեմ, հիշում է 1935 թ. մայիսին Մոսկվայի իր զեկուցումը, որտեղ Չարենցին՝ որպես նացիոնալիստի, մղել էր հետնախորք:

Հ. Մկրտչյան. «Աղասի Խանջյանի ինքնասպանության դավաճանական պրովոկացիոն ակտը ուղղված է մեր կուսակցության, նրա Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականության դեմ, Անդրերկրկոմի և ընկեր Բերիայի, Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության դեմ»:

Բողոքում է, որ Խանջյանը «մեր գրականության ողնաշարը համարեց Բակունց-Չարենց խմբակը», «կասեցրել է նացիոնալիզմի և նացիոնալիստ գրողների դեմ ուղղված ամեն մի քննադատություն»: «Հայտնի է, որ նա արգելեց ժուռնալում տպագրել իմ հոդվածաշարը Ե. Չարենցի, Վ. Վահանյանի, Ա. Բակունցի, Վ. Թոթովենցի և այլ հեղինակների մասին, Ն. Զարյանի, Հենրու հոդվածները՝ մեղադրելով մեզ ձախության մեջ: <...>: Խանջյանը ինձ հանդիմանեց, թե ինչու Ադրբեջանի խորհրդայնացման կապակցությամբ ժուռնալի համարը նվիրել եմ Ադրբեջանի գրականությանը»:

Քանդակագործ **Արա Սարգսյանը** կոչ է անում «սիստեմատիկ անխնա պայքար» ծավալել «նացիոնալիստ» Բակունցի և նրա նման քաղաքական դավաճանների դեմ:

Գրական քննադատ **Նորայր Դաբաղյանը**, կրկնելով մյուսներին, ավելացնում է. «...երկու նացիոնալիստներ՝ Ակսելը և Վանանդեցին, իր ժամանակին չեն մերկացվել գրական կազմակերպության կողմից»[40]:

Այս «խանդավառ» ժողովից հետո 50 հայ մտավորականի ստորագրությամբ ուղերձ է հղվում «Հայ ժողովրդի լավագույն բարեկամ, աշխատավորության սիրելի առաջնորդ ընկ. Ստալինին»: Ստորագրյալները դատապարտում են Խանջյանի «ինքնասպանության» «փոքրոգի քայլը» և հավաստիացնում, որ հայ մտավորականությունը ամբողջ հայ ժողովրդի հետ պողպատե վահանի պես կանգնած է սոցիալիզմի պաշտպանության դիրքերում՝ հանճարեղ առաջնորդ, մարդկության իմաստուն զավակ Ստալինի ղեկավարությամբ: Ստորագրել են ժամանակի հայ մտավորականներից շատերը[41]: Իսկ ստորագրողներից ոմանք ևս դարձան 1937 թվականի զոհեր:

---

[40] ՀԱԱ, ֆ. 170, գ. 1, ց. 4, թ. 1–52:

[41] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 82, թ. 1–6:

Այս ամենը նշեցինք, որպեսզի ասենք, որ ուրացման այս սև մթնոլորտում Չարենցը ոչ միայն չուրացավ Խանջյանին**,** այլև մեծարեց նրան և «Դոֆինը Նայիրական» սոնետներում կերտեց իրականին շատ համահունչ նրա գեղարվեստական կերպարը: Սոնետները գրել և մաքրագրել է հուլիսի 29–30-ին Ծաղկաձորի գրողների տանը, վերջնական տեսքի է բերել. դեկտեմբերի 4-ին նորից Ծաղկաձորում:

Վկայություն Ծաղկաձորում հանգստացող Նորենցի. «Անվերջ մտորում էր Խանջյանի մասին, դատում, ենթադրություններ և եզրակացություններ անում: Նա իր այդ ապրումներն ու մտածումները զեղում էր նաև բանաստեղծությունների մեջ: Ինձ կարդաց այդ օրերին գրած սոնետների մի փունջ՝ «Նաիրյան դոֆին» ընդհանուր խորագրով»[42]:

1937 թ. փետրվարի 8-ի մի գրության մեջ հուշում է. «Վերջնական տեքստը միայն *սա* է»: «Իմաստություն» սոնետի վրա ավելացրել է. «Тут кончается А. Х-ян и начинается իսկական ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀԱՅ ղեկավարություն... 1936.XI–11»[43]:

Ստեղծել է առանձին սոնետների մի քանի տարբերակներ, ինչը պայմանավորված է վերջնականի որոնումներով, որոնցում դառը արցունքներով ոգեկոչում է հանրապետության ղեկավարի, ընկերոջ թանկ հիշատակը: Ամբողջ շարքը քաղաքական ու ազգային այդ ծանր աղետի սուր և հուսահատ գիտակցումն է:

Վերնագրերին հաջորդող «11.VII.1936» թվագրությունը Խանջյանի հոգեհանգստի օրն է:

Խանջյանի ոգեկոչմանն են նվիրված հետևյալ սոնետները՝ «Դոֆինը նայիրական», «Դոֆինը» իրական», «Մայրը», «Շրթունքները», «Լեգենդը», «Մա՛ի լեգենդին», «Իմաստություն», «Ճանապարհի խաչի (իբրև տապանագիր)»:

Պատմությունը կրկնվում է («Հին պարտության լեգենդը»). հայրենանվեր Արա Գեղեցիկը դարձավ Շամիրամի զոհ, հայրենանվեր Խանջյանը՝ Բերիայի:

Սոնետներից բացի, Խանջյանի հետ կատարված ողբերգության արձագանք են նաև այլ ստեղծագործություններ՝ «Զառանցանք» («Թվում է վայրկյանից այն սև»)[44], «Զարմանք է հարուցում իմ մեջ»[45], որոնք մեկ ամբողջի մասեր են:

---

[42] Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին 1961, 203:

[43] **Չարենց** 2017, 377:

[44] Տե՛ս **Չարենց** 1983, 542:

Ահա երկրորդ սոնետը.

Այս՝ գաղթական կանանց ընտանեկան սուգով
Եվ շիվանով միայն շրջապատած
Փայտյա դագաղն ու դին արյունոտած–
Մի՞թե օ, Աղասի՛,– դիակն է քո...

Դո՞ւ ես արդյոք պառկած այդքան անհույզ դեմքով
Հանցապարտի, գողի դագաղ մտած,–
Երբ ժողովուրդն անգամ աչքերն իր թաց
Վարանքով է սրբում բաց դագաղի դեմ քո...

Որպես ջրհորն ընկած աստեղային մի ջահ՝
Ընկավ՝ պոկվեց հանկարծ լուրթ եթերից
Թե՛ դոֆինյան քո դեմքը, թե՛ անունդ *«Խանջյան»:*

Եվ ես հիշում եմ մեր այն մտերիմ
Եվ իրոնիկ զրույցը այնքա՜ն թովիչ–
Երբ կոչեցի ես քեզ – **նայիրական դոֆին**...[46]:

Կյանքը դեռևս շարունակվում էր. 1936 թ. օգոստոսի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հաստատում է Պուշկինյան հանձնաժողովի ներկայացրած հանդիսությունների պլանը: Չարենցի կազմած պլանը հետագայում Ամատունու կողմից վերանայվում է ու սեղմվում: Դեռևս Խանջյանի օրոք Ամատունին համապատասխան գրությամբ դիմել էր նրան. «Աղասի! Չարենցի ներկայացրած պլանը ըստ իս հիմնականում ընդունելի է՝ բացառությամբ հրատարակչական պլանից: Այդպիսի պլանն իրագործել մեր պայմաններում և այդքան կարճ ժամանակամիջոցում, անհնարին է: Ես կարծում եմ՝ կանգ կառնենք նախատեսվածի մեկ քառորդի վրա: <...>: Ես կարծում եմ, որ ընդգրկումը շատ լայն է»[47]:

Իսկ 1936 թ. օգոստոսի 22-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն կայացնում է այսպիսի որոշում. «(Ա. Եղիազարյան, Ամատունի) Նկատի ունենալով, որ Չարենցի արտասահման մեկնելը մոտիկ ժամանակներում չի իրականանա՝ չեղյալ համարել ԿԿ բյուրոյի 1936 թվի հունիսի 29-ի որոշումը՝ Չարենցի ընտանիքին 800 ռուբլու չափով նպաստ տալու վերաբերյալ»[48]: Չարենցի արձագանքը.

---

[45] Տե՛ս **Չարենց** 2017, 164:
[46] **Չարենց** 2017, 153:
[47] **Չարենց** 1996, 515:
[48] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 25, թ. 133:

«Չեն ուզում ինձ բաց թողնել, գիտեն, որ զզվել եմ իրենցից: Ասում են՝ վայլուտա չկա կամ էլ ուրիշ նման բաներ... Խանջյանի մահը ավելի է բարդացրել այս հարցը, հուսահատվում եմ, ի՞նչ անեմ»[49]:

Նախնական պայմանավորվածությամբ պետք է մեկներ Փարիզ:

Եզրակացություն

Ե՛վ Մյասնիկյանը, և՛ Խանջյանը հայրենաշեն ղեկավարներ էին, ովքեր շատ լավ գիտեին նաև հայոց պատմությունն ու հայ մշակույթը: Այս տեսադաշտում Չարենցը նրանց համար գնահատելի կերպար էր: Մյասնիկյանը, լինելով Տերյանի ընկերը, խոր ակնածանք ուներ նրա հիշատակի հանդեպ և այդ ակնածանքը դրսևորում էր նրա գործը շարունակող բանաստեղծ Չարենցի գործնական օժանդակությամբ, պաշտպանությամբ և նրա տաղանդի գնահատությամբ՝ տպագրեց նրա երկհատորյակը, գործուղեց արտասահման՝ աշխարհը ճանաչելու:

Խանջյանը ևս շատ բարձր էր գնահատում Չարենցի տաղանդը: Նրա օրոք քաղաքական հարցերը սրված էին: Գրողների յուրաքանչյուր ստեղծագործության մեջ նախ նացիոնալիզմ էին որոնում և նոր միայն գեղարվեստ: Ուժեղացել էր Անդրերկրկոմի կուսակցական ղեկավար Բերիայի վերահսկողությունը: Նրա ճնշմամբ քաղաքական բանսարկուները շատացել էին: Այս տեսակետից Չարենցին էլ է քննադատության բաժին հասել, ընդհուպ «Գիրք ճանապարհի» ժողովածուի արգելում: Այնուամենայնիվ, Խանջյանը կարողանում էր պահպանել իր մտավորականությանը, մասնավորապես պաշտոնական քննադատություններից առանձին՝ հոգատար էր նրա հանդեպ: Խանջյանի սպանությունից հետո Չարենցը կորցրեց իր պաշտպանին և կարճ ժամանակ հետո ինքն էլ զոհ գնած Ամատունու սադրանքներին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալազան Վ. 1990, Տառապանքի ուղիներով, Երևան, «Սովետական գրող», 238 էջ:

Գասպարյան Դ. 1994, Փակ դռների գաղտնիքը, Երևան, «Ապոլլոն», 727 էջ:

Գրական թերթ, Երևան, 21.04.1933, թիվ 7:

Գրական թերթ, Երևան, 20.01.1936, թիվ 2:

Գրական թերթ, Երևան, 01.04.1997:

Զաքարյան Ալ. 1989, Գրականության և պատմության ընթացքները, Երևան, «Սովետական գրող», 548 էջ:

[49] Չարենցի հետ: Հուշեր, 1997, 319:

Խորհրդային Հայաստան, 18.11.1933, Երևան, թիվ 267:
Խորհրդային Հայաստան, 27.03.1925, Երևան, թիվ 69:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 25, թ. 167–168:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 14, գ. 51:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 30, թ. 27–63;
ՀԱԱ, ֆ. 1, ց. 24, գ. 19ա, թ. 73–74:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 70, թ. 33:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 25, թ 133:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 39, թ. 81:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 82, թ. 1–6:
ՀԱԱ, ֆ. 170, գ. 1, ց. 4, թ. 1–52:
ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 1, թ. 1:
ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 1, թ. 2–3:
ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 4, թ. 34–44:
Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, 1961, Երևան, Հայպետհրատ, էջ 400:
Մարտունի Ա. (Մյասնիկյան Ա.). Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի № 1-ի մասին. Խորհրդային Հայաստան, Երևան,1, 2 դեկտեմբերի, թիվ 267, 268:
Չարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 711 էջ:
Չարենց Ե. 1996, Նորահայտ էջեր, Երևան, ԵՊՀ հրատ., 633 էջ:
Չարենց Ե. 2017, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 485 էջ:
Չարենց Ե. 1967, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 804 էջ:
Չարենցի հետ: Հուշեր 1997, Երևան, «Նաիրի», 424 էջ:
XXII сьезд Коммунистической партии Советского союза. Стенографический отчет», М., 1962, т. 2, 608 с.
Антон-Овсеенко А. 1999, Берия, Москва, «АСТ», 480 с.
Медведев Р. 1990, О Сталине и сталинизме, Москва, «Прогресс», с. 488.

ИСТОРИЧЕСКИЕ ПОРТРЕТЫ ПОЛИТИЧЕСКИХ ДЕЛЯТЕЛЕЙ В ЛИТЕРАТУРНОЙ ГАЛЕРЕЕ ЧАРЕНЦА

(Александр Мясникян, Агаси Ханджян)

ГАСПАРЯН Д.

Резюме

Ключевые слова: Чаренц, Мясникян, Ханджян, Аматуни, ЦК, народ, история.

Жизнь и творчество Егише Чаренца неотделимы от истории. Чаренц вошел в историю «как солдат-доброволец Родины», как участник и идеолог революции, «организатор литературной работы, руководитель и теоретик фракции «Ноябрь», «как издатель», сторонник и критик политических лидеров республики.

Е. Чаренц поддерживал отношения с некоторыми представителями политического руководства республики, в частности, с Ал. Мясникяном и А. Ханджаном, которые считали поэта знаковой фигурой в армянской литературе и преклонялись перед его талантом. Секретарь ЦК КПА А. Аматуни сыграл роковую роль в судьбе Чаренца, став причиной его ареста и гибели.

HISTORICAL PORTRAITS OF POLITICIANS IN CHARENTS' LITERARY GALLERY

(Aleksandr Miasnikyn, Aghasi Khandjyan)

GASPARYAN D.

Summary

Key words: Charents, Myasnikyan, Khanjyan, Amatuni, Central Committee, people, history.

The life and work of Yeghishe Charents are inseparable from history. Charents went down in history "as a volunteer soldier of the homeland," as a participant and ideologist of the revolution, "as an organizer of the literary work, leader and theorist of the "November" fraction, "as a publisher", as a supporter and critic of the republic's political leaders.

He was on good terms with some of the political leaders of the republic, especially Alexander Myasnikyan and Aghasi Khanjyan. They both considered the poet an emblematic figure in Armenian literature and admired his talent. The First

Secretary of the Communist Party in Armenia A. Amatuni played a fatal role in Charents' life, being the reason for his arrest and execution.

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ*
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
satenik_avetisyan@mail.ru
DOI: 10.54503/1829-4073-2022.1.219-232

ԵՐԿԻՐ-ԲՆՕՐՐԱՆԻ ՔՐՈՆՈՏՈՊԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ ինքնություն, ծմակ, բնօրրան, քրոնոտոպ, տեր, գոյաբանություն, ազգային ինքնագիտակցություն:

Ներածություն

Հրանտ Մաթևոսյանի՝ ինքնության ու ծմակի թեմաներով ստեղծագործությունները խորհրդային գրաքննությունը սրերով էր ընդունում: Իր արձակի բոլոր շերտերում՝ սկսած գրական առաջին երկից մինչև վերջինը («Ահնիձոր», «Մենք ենք, մեր սարերը», «Մեսրոպ», «Մեծամոր», «Տերը») Մաթևոսյանը գաղափարական արմատապես հակադիր հայեցակարգ էր ներկայացնում՝ բաց տեքստով մերժելով խորհրդային տնտեսական և բարոյական կարգակառույցի արդյունավետությունը: Հեղինակի գեղարվեստափիլիսոփայական հայեցակարգը հիմնվում էր ազգային պատմական երթի տրամաբանությամբ ձևավորված, հայկական էթնոհոգեբանությամբ կազմավորված ազգային կացութաձևերի վրա՝ առաջադրելով այն թեզը, թե հայոց ինքնությունը հնարավորինս անխոցելի էր, երբ հայը դեռ իիքսոս էր՝ թուխ ու ջղային, այսինքն՝ զորեղ ազգային պետականություն ուներ: Հայ ինքնության պահապանն ու երաշխավորը պետությունն էր, և հայն անհատական պայքար չէր մղում իր եզերքը պահպանելու համար: Հրանտ Մաթևոսյանն ազգային դիմագիծն ու հոգեկերտվածքի յուրօրինակությունը կորցնող աշխարհին հակադրեց իրենց ինքնությունը հստակորեն ճանաչող ու արժևորող կերպարներին՝ Մեսրոպին, Ռոստոմին, ովքեր արժանի էին գեղարվեստական գրականություն մուտքագրվելու, քանզի ըստ Մաթևոսյանի և նրա կերտած հայրենապաշտ կերպարների՝ Ծմակ-հայրենիքը բարձրագույն անսակարկելի արժեք է, ինքնութ-

---

* *Հոդվածը ներկայացվել է 20.11.20, գրախոսվել է 20.11.20, ընդունվել է տպագրության 25.04.22:*

յան աճի և պահպանման միակ բնական կենսամիջավայրը: Ծմակն ինքնության խարիսխն է, մեծ իմաստով՝ բնօրրանը, էթնոսի ամրացման ու զարգացման տարածքը, իսկ որոշակիորեն տեղայնացված՝ Ծմակուտն է ինքնությունը գիտակցող հերոսների ամրացման կետը, որոնք Մաթևոսյանի հզոր հակադրությունն էին խորհրդային պարտադրված ինտերնացիոնալիզմին, և դյուրին չէր նրանց ծնունդը սոցիալիզմի ծաղկման փուլում: Մաթևոսյանական Ծմակը բխում է որոշակի պատմական և գեղագիտական չափորոշիչներից, որոնք կքննվեն ստորև:

Ծմակի փարածական շրջածիրը

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության գեղարվեստական համակարգում Ծմակը գոյաբանական կառույց է, որը պատկերագրվում է ուղիղ և փոխաբերական իմաստների սահմանային կեցությամբ: Ծմակն ուղիղ իմաստով Ճրագթաթ անտառն է, արջի, մոշահավի, հաճարենիների բնօրրանը, որտեղ նախաստեղծ օրենքները գործում են անվրեպ՝ ստեղծելով միասնական կենսատեղեկատվական համակարգ. «Ամբողջ հաճարենին արջ էր, և ամբողջ անտառն էր արջ»[1]: Հետևաբար, իրական Ծմակը իրենից սերված տեսակների համակեցության ու աճի միակ կատարյալ միջավայրն է, նրա արժեքը միայն միլիարդներով կարելի է սահմանել. «Գիտես ինչ ծմակ է՞, միլիարդ է, միլիարդ»: Սա, իհարկե, ծմակահատի նյութապաշտական մեկնակետն է, իսկ բնապաշտական ու գեղապաշտական հայեցակերպով՝ ծմակը երկնքի մեջ մխրճված, «երկնքի կեսը բռնող ուրվանկար է»[2]:

Ծմակը Հրանտ Մաթևոսյանի արձակում նաև հենակետային փոխաբերություն է, որը ամենանեղ իմաստային օղակներով նույնական ուղեծրով ընդարձակվում է՝ ծգտելով նախասկզբին որպես էթնոտարածություն: Այսպիսի մոդելավորման պարագայում կունենանք դեպի դուրս ընդարձակվող տուն-ծմակ, գյուղ-ծմակ, գավառ-ծմակ, երկիր-հայրենիք-ծմակ կառույցը:

«Ես ես եմ»՝ սահմանեց Մաթևոսյանը համանուն խոհագրության մեջ՝ անվերապահ հաստատելով հայոց էպոսով դեպի իր իրականությունը հոսող և ընդհատվելու միտում չունեցող հայրենի հողից հայի օտարման բռնի ընթացքի գաղափարաբանությունը, և «Մեսրոպը» դարձրեց այդ գաղափարաբանության գրական մանիֆեստը. «Ձեռագիր «Մեսրոպս»՝ տղայի իմ իսկապես

[1] **Մաթևոսյան** 1990, 221:

[2] **Մաթևոսյան** 1985, 18–19:

հանդգնությունը, վիրավորելու չափ քաշքշեցին ու դեսուդեն արին... »[3],- դառնանում էր հեղինակը: Մեսրոպն իր Ծմակից օտարին վռնդող ու իր Ծմակն ամրացնող առանցքային տիպ է, նույն ինքը «Տերը» կինովիպակի գլխավոր հերոսը՝ Ռուստամ Մամիկոնյան-Սարգսյանը, որը հայրենիքի վերանձնային զգացողությունը չունեցողների և հայրենիքը սպառողների դեմ սկզբունքային պայքարի է դուրս եկել: «Տեր» ֆենոմենը այսպես է բնորոշում գրականագետ Վ. Գրիգորյանը. «Ռուստամի ներքին զգացողությունները սրված են, քանի որ Ծմակուտի անպաշտպան վիճակը նրան դարձրել է շրջահայաց և հեռատես: Տնքացող խիղճը մշտապես նրան արթուն է պահում օտար հովերի դեմ: Նրա մտահոգությունը միայն անտառը չէ, այլ հայրենիքը, նրա վաղվա օրը, ժողովուրդը»[4]:

Ոչ ոք այնքան խենթորեն զգայուն չէր իրենից խլվող հայրենիքի մի պատառ հողի հանդեպ, որքան Մեսրոպը: Թուրքը ծմակահեն էր՝ վտանգավոր Ծմակի բոլոր տարածական դրսևորումների պարագայում. «Ամռանը նրանք իրենց քոչերով գալիս էին, և մեր տունը դառնում էր ուրիշի տուն» (Վ., էջ 195): Այս պատկերը հայ ինքնությանը սպառնացող վտանգի ահազանգ է, որովհետև ծմակը նախ՝ հայրենական տունն է, որ ամեն հայ իր զավակին պիտի կտակի, բայց օտարի կեղծ գաղափարաբանությամբ պաշտպանական էթնիկ համակարգերը անջատվել են, ու հայը վտանգը հերթական անգամ չի զգում: Մեսրոպի տագնապի ազդանշանները սեփական ցավի խթանիչներից անընդհատ միացված են, և թշնամու հետ կերած հացը դառնում է զգոնությունը բթացնելու վտանգավոր միջոց. «Ա՛յ քթիցդ գա էդ հացը,- հայհոյում էր ձիապանը,- քթիցդ գա էդ կերածդ հացը, որ քու զավակը չի ունենալու, որ ուտի» (Վ., էջ 196): Պարտադրված այլասիրության չափաբաժինը հայ ինքնությունը վտանգելու չափ մեծ էր. «Դե լավ, էլի, Մեսրո՛պ, սարեր են, էլի, կապրենք, էլի, ինչո՞ւ անտեղի նեղանանք-նեղացնենք» (Վ., էջ 196): Եղբայրության այսպիսի մոլորեցնող կոչեր դարասկզբին էին հնչել, հայն էլի հավատացել, ոգևորվել էր, ու միասնական Հայաստանից մի ահռելի հատված խլեցին՝ հայությանը ոչնչացնելով: Հիմա նորից հայտնի թուրքը՝ եղբայրության ծանոթ կարգախոսով, ամեն ինչ շատ նման XX դարասկզբի պատմական դեպքերին, նույն գաղափարաստեղծները, նույն գործիք թուրքը սողացող նենգությամբ խլում է հայի հանդը, խոտհարքները, արոտները, ու Մաթևոսյանի հերոսը՝ Մեսրոպը, Ռուստոմը, հովիվը, չգիտի ինչ անի, որովհետև եղբայ-

[3] **Մաթևոսյան** 2004, 51:

[4] **Գրիգորյան** 2013, 453:

րության չհիմնավորված մի գաղափար անընդհատ մեջտեղ է գալիս, ու նրան՝ Ծմակի իրական Տիրոջը, խեղճացնում «նացիոնալիստի» դավադիր պիտակով: Երկրի Տերը մի հուսահատ ու համառ պայքար է սկսում՝ իր եզերքը արգելափակելու, թալանչի աշխարհից թաքցնելու միտումով. «Շլագբաում ենք կապելու: Եթե հնար ունենայինք, Քարկապը կտրաքացնեինք, էս երկիրն աշխարհից կկտրեինք…»[5]: Տերն իրեն հայտարարագրում է որպես. «Քոշաքարա լեռներից էս սիրուն սարերով մինչև զույգ Ոսկեպար Ծմակուտ աշխարհի տեր Ռուստոմ Սարգսյան» (2-րդ, էջ 447): Ուրեմն Ծմակուտը նաև աշխարհ է, որի սահմանները Մեսրոպի գիտակցության մեջ և պատմականորեն ստույգ են, բայց ազգերի համերաշխ միությունում նշանակված չեն. «Սահմանի մի կարգին նշան չկար: Արոտն իր համար վերուվարելով գնում էր, և հոտն էլ իր համար արածելով բացվում էր, և այդտեղ պարզվում էր, որ նրանց մտքում դա իրենց խոտհարքն է եղել» (Վ, էջ 197): Եղբայրության ազնիվ զգացողություն ուներ միայն հայը, իսկ թուրքն իրենով արած հանդում ծմակուտցու արածել փորձող հոտը փախցնում է ու տուգանք պահանջում: Սեփական Ծմակի տերը մնալու միակ պայմանը հեղինակը համարում է հոգիների ներծմակային համերաշխությունը՝ Ծմակուտի մշուշված ազգային գիտակցությանը հակադրելով անտառի բնակիչների անխարդախ գոյակցությունը: Իրական Ծմակ մտած Մեսրոպին անտառի բնակիչները թշնամանքով են դիմավորում, քանզի «Մեսրոպն ուրիշի տուն էր մտել». այս նախադասությունը բացահայտորեն զուգորդվում է արդեն մեջբերված «Մեր տունը դառնում էր ուրիշի տուն» մտածևումին՝ շեշտադրելով Ծմակ-Ծմակուտ սահմանակից իրականությունների ներհամայնքային խնդիրները: Արջի հետ մենամարտով Մեսրոպի իմաստասիրական հայեցակարգը Ծմակի թեմաներով իր լրմանն է հասնում, ըստ որի՝ արջն ու Ծմակը ներձույլ, անտրոհ ամբողջություն են, հետևաբար՝ անպարտելի. «Վաթսուն տարի ապրել եմ ու թե մի բան եմ հասկացել՝ որսի օրը: Արջն ինչո՞ւ է ուժեղ, որովհետև արջը ծմակ է, ծմակի մի մասն է: Իր մի մասով ծմակը արջ է, դե հիմա գնա գտի՛ր, թե որտեղ է ծմակը վերջանում ու սկսվում արջը: Ուզում էի փախչել, ծառերը բռնեցին: Մոշահավը գիտեր արջի մասին ու մի ժամ մոլորեցնում էր: Դրա համար էլ արջը ուժեղ է» (Վ., էջ 223): Ըստ Մեսրոպի կենսաճանաչողության՝ մոշահավն ու ծմակակից արջն ուժեղ էին, որովհետև նացիոնալիզմի կեղծիքը նրանց չէր սպառնում, նրանք իրար չէին դավում, ինչպես Լևոնը Մեսրոպին՝ խախտելով Ծմակի համադաշնութ-

[5] **Մաթևոսյան** 1985, 454:

յունը. «…Ով արջ է, ուժեղ է: Այսինքն՝ սեփական ծմակ պիտի ունենաս: Լևոնն, օրինակ, ունի և ուժեղ է: Ծմակ միայն ես չունեմ» (Վ., էջ 223): Այս հարցում գուցե Մեսրոպը սխալվում էր. Լևոնն էլ իր նման անծմակ էր, օտարի կամքով ու ծրագրով ուղղորդվող իրապես անհայրենիք մեկը, ով չէր կարողացել թև-թիկունք լինել հայրենակցին ու իրենց տարածքն ամրացնել: Մեկը Սիբիր էր քշվել, մյուսը՝ Բեռլին, վերադարձել էին՝ կյանք ու ճակատագիր տանուլ տված: Հետևաբար՝ Ծմակ-մոշահավ-արջ գոյաբանական հանգույցը կենսաուժերի բնական հաղորդակցության օրենքով ամուր էր ավելի, քան Ծմակուտ-Մեսրոպ-Լևոն էթնոբարոյական շղթան, որի բնական կենսահոսքերի պտույտը դարերում տրոհվել էր օտարի դավադիր ջանքով և ազգային համակարգված գաղափարախոսության բացակայության պատճառով:

Ծմակի ժամանակային սահմանները

Հրանտ Մաթևոսյանի Ծմակը՝ որպես էթնոտարածության մետաֆոր, ունի իր ծննդաբանությունը՝ ժամանակային պարականոն պարբերափուլերով, որոնցով ամբողջանում է Ծմակի քրոնոտոպը: Դեռևս իր առաջին գրական գործերից «Ահնիձոր» ակնարկում Մաթևոսյանն այդ գյուղի կենսագրությունը թվագրելիս օգտագործում է պատմական ժամանակը ճշգրտելու գեղագիտական չափորոշիչներ, որոնք, խորապես բանաստեղծական ատաղձ ունենալով, ձգտում են որոշարկելու գյուղի, մեծ իմաստով՝ հայրենիքի պատմական ժամանակը: Այսպես, Ահնիձորի տարիքը չափվում է մի կաղնու տարիքով. «Հանդում մի տեղ՝ պատերի մեջ, կաղնու փտած բուն կա. պատերը տուն են եղել, տան մեջ՝ կյանք: Մարդկային կյանքը սրբվել է տնից, իսկ քարը քարին մնացել է, և պատերից ներս ծլե՛լ է կաղնին, աճե՛լ է կաղնին, ընկել ու փտե՛լ է կաղնին, որ ապրում է հինգ հարյուր տարի կանգնած, հինգ հարյուր տարի թիկնած՝ բանաստեղծության մեջ, երկու հազար տարի՝ ըստ մասնագիտական գրքերի, իսկ իրականում անհայտ է, թե ինչքան, որովհետև կաղնին չի ընկնում ու մեռնում, կաղնին միշտ կայծակնահար է լինում: Քարը քարին մնացել է մինչև մեր օրերը, մի կաղնու կյանք» (Ե, 1, էջ 8–9): Կեղծվել էր հայրենիքի ծագման իրական ժամանակը, և հողն ու իր բնիկները՝ բանական ու բուսական, իրենց կենսագրությամբ սրբագրում են անցյալի վրիպակները: Ժամանակի չափման միավոր է նաև մի ցորենի կյանքը. «Խոփը դեմ է առնում քարի, և դա քար չի լինում, կարասների շարք է լինում, ամեն մեկը՝ մարդը ձեռքը բարձրացրած՝ այդ հասակի, երկու մարդ հազիվ գրկեն՝ այդպիսի փորով, բերաններին սալ քար, մեջները՝ տակը թանձր նստած սև հեղուկ՝ եր-

ևի ձեթ, թե՛ ցորեն՝ փտած-հեղուկացած: Մի ցորենի կյանք առաջ այստեղ մարդկային կյանք է եղել» (Ե,1 ,էջ 9):

Հրանտ Մաթևոսյանի գեղարվեստական ժամանակը չափորոշիչների բազմակերպություն է դրսևորում. չափման հաջորդ միավորը կտավատի կյանքն է. «...Վերջերս սարերում խամ հողեր վարեցին: Դեռ չէին գտել, թե ինչ են ցանելու, դեղին ծաղկով ծփաց կտավատը: Նորերն այդտեղ սերմ չեն գցել: Սերմ գցել են հազար տարի առաջ» (Ե,1, էջ 9): Մաթևոսյանական Ծմակի քրոնոտոպի ամենափոքր միավորը հազար տարին է, հազարները գումարվում են իրար ու՝ «Գյուղի վանքը հազար հինգ հարյուր տարեկան է: Վանահիմքի հեթանոսական կրակարանը ութ հազար հինգ հարյուր տարեկան է: Վանքն է գյուղում բույն դրել, թե գյուղն է փաթաթվել վանքի շուրջը՝ չգիտեն, գյուղի տարիքը չգիտեն» (Ե,1,էջ 46): Հավի-ձվի ծագումնաբանության առեղծվածը հիշեցնող այս թնջուկն էլ Մաթևոսյանի արձակի քննության ընթացքում ծնում է ինքնության և սկզբի առեղծվածի հիմնախնդիրը, քանզի քրոնոտոպի չափագրումն իրացնում է սուբյեկտը, որ որոշակի գենոտիպի, նույնն է թե՝ ինքնության կրողն է՝ Ծմակից արարվածը:

Մովսես Խորենացին հեռավոր V դարում մեղադրում էր հայոց անիմաստասեր արքաներին՝ իր ու իր ազգի երթի տեղեկությունը չամրագրելու ու չփոխանցելու, ածուի, թեկուզ փոքր ածուի դժվար կամ անճիգ ճակատագրի, երբ և ինչպես իր հողում ամրանալու պատմությունը չգրառելու ու հետո եկողներին մոլոր ու որբ թողնելու մեջ[6]: Ու որպեսզի հայոց ծննդաբանությունը անհայր ու անմայր որբի կենսապատում չլիներ, նա գնաց դեպի էթնիկ մշակույթի, մասնավորապես բանարվեստի խորքերը, որ պեղի ազգային հիշողության արքետիպային շերտերն ու բանաստեղծության, երգի, առասպելի, զրույցի պատառիկներից հայոց մեծերի, հայոց տան հիմնադիրների, ազգի սերմնացանների կերպարները հավաքի բեկոր առ բեկոր, փորձի ամբողջացնել այն էթնոտիպը, որ անունով, վարքով, մարմնով ու ոգով լինի երկնային ու երկրային, նույն էության մեջ մեկտեղվեն Աստված ու մարդ, և գտավ Հայկին՝ հայոց անվանադիր նախապետին, որ ժամանա՞կն էր խորհրդանշում, թե՞ ինքը հենց Ժամանակ-Աստվածն էր, որն, ըստ առասպելաբանության, ժամանակը համակարգող ՕՐԻՈՆ-ՀԱՅԿ համաստեղությունից Երկիր էր գործուղվել՝ երկրային խախտված ժամանակը կարգի բերելու: Նա եկավ ու մնաց, քանզի երկրային ժամանակը խոտորվել էր: Նա կռիվ ուներ, դա Լույսի կռիվն էր խա-

[6] **Խորենացի** 1981, 13:

վարի դեմ, տիեզերակարգի կռիվն էր քաոսի դեմ: Հայկի և Բելի պայքարը հակադիր աշխարհների պայքարն էր, մեղավորած մարդու և աստվածամարդու, աստվածաշնչյան Կայենի ու Աբելի հակամարտությունն էր: Խորենացին գտավ նրանց՝ իր ազգի սերմը կրողներին՝ Հայկին, Արամին, Վահագնին, Արային, և ամրագրեց անհիմաստասեր արքաների կողմից չգրառված պատմությունը, ըստ որի՝ հայոց մեծերն Աստվածներ էին, հայոց ածուն աստվածային էր: Իրականությունը եկավ առասպելի մեջ, միֆակերպ, իբր հնարովի-հեքիաթային:

Հրանտ Մաթևոսյանն իր ազգին անհայր ու անմայր որբի կարգավիճակում չտեսնելու նպատակով նրա ծագումնաբանությունը սկսեց հիքսոսներից, որոնք նվաճողներն էին փարավոնների հարստության՝ շնորհիվ իրենց երկաթապողպատակուռ զորության: Իր վրա վերցնելով պատմաբանի բեռը՝ հեղինակը փորձեց կռահել, թե ուր կորան հիքսոսները, և ստանձնելով լեզվաբանի գործը՝ հիքսոս բառից պատմական հնչյունափոխությամբ դուրս բերեց հային: Բայց իր օրերի հայի պարտությունների շղթան ու չմեծարված, ավելին՝ օտարված զորավարների գունդը ստիպում են ասել՝ «Ձե՛նդ կտրիր...ու մի՛ պարծեցիր»:

Եթե Հրանտ Մաթևոսյանի Մեսրոպը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» կարդացած լիներ, պիտի կարծեր, որ հայ ժողովրդին Խորենացին է ստեղծել, բայց հավանաբար չէր կարդացել, հիքսոսներից էլ տեղյակ չէր և ահա թե ինչ էր պնդում. «Հայերին Լեռն է հնարել: Մինչև Լեռն, սուտ է, հայեր չեն եղել: Մերանը Լեռն գցեց: Մածունը ո՞նց են սարքում, կաթի մեջ մերան են գցում, դառնում է մածուն, Լեռն հայերին էդպես է հնարել» (Վ., էջ 193): Մեսրոպի պատմական գիտելիքն ակնհայտորեն խախուտ էր: Այս պնդումն այնքանով էր խելամիտ, որքանով որ իրապես պատմաբաններն ընդառաջում են պատմաքաղաքական հանգամանքների պահանջին: Իսկ ինչո՞ւ էր նա այս կարծիքին, փոքր-ինչ որոշակիություն մտցնում է պատմվածքի առաջին նախադասությունը. «Ձիապանը լավ Հայոց պատմություն գիտեր և սարերի միակ մարդն էր, որ զգում էր իր հայությունը» (Վ., էջ 193): Մեսրոպի էթնոփիլիսոփայությունը տարբերակում էր ինքնությունները, դրանք տարանջատում և հակադրում: Ինքն իր հայությունը հաստատում էր Լեռյով ու Գայլ Վահանով՝ պատմական ժամանակների խառնաշփոթում հերքելով ու հաստատելով իրեն: Իր ապրած օրվա հայ-թուրք եղբայրություն-հարևանությունը հոր սպանության փաստով իրեն անամոթ ու վիրավորական սուտ էր թվում, քանզի ձիապանի համոզմունքի հիմքում անձնական փորձառությունն էր և իր ընտա-

նիքի ճակատագիրը: Թուրքը հորն սպանել էր, և նրա արյան հոսքը հևքի էր վերածվել՝ խառնվելով վտանգված ինքնությամբ ամեն հայի արյան հևքին: Տագնապած արյունը ճանաչել էր ինքն իրեն՝ ձիապանից փիլիսոփա կերտելով: Իրենց ինքնությունը չգիտակցող համագյուղացիների և մասնավորապես դասընկեր ու տարեկից Լևոնի հետ հայության և ազգայինի թեմաներով անվերջ վեճերը Մեսրոպին հասցրին ծայրահեղորեն անիրական, բայց պահի մեջ հիմնավորման միտվող եզրահանգման. «Ա՛յ տղա, մեր էս հայ ազգը վայ թե մի մեծ սուտ է» (Վ., էջ 200): Բայց չէ՞ որ այս առեղծվածի առջև միայն խեղճուկրակ ձիապանը չէր կանգնել, այլ հայոց մտքի հսկաները առասպելի և պատմության չտարորոշվող հանգույցները դժվարությամբ քանդելիս ունեցել էին նույնատիպ կասկած-մտահոգություններ: Եթե V դարում պատմահոր առջև ծառացել էին հայոց չպահպանված ու կորսված պատմական երթի ամբողջականությունը վերստեղծելու դժվարությունները, ապա տասնհինգ դար հետո պատմության քառուղիներով դեգերող Եղիշե Չարենցին երկիրը Նաիրի միայն ու միայն ցնորական ու անիրական էր երևալու՝ ներկայի գորշ ու անգաղափար համապատկերին: «Թե մի՞ֆ էիր դու»[7] բանաձևումը տիրական է ճշգրիտ պատասխան ակնկալողի հետևողական պրպտումներում և համարժեք է Մեսրոպի երկմտանքին՝ եթե ոչ ոք չի գիտակցում իր հայրենիքն ու ազգությունը, «Գուցե սու՞տ է Նաիրին, Նաիրին չկա...Գուցե հուշ է միայն, ֆիկցիա, միֆ: Ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն...»[8]:

«Մեծամոր» էսսեում Մաթևոսյանը ստի արարչագործության շատ կարևոր մի դրվագ ունի: Հայաստան ժամանած թուրք գրողը հայտարարում է, թե գիրք է գրում դարասկզբին իր ժողովրդի վարած ազատագրական պայքարի թեմայով: Եթե կես դար առաջ մորթված ու հայրենազրկված ազգի պատմությունն այսքան թեթև նենգությամբ կեղծվում է՝ նույն այդ ցեղասպանված ազգի աչքերին նայելով, ապա հինգ հազար տարվա հիքսոսյան երթը շերտ առ շերտ զմռսվել էր ստից շաղախված բետոնի կարծրություններում, քանզի տարբեր հազարամյակներում անհամրելի են նրանք, ովքեր, ըստ Մաթևոսյանի՝ «ուզում են էս ժողովրդի գլուխն ուտեն պրծնեն»: Այնքան տևական ու դաժանորեն էր ոչնչացվել հայն իր հայության համար, որ ինքնուրացման բացիլը ներսից կրծել ու կրծում էր նրան՝ օտարելով ինքնությունից ու հողից: Գեղարվեստափիլիսոփայական այս հենքի վրա Մաթևոսյանը ստեղծում

[7] **Չարենց** 1985, 317:

[8] **Չարենց** 1987, 10:

է Մեսրոպ-Փոքր Միեր զուգահեռը՝ որբ, չընկալված ու անձմակ: Ագռավաքարի դռանը հերթագրվածներին միանում է նաև Մաթևոսյանի Մեսրոպը:

Մեծ Եղեռնից մեկուկես տասնամյակ հետո «թուրքերը եկան» ահազանգին հայությունն արձագանք չուներ, ու վրդովված Մեսրոպն այսպես բնութագրեց համագյուղացիներին. «...Թշնամի եք,- ասաց,- հայ չկա էս աշխարքում,- ասաց,- աննամուս էիք ու աննամուս էլ կաք: Հայեր, իրոք, չկային: Կային միայն հովիվներ...» (Վ., էջ 198): Ինչո՞ւ էր երեկ ցեղասպանված ազգն այդպես անտագնապ տրվել խորհրդային այլասիրության հորինվածքին, և ինչո՞ւ նույն խորհրդային երկրում ապրող հրեան չուներ ապահովության այդ նույն կասկածելի զգացողությունը: Իոսիֆ Բրոդսկին «Միավորից փոքր» ինքնակենսագրական էսսեում գրում է. «Մեր գիտակցության ճշմարիտ պատմությունն սկսվում է առաջին ստից: Իմը ես հիշում եմ: Դա դպրոցի գրադարանում էր, երբ լրացնում էի ընթերցողի քարտը: Հինգերորդ կետը բնականաբար «ազգությունն» էր: Արդեն յոթ տարեկան էի ու հստակ գիտեի, որ հրեա եմ, բայց գրադարանավարուհուն ասացի, որ չգիտեմ: Կասկածելիորեն աշխուժացած կինն ասաց, որ գնամ տուն և հարցնեմ ծնողներիս: Այդ գրադարանն այդպես էլ չվերադարձա...»[9]: Բրոդսկին հմտորեն թաքցնում է իր արարքի ծագումնաբանությունը. այն, որ ընտանիքը ծնված օրից երեխային փոխանցում է դարերով մշակված հրեական գոյափիլիսոփայության հիմունքները, այն է՝ թաքցնել ինքնությունը հնարավոր վտանգներից պաշտպանվելու նպատակով: Յոթնամյա Բրոդսկին գիտեր, որ ինքը հրեա է, և աշխարհը լի է հրեատյացներով, պետք է հեռու մնալ հնարավոր վտանգներից, իսկ պարբերաբար ոչնչացվող հայն անգամ հասուն տարիքում չի գիտակցում ազգությունից բխող վտանգները: Հայ ընտանիքն ու հայ հանրությունը իր յոթ տարեկանին չի փոխանցում այսպիսի ինքնապաշտպանական հայեցակարգ՝ զոհասեղանին դնելով հերթական սերնդի ճակատագիրը: Հրանտ Մաթևոսյանի հերոսը ստանձնել է այս ծանր բեռը՝ ձևավորել ազգապաշտպան համակարգ և փոխանցել վտանգի կանխազգացումը՝ հիմնվելով անձնական և համազգային փորձառությամբ ձևավորված էթնոփիլիսոփայության վրա. «Նրանք իմ հորն սպանեցին» (Վ., էջ 213),-փաստարկում է Մեսրոպը. անձնավորված այսպիսի ցավը խորհրդային եղբայրությունը մերժում էր: «Նրանք կործանեցին Անին, Մացոյի Լևոն» (Վ.,էջ 213),- հարցի այսպիսի դրվածքից էլ նացիոնալիզմի հոտ էր գալիս, և նացիոնալիստի պիտակով աքսոր ու կառափնարան էր

[9] **Բրոդսկի** 2013, 115:

քշվում ազգի միտքն ու մարմինը: Հետևաբար Մեսրոպն իրավունք ուներ ոչ միայն չարենցյան «Թե մի՞ֆ էիր դուն» գոչելու, այլև հնչեցնելու Տերյանի, լայն առումով՝ մշակութային ամեն հայի ահազանգը՝ Մի՞թե վերջին պոետն եմ ես: Չէ՞ որ համագյուղացիները Մեսրոպին «ցնդած բանաստեղծ» էին որակել:

Ծմակի թշնամին

Ծմակը և նրա բնիկը՝ որպես արարչագործ կենսաուժի դրական եզր, ունեն իրենց հակոտնյան՝ բացասական, ավերիչ եզրը՝ օտարը, այլ ինքնության կրողը, որ թվացյալ այլասիրության, հորինված նացիոնալիզմի կարգախոսով գալիս է հողը, երկիրը, բնիկին ոչնչացնելու: Օտարը «Մեծամորում» պարսիկը, արաբը, թուրքն է, «Մեսրոպում»՝ թուրքն ու բոլշևիկը: «Թափանցիկ օր» էսսեում՝ գեղագրելով հայ ինքնության էատարրերը՝ «միամիտ, սիրելի, թույլ, հավատավոր», հեղինակը հակադրվում է իր իսկ ստեղծած հիքսոսյան երկաթակուռ կերպարին՝ իր ինքնությունը հայտնակերպելով ոչ թե հիքսոս նախնյաց, այլ պարտվածի կերպարում. «Այդպես չհասկացվա՜ծ, այդպես թու՜յլ, այդպես անհավասա՜ր՝ նա երկու հազար հինգ հարյուր տարվա մշուշից ընդառաջ ելավ, և ես տեսա ինձ» (Ե,1, էջ 315): Ինքն իրեն կորցնելով ու գտնելով պատմության կեղծված էջերում՝ հեղինակը հանկարծ պեղում է հայոց գիրը, ու ինքն ու գիրը դարձյալ նույնական են. «Լավ գիր է,- տխրեց Վռամշապուհը,- գեղեցիկ, էսպես ինքն իր համար: Ոչ ոքի ոչինչ չի հրամայում: Մեզանից ուրիշի ոչ մի պարտադրանք չի տանում: Ինքն իր համար կա ներամփոփ, խոհուն և իր խորին եզրահանգումն ինքն իր մեջ մեռցնող: Սա Հայոց գիրն է և միայն Հայոց գիրն է: Մեր մասին ու մեզ համար ճիշտ գիր է» (Ե, 1, էջ 357–358): Սևեռվենք «Մեզանից ուրիշի ոչ մի պարտադրանք չի տանում» մտքին ու տեսնենք, թե ինչպես է օտարի պարտադրանքը կրնկակոխ ոչնչացնում հայոց պետականությունը: Արշակունի Տիրանից պարսից շահը սիրելի ձին է պահանջում ու չստանալով՝ նենգորեն կուրացնում: Հրանտ Մաթևոսյանը հանդիմանում է Տիրանին, թե եղածը մի ձի էր, տայիր, պրծնեիր, և հարցը չի քննում այն դիտանկյունից, թե ինչո՞ւ էր օտարը հայոց արքայից նրա ձին պահանջում, և ինչո՞ւ նա պետք է իր ունեցվածքը ուրիշին տար: Եթե երկրի տերն ուժեղ է, թալանն արգելված է, բայց առաքինության ու դյուրահավատության առատությունը մոլորեցնում է. Արշակը խաբվում է վարազագրին ու բանտում է, Դավիթը խաբվում է Մելիքին ու հորում է, մարդասիրության և առաքինության այս ավելցուկից, որ Մաթևոսյանը միամտություն ու թուլություն է որակում, կործանվում է ազգային պետականությունը: Թվարկված դավերը կողք

կողքի դնելու դեպքում, պարզ կլինի՝ հայ տեսակը իր գործին է, երկիր է ղեկավարում, հող է մշակում, գիտություն է ստեղծում, իսկ դեպի նա թալանի է ձգվում Ակ-կոյունլու հոտը: Հողին սերտաճած բնիկի և անհայրենիք քոչվորի հավերժական պայքարում շահում է լավ մորթ անողը, որի բրդեղեն նենգության մեջ մոլորվում են հայոց պողպատակուռ թրերը: Մշակութասպան քոչվորը կարիք չունի տարիներով մարդու մարմնակազմությունն ուսումնասիրելու, վիզը կտրում է ու պարզում՝ քանի լիտր արյուն է պտտում սիրտը, միլիոնուկեսի վիզն է կտրում ու անունը դնում ազատագրական պայքար, և այսպես՝ սուտ ստի վրա, թաղվում է ազգի պատմությունը նույն այդ ազգի դիակների տակ, ու ստվում է ամեն սկիզբ: Այս թեմայով ուշարժան մեկնություն ունի գրականագետ Գ.Անանյանը. «Պատմության կեղծարարությունը նոր բան չէ, և դրա հմուտ վարպետները «ակ-կոյունլուներն» են: Սա նախորդ ընդհանրացման տրամաբանական շարունակությունն է: Եթե դու հիշողությունից չես հրաժարվում, ապա նա, ում դեմ ուղղվում է քո արթուն անցյալը, ամեն կերպ աշխատում է աղավաղել այն՝ եղծումից մինչև ոչնչացում: Ինքը ոչինչ չի ասում ուրիշի պատմությունը «կոյունլուաբար» յուրացնելու մասին: Նրանց «աշխարհագրագետի» նկարագրություններից մեջբերումներ է կատարում, որոնցում պատմությունը եղծված ներկայացնելու բացահայտ միտումը հասանելի է դառնում ընթերցողին: Ստացվում է այնպես, որ «կոյունլու» «աշխարհագրագետը» ինքնամերկացմամբ է զբաղվում»[10]:

Օտար ինքնության կողքին գեղագրվում է օտարված յուրայինի կերպարը, որի շուրջ գոյանում է Հրանտ Մաթևոսյանի արձակի առանցքային խնդիրներից մեկը՝ ինքնությունից օտարված կամ ինքնությունը չգիտակցող հայի վտանգավորությունը՝ հայրենաստեղծման ու պետականաշինության գործում: Քննության համար բանալի է դառնում Նապոլեոնի կողմից հայազգի զորավար Մյուրատին Բորոդինոյում չպարտվելու դեպքում կորուսյալ հայրենիքը ընծայաբերելու միֆը, որը միֆ էլ մնում է, իբր, կայսեր հարբուխի պատճառով. «Հարկավոր է լավ նայել դիվանագիտության հանրագիտարանը, երևի թե կա քաղաքագիտության հայազգի մի գայլ, որ աչքը աչքին խաբում է ուրիշ գայլերի հանուն, ասենք թե, իր Անգլիայի և երեխայի պես խաբվում հարբուխի առասպելից» (Ե,1, էջ 344): Մյուրատին կորուսյալ հայրենիքը պետք չէր, որովհետև ինքնությունից օտարված զորավարն անձնուրաց ծառայում էր իր Ֆրանսիային, և պակաս վտանգավոր էր հայության համար, քանզի հիմ-

[10] **Անանյան** 2006, էջ 75:

նովին օտարված էր: Բայց կար հայակեր հայի վտանգավոր տիպը, որը ներկայանում է բյուզանդական հայ Վասիլ II-ով, ավելացնենք՝ մոր կողմից հայ Սուլթան Համիդին, Մեծ Միհրի որդի փոքր Մելիքին, և պատմական ու գրական հայակեր խառնածինների շարքը բաց թողնելով՝ վավերացնենք ազգային գաղափարախոսությունից ու դաստիարակությունից օտարվածների և թշնամու շահին վաճառվածների սոսկալի դերակատարումը հայոց պետականության կործանման գործում:

Պակաս վտանգավոր չէին Ծմակի ներսի օտարված յուրայինները, որովհետև նրանք ներսից էին օժանդակում իրենց Պարսկաստանին, ինչպես Տիրանի պալատականը, Արշակի նախարարները, իրենց խորհրդային «հայրենիքին», ինչպես թուրքի հետ հանդերը կիսող հովիվները, Մեսրոպին մատնող Լևոնը, Ճրագթաթը հատողները, և Մաթևոսյանի արձակում հենակետային է դառնում ծմակահենի ու ծմակապահի հակադրությունը, Ծմակուտ աշխարհի Տիրոջ և ինքնուրացող նյութապաշտ անհայրենիքի բախումը, ինչը «Տերը» կինովիպակում վերաճում է հայրենապաշտների ու օտարվածների անհաշտ պայքարի: Այս երևույթը Ակսել Բակունցի «Կյորեսում» ու «Կարմրաքարում» նույնպես Ծմակ-բնօրրանը թալանել-կործանելու շեշտադրում ուներ, և Ակսել Բակունցն ու Հրանտ Մաթևոսյանը ծմակահատ հակամշակութային տիպին հակադրեցին հայրենապաշտ իդեալիստին՝ Ծմակի փրկությունը բացառապես պայմանավորելով նրա անձնազոհությամբ:

Եզրակացություն

Ամփոփելով վերոբերյալ դիտարկումները՝ կարելի է եզրակացնել, որ Հր. Մաթևոսյանի Ծմակը՝ որպես գեղարվեստական իրականություն, բաղադրված է գաղափարագեղագիտական մի քանի հանգույցներից: Իմաստային կենտրոնում Ծմակուտն է՝ որպես հայրենիքի մոդել. հեղինակն այն պատկերագրում է ուղիղ և այլաբանական իմաստների համադրությամբ: Ծմակը՝ որպես աշխարհագրական միավոր, ունի տարածական ընկալման բազմակերպություն՝ տուն-հայրենիք սահմանային եզրերով: Որպես բնօրրան՝ Ծմակը գոյավորվել է ժամանակի չափման տիրույթում, Մաթևոսյանը ժամանակի գեղագիտական չափորոշիչներով վերականգնում է հայրենիքի և ինքնության ծննդաբանությունը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանյան Գ., 2006, Ազգային ինքնության խնդիրը «Մեծամոր»-ում, «Մաթևոսյանական ընթերցումներ 1», ԵՊՀ հրատ., Երևան, 182 էջ:

Բրոդսկի Ի. 2013, Միավորից փոքր, «Նորք», թիվ 3, Երևան, 159 էջ:

Գրիգորյան Վ. 2013, Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործությունը, ԵՊՀ հրատ., Երևան, 561 էջ:

Խորենացի Մ. 1981, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 587 էջ:

Մաթևոսյան Հ. 1985, Երկեր երկու հատորով, հ. 1, «Սովետական գրող», Երևան, 584 էջ:

Մաթևոսյան Հ. 1985, Երկեր երկու հատորով, հ. 2, «Սովետական գրող», Երևան, 613 էջ:

Մաթևոսյան Հ. 1990, Վիպակներ, «Նաիրի», Երևան, 733 էջ:

Մաթևոսյան Հ. 2004, Սպիտակ թղթի առջև, «Հայագիտակ», Երևան, 366 էջ:

Չարենց Ե. 1985, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, «Սովետական գրող», Երևան, 439 էջ:

Չարենց Ե. 1987, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, «Սովետական գրող», Երևան, 366 էջ:

ХРОНОТОП РОДИНЫ-КОЛЫБЕЛИ В ХУДОЖЕСТВЕННОЙ СИСТЕМЕ ГРАНТА МАТЕВОСЯНА

АВЕТИСЯН С.

Резюме

Ключевые слова: идентичность, Цмак (лес), колыбель, хронотоп, владелец, онтология, национальное самосознание.

Цмак как художественная реальность в художественной системе Гранта Матевосяна является экзистенциальной конструкцией. В смысловом центре эстетического мировоззрения писателя Цмакут являет собой модель родины.

Цмак как географическое пространство существует в определенном временном измерении.

Апеллируя к эстетическим критериям времени, Грант Матевосян восстанавливает генеалогию родины-колыбели и идентичность с эстетическими стандартами времени.

THE CHRONOTOPE OF CRADLE-HOMELAND IN HRANT MATEVOSYAN'S ARTISTIC SYSTEM


AVETISYAN S.

Summary

Keywords: identity, Tsmak (forest), cradle, chronotope, owner, ontology, national consciousness.

Tsmak as an artistic reality is an existential construct in H. Matevosyan's artistic system. In the semantic center of the writer's aesthetic worldview Tsmakut embodies the concept of homeland. Tsmak as a geographical unit exists in a certain temporal dimension. Adhering to the aesthetic criteria of the time, H. Matevosyan restores the genealogy of the cradle-homeland and its identity with the aesthetic standards of the time.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ
BOOK REVIEWS



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՎԵՐՋԻՆ՝ XIV ՀԱՏՈՐԸ

(Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021, 1136 էջ)

Բոլորովին վերջերս լույս տեսավ Վարպետի Երկերի ժողովածուի XIV հատորը, որը պարունակում է նրա նամակները՝ 1924-ից մինչև 1957-ի ժամանակահատվածում գրված: Իսահակյանի նամակները մինչ այդ հրատարակվել են մի շարք պարբերականներում, նրա երկերի ժողովածուներում: 1979-ին լույս տեսած նրա Երկերի ժողովածուի VI հատորում տպագրվել են Ավ. Իսահակյանի նամակները, սակայն ոչ լրիվ, լիակատարը ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ջանքերով իրականացած ակադեմիական հրատարակության XIII և XIV հատորներում ամփոփված և մեզ հասած նամակներն են, որոնք բոլորովին նոր լույս են սփռում հանճարեղ գրողի կյանքի, նրա փիլիսոփայության, հայրենասիրության, համամարդկային արժեքները գնահատելու կարողության, մարդկության, նաև իր պաշտելի երկրի ապագան մարգարեաբար կռահելու իմաստության վրա:

Արդեն Վալերի Բրյուսովի հրատարակած «Поэзия Армении» ժողովածուի առաջաբանում, որը լույս տեսավ 1916-ին, Իսահակյանը Բրյուսովի կողմից համեմատվում է և հավասարի իրավունքով կանգնում ֆրանսիական, գերմանական, ռուսական նշանավոր բանաստեղծների կողքին[1]: Իսահակյանի

[1] «Поэзия Армении» 1987, 80.

«Աբու-Լալա Մահարի» պոեմը թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով. այն համարվել է բանաստեղծի գլուխգործոցը[2]: Ինչպես կտեսնենք Իսահակյանի նամակներից, նա իր գլուխգործոցը համարում էր «Ուստա Կարո» վեպը, որը մնաց անավարտ[3]: «Ուստա Կարո» վեպի խնդիրը Վարպետը շոշափում է իր տարբեր տարիներին գրված նամակներում՝ շարունակ երազելով գտնել վեպի ավարտը: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն այս առումով ունի հետաքրքիր դիտարկում. «Այս իմաստով «անավարտ» ու հավերժական են Դոն Կիխոտը, Քաջ Նազարը, Ֆաուստը, Մեֆիստոֆելը, Տարտարենը, Ուլենշպիգելը: Այստեղ միֆոլոգիական մի սկիզբ կա, որ անբաժանելի է մարդկային բնույթից և այս իմաստով՝ համամարդկային ու հավերժական»[4]:

1939-ին Իսահակյանի «Ընտիր երկերի» ժողովածուի առաջին հատորի առաջաբանում գրականագետ Խորեն Սարգսյանը գրում է, թե Իսահակյանին ենթակա են թե՛ ժամանակը և թե՛ տարածությունը. «Նրան հայտնի են դրախտի գաղտնիքները, նա շոշափելի, ինչպես այսօրը, պատկերացնում է հայ ժողովրդի նախահայրերին»[5]:

Իսահակյանի՝ աշխարհի և մարդու մասին բոլոր պատկերացումների հանրագումարը գտնում ենք հատկապես նրա հասուն տարիքում գրած նամակներում:

Նամակը անհատական երևույթ է, որն ունի մեծ ճանաչողական արժեք: Նամակի բովանդակությունը ներկայացնում է նամակագրի անխարդախ էությունը: Եթե նամակագիրը մեծ մտածող է, ապա նամակը դադարում է մեկ մարդու կամ մեկ խմբի ուղղված լինելուց ու դառնում է համամարդկային արժեք:

Հենց այդպիսին է Իսահակյանի նամակների մեծագույն մասը՝ գրված 1924-ից մինչև 1957 թվականը: Այդ նամակներում կարևորագույն տեղ են զբաղեցնում հայ ժողովրդի պատմական ճակատագրի և նրա ապագայի խնդիրները:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Իսահակյանը խիստ տագնապած է հայկական պատմական տարածքները բոլշևիկների ձեռքով թուրքերին զիջելու խնդրով. «...բոլշևիկները մտադիր չեն թուրքերի հետ գեշանալու, և եթե մեր ունեցածը չտան, թուրքերի խլածից մի թիզ հող խլելու

---

[2] **Avédik Issahakian** 1952, 7.

[3] **Իսահակյան** 2006, 547, 561:

[4] **Իսահակյան** 2006, 24:

[5] **Իսահակյան** 1939, 8:

չեն. սա պարզ է ինձ»[6]: Սա գրվել է 1924-ի փետրվարին և ուղղված է Վարդգես Ահարոնյանին: Նույն նամակում հիշեցնում է, որ ցարական բանակը Առաջին աշխարհամարտի ժամանակ պինդ նստած էր Մուշ ու Երզնկայում, մինչդեռ «ֆատալ սոցիալիզմը մարդկությանը դեռ բարիք չտված, մեր տունը քանդեց»[7]:

1926-ի օգոստոսին Ռուբեն Դարբինյանին Վենետիկից գրած նամակում նա ուղարկել է մի բանաստեղծություն՝ նվիրված Բագրատունիների Հայաստանի Անի մայրաքաղաքին, որում կան այսպիսի տողեր.

Տափաստաններից խուժանը վայրագ
Հորդել է, եկել-հեղեղ զայրագին,
Ուզում է, Անի, ընկճել լուծի տակ
Քո ստեղծագործ, թևավոր ոգին[8]:

Նույն նամակում գրում է. «Ես հին հայրենասեր եմ, համառ, անվերապահ: Սոցիալիզմը այնչափով եմ ընդունում, ինչ չափով որ չի վնասելու ազգային իդեալներին»[9]:

Չափազանց արդիական դիտարկում կա 1934-ի օգոստոսին Փարիզից Կարեն Միքայելյանին գրված նամակում: Վարպետը վշտացած է, որ թուրքական գիտական մի հանձնաժողով որոշել է ուսումնասիրել Անի քաղաքի հնությունները: Թեպետ Իսահակյանը չի եղել Արևմտահայաստանի նշանավոր տաճարներում, սակայն հիանալի գիտի, որ 1915 թվականի ցեղասպանությունից հետո դրանց մեծ մասն ավերվել ու ոչնչացվել և «ապագա ուսումնասիրողների համար այլևս նյութ չի մնացել»[10]:

1934-ի դեկտեմբերին Սահակ Տեր-Գաբրիելյանին ուղղված նամակում Իսահակյանը տագնապած հիշեցնում է Խորհրդային Միության ու Թուրքիայի ջերմ հարաբերությունների մասին, ըստ որի, եթե Խորհրդային Միությունը պատերազմի Ճապոնիայի հետ, ապա Անդրկովկասի պաշտպանությունը հանձնարարվելու է Թուրքիային: «Այդ կնշանակե հայ ժողովրդի վերջին մնա-

[6] **Իսահակյան** 2021, 13:
[7] **Իսահակյան** 2021, 16:
[8] **Իսահակյան** 2021, 169:
[9] **Իսահակյան** 2021, 168:
[10] **Իսահակյան** 2021, 351:

ցորդի մահը, և երկրագնդի վրայից կջնջվի մի ազգ՝ իր անունով ու հայրենիքով: Եվ դա հավիտենական նախատինք կլինի Միության համար»[11]:

Հայրենիքի նկատմամբ ունեցած նվիրումի զգացմունքը Իսահակյանին ուղեկցել է ողջ կյանքում: Իր նամակների մեծագույն մասում բանաստեղծն ամենատարբեր առիթներով հիշեցնում է, թե պետք է սիրել մեր հայրենիքն ու լեզուն, նաև ամբողջ մարդկությանն ու տիեզերքը[12]:

1951-ին Կիսլովոդսկից Համայակ Սիրասին գրած նամակում Իսահակյանը վերստին խոսում է հայ գեղարվեստական գրականության ազգապահպան նշանակության մասին. «Հայ ժողովուրդը այլասերումից կարող է ազատվել իսկական գեղարվեստի ստեղծագործություններով. պետք է բարձրարժեք գրական երկեր մայրենի լեզվով, հայրենի սիրով, համամարդկային և տիեզերական գաղափարներով...»[13]:

1952 թվականին Հայաստանի պիոներ-դպրոցականներին ուղղված նամակում Իսահակյանը դեռ պատանեկության տարիքին չհասած դպրոցականներին պատգամում է ոչինչ չխնայել հայրենիքի համար, պարծենալ նրանով, նրա հերոսներով, նրա մշակույթով ու անցյալով. «Սիրել մայրենի լեզուն և բոլոր լեզուներն էլ լավ տիրապետել»[14]: Նա նաև շեշտում է պետություն ունենալու կարևորությունը, «որովհետև պետություն չունեցող ժողովուրդները փոշի են, ցնցոտի ուրիշ ժողովրդի տակ: Սիրեցեք մեր պետությունը և նրա քաջ բազուկը՝ բանակը, զորքը»[15]:

Բազմիցս իր նամակներում Վարպետը խարազանում է դավաճանության արատավոր երևույթը և պատգամում հավատարիմ լինել բարեկամին, ընկերոջը, ազգին ու հայրենիքին: Ու որպես հաստատումն իր ասածի կրկնում է արաբական իմաստախոսությունը. «Մի՛ դավաճանիր այն մարդուն, որը քեզ հավատում է, եթե դու նույնիսկ պաշտոնով լրտես լինես»[16]:

Նամակներում բնականաբար կարևոր տեղ են զբաղեցնում գրականության հարցերը: Դրանցից իմանում ենք, թե որքան պահանջկոտ է եղել Վարպետն իր անձի նկատմամբ, որքան մեծ տեղ է տվել ընթերցանությանը,

[11] **Իսահակյան** 2021, 357:
[12] **Իսահակյան** 2021, 390:
[13] **Իսահակյան** 2021, 544:
[14] **Իսահակյան** 2021, 555:
[15] **Իսահակյան** 2021, 555:
[16] **Իսահակյան** 2021, 556:

թարգմանական գրականության որակին, գրողների բազմագիտակությանն ու սիրած գործին անմնացորդ նվիրվելուն:

Դեռևս արտասահմանում ապրած տարիներին նա ուշադիր հետևել է հայ գրականության ընթացքին՝ թե հայրենիքում և թե սփյուռքում:

1939-ի ապրիլին Երևանից Հովհաննես Շիրազին գրած նամակում Վարպետն ապագա դասականին խորհուրդ է տալիս. «Պիտի շա՜տ կարդաս - և կդառնաս մեր պոեզիայի հրաշալի ապագան»[17]:

Բացառիկ արժեքավոր է Հայպետհրատի տնօրեն Տիգրան Ալեքսանյանին գրված նամակը 1947-ի օգոստոսին: Դա պատասխան է Ալեքսանյանի հարցմանը Ֆրանց Վերֆելի և նրա «Մուսա-Դաղի քառասուն օրերը» վեպի մասին: Իսահակյանը հետաքրքիր և արժեքավոր փաստեր է հաղորդում Ֆրանց Վերֆելի և նրա վեպի մասին, որն արագորեն թարգմանվել էր բոլոր քաղաքակիրթ ազգերի լեզուներով: Այժմ հայտնի են վեպի 34-ից ավելի թարգմանություններ. «Օտար ականավոր հեղինակի կողմից գրված այս վեպը մեր արդար դատին նվիրված անգնահատելի գանձ է, եզակի, նմանը չունեցող»[18]: Նա նշում է նաև, որ ավստրիացի նշանավոր գրող Ստեֆան Ցվայգը հիացել է այդ վեպով: Փաստորեն Իսահակյանի այս ընդարձակ նամակի շնորհիվ մեզ է հասել «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի ստեղծագործական պատմությունը: Նա նշում է նաև, թե ինչպես ԱՄՆ-ի Մետրո-Գոլդվին կինոֆիրման վեպի էկրանավորումը հանձնարարել է ամերիկյան կինոյի փառքերից մեկին՝ Ռուբեն Մամուլյանին, սակայն. «Թուրքերը խոշոր գումարներ ծախսեցին այս նպատակի համար, կաշառեցին ժուռնալիստների, թերթերի»[19], և ֆիլմի նկարահանումը արգելվում է:

Վարպետի նամակներից պարզ է դառնում, թե որքան դժվար կենսապայմաններում են ապրում հայ վտարանդիները արտասահմանում:

1926-ի փետրվարին Սոֆյա Իսահակյանին Փարիզից գրած նամակում Վարպետը ցավով նշում է, թե Փարիզում ապրող ռուսահայության մեջ շատ աղքատություն կա, ու կանայք են պահում իրենց ամուսիններին: Եվ բերում է օրինակներ. «Իշխան Արղությանի կինը կարում է: Սուրեն Ադամյանի կինը կարում է: Մայիլյանները կարում են, մածուն են շինում»[20]: Ներկայացնում է

[17] **Իսահակյան** 2021, 402:
[18] **Իսահակյան** 2021, 515:
[19] **Իսահակյան** 2021, 515:
[20] **Իսահակյան** 2021, 154:

որոշ մտավորականների կենցաղային ծանր պայմանները: Լավ տանն են ապրում միայն Ադոնցը, Ծատուրյանը, Տեր-Օհանյանը:

Իսահակյանը 1926–1930 թվականներին Հայաստանում էր, և նրա նամակներից իմանում ենք մեր երկրի իրական վիճակի մասին: 1926 թվականի երկրաշարժը համընկնում է Վարպետի Հայաստանում եղած ժամանակին: 1926-ի հոկտեմբերին Ն.Ադոնցին գրած նամակում նա նկարագրում է, թե ինչպես են քանդվել իր հայրենի գյուղի տունը, ջրաղացը, և ինչ ծանր վիճակում են հարազատները: Ճիշտ է, Խորհրդային Միության երկրներից օգնություն է հասնում, սակայն աղետը շատ մեծ է: Նա Ադոնցին խնդրում է կազմակերպել սփյուռքահայության օգնությունը:

Նամակների մի զգալի մասն ուղղված է տարբեր պաշտոնյաների՝ օգնության խնդրանքով, ոչ թե իր անձի կամ ընտանիքի, այլ իր շրջապատի մարդկանց համար: Հատկապես այդօրինակ նամակները շատ են 1939 թվականից սկսած, երբ Վարպետը վերջնականապես հաստատվեց Հայաստանում:

1936 թվականի սեպտեմբերին Վենետիկից գրած նամակում Իսահակյանը Վահան Մալեզյանին բացատրում է, որ իր կամքով է վերադառնում հայրենիք: Նա հայրենիք էր վերադառնում ծանր ժամանակներում: Խորհրդային Միության մեջ սկսվել էին զանգվածային բռնությունները: Խորհրդային Հայաստանում դրանք հասել էին մեծ չափերի: Բերիայի հրահանգով սպանել էին Աղասի Խանջյանին: Այդ ամենը գիտեր Վարպետը, սակայն վերադառնում էր հայրենիք ընդմիշտ: Երևանում մտավորականների շրջանում ծայր առած մատնությունների մասին գրում է. «Թվում է ինձ՝ անհատական վրեժխնդրությունը մեծ դեր է խաղում, մանավանդ գրական գործիչների մեջ, ուր անտաղանդ մարդիկ ստոր միջոցներով հարվածում են տաղանդավորներին: Ցավալի է շա՜տ, որ համերաշխություն չկա հայերիս մեջ. մի պատմական ունակություն, որից չարաչար տուժել ենք»[21]:

Թե արտասահմանից առաջին անգամ վերադարձի ժամանակ և թե երկրորդ անգամ ընդմիշտ վերադառնալիս Վարպետը ձգտում է ծանոթանալ իրական Հայաստանի կյանքին, շրջել նրա տարբեր շրջաններում ու գյուղերում: Նա մեկնում է Մարտունի, Վայոց ձոր, Սյունիք: Նրան հետաքրքրում են նաև հոծ հայկական բնակչություն ունեցող այն վայրերը, որոնք այլևս Մեծ

[21] **Իսահակյան** 2021, 379:

Հայքի տարածք չէին համարվում, այլ տրվել էին հարևան հանրապետություններին: Դրանք էին՝ Հին Նախիջևանը, Ախալքալաքը, Ղարաբաղը և Գանձակը:

Գրականագետ Գուրգեն Հովնանը ուզում է իմանալ, թե որքանով է Նիկոլայ Գոգոլն ազդել Իսահակյանի ստեղծագործության վրա: Վերջինս խոստովանում է, թե 1908-ին Յուրի Վեսելովսկուն գրած իր նամակի մեջ գրել է, որ իր ներքին աշխարհի վրա մեծ տպավորություն է թողել Գոգոլի «Մեռած հոգիներ» վեպը: Եվ հետագայում «Ուստա Կարո» վեպի որոշ տիպերի մեջ գուցե այդ ազդեցությունը կա: 1952-ի հունվարի նույն օրը վերստին Հովնանին գրված մեկ ուրիշ նամակում նա Գոգոլի ազդեցությունն ավելի մեծ չափերով տեսնում է Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործության վրա և հիացմունքով է խոսում «Մեռած հոգիներ» վեպի դեմիրճյանական թարգմանության մասին[22]:

Իսահակյանի նամակներից երևում է նրա անսահման ընթերցասեր լինելը՝ մանավանդ գիտենք, որ նա կարդում էր գրաբար, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն:

1956-ին գրականագետ Կամսար Գրիգորյանին գրած նամակում Իսահակյանը ցավով փաստում է, որ եթե գրասերն ապրի 100 տարի, որն անում է 36.500 օր, ապա և ամեն օր կարդա, ապա չի կարող միլիոնավոր գրքերի գիտելիքներն ունենալ[23]:

Իսահակյանն ուշադիր էր իր գործերի թարգմանությունների խնդրում: Մի շարք նամակներ ուղղված են հենց թարգմանիչներին: Դրանց մեջ շատ են նամակներն ուղղված ուկրաինացի բանաստեղծ Մաքսիմ Ռիլսկուն:

Հուզիչ տողեր է պարունակում արաբ թարգմանիչ Խայր Էլ Դին Էլ Ասադին գրած նամակը՝ 1947 թ. մարտին: Այդ պրոֆեսորը 1941-ին թարգմանել էր «Աբու-Լալա Մահարի» պոեմը և գրքի 4 օրինակներ ուղարկել էր Վարպետին: Պրոֆեսորն ապրում էր Հալեպում, և այնտեղից Հայաստան ներգաղթած հայ մտավորականները մեծ գովեստով էին խոսում այդ մարդու մասին: Իր նամակում Վարպետը բարձր գնահատական է տալիս արաբական հարուստ ու համամարդկային արժեք ունեցող գրականությանն ու մշակույթին, նաև հայ-արաբական ջերմ փոխըմբռնմանը:

Շատ արժեքավոր է չինարենով Իսահակյանի գործերի թարգմանիչ Գե Բաո Յյուանին ուղղված նամակը՝ գրված 1955-ի սեպտեմբերին: Նրանում կան հետևյալ վերժամանակյա մտքերը. «Ժողովուրդները պիտի սիրեն իրար, իրար սիրելու համար պիտի ճանաչեն միմյանց. դրան հասնելու ամենաազ-

[22] **Իսահակյան** 2021, 550:

[23] **Իսահակյան** 2021, 604:

նիվ և ազդու ճանապարհը գրական և գեղարվեստական գրականությունն է, երբ կարդան, գրեն, տեսնեն մեկը մյուսի արվեստը, նրանց սրտերը կլցվեն սիրով և հարգանքով իրար հանդեպ»[24]:

1954-ին Հակոբ Նազարյանին գրած նամակում Վարպետն ուզում է իմանալ, թե ինչ հանգամանքներում է Ֆրանսիայի ակադեմիան որոշել ֆրանսերենով հրատարակել «Աբու-Լալա Մահարի» պոեմը, որի 2 օրինակները ինքը ստացել է 1953-ին: 1952-ին Փարիզում լույս տեսած «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջաբանում թարգմանիչը՝ Ժան Մինասյանը, հայտնում է, որ իրեն թարգմանելու պատվերը տվել է Ժան Մերուն[25]:

Չափազանց շատ են նամակները ուղղված Վահան Նավասարդյանին՝ «Չարենց (հուշեր և խորհրդածություններ)» հրաշալի գրքի հեղինակին[26]: Այդ փաստահարուստ գրքում բերված են «Չարենց-Նամեի» հետևյալ տողերը.

Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր
Սարսելով դահլիճն ու ֆոյեն
Ավետեց ամբողջ աշխարհին,
Որ ծնվել է - մի մեծ պոետ,
Որ ծնվել է երգիչ մի վառ
Ու բերել է երգեր հրե.
Ցնծա՛, Նաիրյան աշխարի,
Ցնծա՛...Եղիշե Չարենց[27]:

Վահան Նավասարդյանը երդվյալ դաշնակցական էր և այդպես էլ չընդունեց Խորհրդային Հայաստանը:

Ուշագրավ են հանճարեղ քանդակագործ ու նկարիչ Երվանդ Քոչարին ուղղված նամակները: Քանդակագործի հետ երկար տարիներ ջերմ ու բարեկամական հարաբերությունների մեջ է եղել Վարպետի տաղանդավոր որդին՝ Վիգեն Իսահակյանը: 1929 թվականի հունվարին Վիգենին ուղղված նամակում Իսահակյանը գրում է. «Շա՜տ ուրախ եմ, որ լավ բարեկամ ես Երվանդ

[24] **Իսահակյան** 2021, 596:
[25] **Issahakian** 1952, 8:
[26] **Նավասարդյան** 1957:
[27] **Նավասարդյան** 1957, 8:

Քոչարի հետ: Նա հանճարեղ տղա է, օգտվիր նրա խրատներից, խորհուրդներից»[28]:

Ավ. Իսահակյանի Երկերի XIV հատորը փակվում է հմուտ իսահակյանագետ Ավիկ Իսահակյանի վերջաբանով, որը խորագրված է «Երկու քարի արանքում»[29]: Այս վերջաբանը գրականագիտական խորազնին ուսումնասիրություն է՝ բաղկացած 117 էջից: Նրանում նամակներին զուգահեռ ներկայացվում են Իսահակյանի կյանքին ու գործին վերաբերող լրացուցիչ նյութեր:

Ավիկ Իսահակյանը ճիշտ պատասխան է տալիս Վարպետի այն ընդդիմախոսներին, որոնք նրան մեղադրում էին, թե իր փառքի համար է վերադարձել հայրենիք: Վարպետի ներկայությունը Խորհրդային Հայաստանում ունեցել է ազգապահպան նշանակություն: Նա այն քչերից էր, որ չարաբաստիկ 37 թվականին պահեց իր մարդկային ու քաղաքացիական անաղարտությունը: Նաազնվության ու բարության մարմնացում էր, ու նրա օրինակը պետք է լիներ Հայաստանի հողի վրա:

Վարպետի թղթակցության մեջ կան մի քանի սիրային մտերմիկ նամակներ, որոնք գրվել են այն ժամանակ, երբ նա ամուսնացած էր Սոֆյայի հետ և ուներ արդեն որդի: Այդ նամակները կարծես «Լիլիթ» պատմվածքի դրվագներից լինեն: Իսահակյանի այդ հետամուսնական սերերի մասին մանրամասներ է հաղորդում Ավիկ Իսահակյանն իր վերջաբանում՝ զետեղելով նաև այդ կանանց մի քանիսի դիմանկարները: Շատ գեղեցիկ է հատկապես նկարչուհի Վավա Խաչատուրյանի դիմանկարը, որը վրձնել է ամուսինը՝ Սարգիս Խաչատուրյանը՝ 1922-ին, Վենետիկում:

Ընդհանրապես գրքում զետեղված են կարևոր նկարներ, որոնք առավել վավերագրական են դարձնում նամականին: Իսահակյանի նամակների բնագրերը, ծանոթագրություններն ու ցանկերը կազմել է Լաուրա Վիրաբյանը, իսկ գիրքը խմբագրել են ՀՀ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանը և իր գրականագիտական ողջ կյանքը Վարպետի ստեղծագործությանը նվիրած, բանասիրության դոկտոր Ավիկ Իսահակյանը:

Այս հրաշալի հատորի լույս աշխարհ գալու համար անհրաժեշտ է շնորհակալ լինել Միքայել և Կարեն Վարդանյաններին՝ նյութական աջակցության համար:

---

[28] **Իսահակյան** 2021, 261:

[29] **Իսահակյան** 2021, 932:

Տեղին է գրախոսությունն ավարտել Վարպետի՝ 1930-ին Գարեգին Լևոնյանին գրած նամակի հետևյալ մտքով. «Փարիզը լավ է, բայց հայրենիքը ամեն տեղից լավ է: Լավագույնն է»[30]:

Վարպետի Երկերի լիակատար ժողովածուի վերջին՝ XIV հատորը նվիրված է նրա նամակներին, որոնք գրված են 1924-ից մինչև 1957 թվականը: Այդ նամակներն ունեն արդիական հնչեղություն և իրենց փաստահարուստ բովանդակությամբ մշտապես հետաքրքրելու են հանճարեղ գրողի ստեղծագործությամբ զբաղվող հետագա գրականագետներին, պատմաբաններին, լեզվաբաններին, նաև գրողներին:

Նամակներն ուղղված են իր ժամանակի նշանավոր հայ մտավորականներին՝ սփյուռքի և Հայաստանի: Նամակներից պարզ է դառնում, թե որքան բազմագիտակ է եղել Վարպետը, ինչպես է հանապազ կարդացել իր իմացած լեզուներով՝ գրաբար, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն:

Նամակներում մշտական մտահոգիչ խնդիր է Հայ դատը, Հայաստանի պատմական տարածքների այլ երկրներին հանձնելը, հայ-թուրքական հարաբերությունների բարդությունն ու վտանգը:

Իսահակյանը ողջ հայ գրականության համայնապատկերի վրա է տեսնում հայ նոր գրականության զարգացումը: Նա շարունակ տառապում է հայրենիքի ճակատագրով, նամակներում արձանագրում է Խորհրդային Հայաստանի մշակութային ու տնտեսական առաջընթացը:

Նամակներում հաճախ են հիշատակվում Հովհ. Թումանյանի իմաստուն մտքերը: Նամակների գրեթե գերակշիռ մասում Իսահակյանին մտահոգում է «Ուստա Կարո» վեպի անավարտ մնալը:

Իսահակյանի նամակները շնչում են անսահման հայրենասիրությամբ, և նրանցում կան բազմաթիվ վերժամանակյա իմաստախոսություններ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իսահակյան Ավ. 2006, Ուստա Կարո, Երևան, «Տիգրան Մեծ», 575 էջ:

Իսահակյան Ավ. 1969, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. VI, Երևան, «Սովետական գրող», 431 էջ:

Իսահակյան Ավ. 2021, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. XIV, Երևան, «Էդիթ պրինտ», 1135 էջ:

[30] **Իսահակյան** 2021, 293:

Իսահակյան Ավ. 1939, Ընտիր երկեր երկու հատորով, հ. I, Բանաստեղծություններ, թարգմանություններ, Առաջաբան Խ. Սարգսյանի, Երևան, ՀԽՍՀ պետական հրատարակչություն, 318 էջ:

Հայ նոր գրականության պատմություն, հ. V, Երևան, 1979, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1012 էջ:


Նավասարդյան Վ. 1957, Չարենց (հուշեր և խորհրդածություններ), Կահիրե, Տպարան «Հուսաբեր», 132 էջ:

Issahakian Avédik 1952, Abou-Lala Mahari, Poème en sept chants, Traduit de l'arménien par Jean Minassian, Illustrations de Shart, Paris, Éditions de l'Union d'entraide Franco-arménienne, 34 p.

Поэзия Армении с древнейших времён до наших дней 1987, под редакцией, со вступительным очерком и примечаниями В. Брюсова, Ереван, «Советакан грох», 523 с.

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
aelita.dolukhanyan@gmail.com



ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ
ՆՎԻՐԱՏՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ.
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՑԱՆԿ

(Երևան, ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2021, 240 էջ)

MARINE KHEMCHYAN
DONOR AND ADVISER IN ARMENIAN FOLK FAIRY TALES
RESEARCH AND INDEX

(Yerevan, RA NAS, Institute of archaeology and ethnography, 2021, 240 pages)

Main genre features of the Armenian folk fairy tales are conditioned by the nature of the epic world presented there. Especially in the magic tales the world is formed with a unique environment, with various items present in that envoironment and with main and secondary characters who are defined by their specific functions. The two-parts (A and B) monograph “Donor and Adviser in Armenian Folk Fairy Tales” by Marine Khemchyan, PhD, senior researcher in the RA NAS Institute of Archaeology and Ethnography, is dedicated to the functions of advising and donating, common in the Armenian folk fairy tales, as well as the characters, items, means and ways of performing them.

Although this issue in some way has been touched upon previously in the monographs and articles about fairy tales, it is the first time that the question is exclusively the main topic of a complete, systemized study that includes a wide range of materials. Studying almost all published Armenian folk fairy tales, the author carries out a study according to a fairy tale character and item classification defined by herself, taking into account the Armenian and international expertise, using traditional and modern folklore research methods.

In the introduction a general overview of the genre features and types of a fairy tale is given. The main editions of the Armenian fairy tales are singled out and noted, the modern history of the research is studied. The subject of the study, the main goals and the scientific novelty are defined. It is worth

mentioning that a reference is also made to those international fairy tale studies that are important for the methodological basis of the monograph. Especially the functional classification principle of fairy tale characters by Vladimir Propp is singled out, on the basis of which they are noted and classified.

In the first chapter, entitled "Donors and Advisers as the Characters Contributing to the Actions of the Fairy Tale Main Character", the mentioned characters are explored in the context of relevant situations and actions. Mostly based on the research of the Armenian folk magic fairy tales, in the first subsection of the first chapter Khemchyan introduces a two-step classification of fairy tale donors and assistants, and presents the issue in accordance with that in the subsequent parts and chapters. Particularly, human and human-like donors and advisers, animals, birds, wildlife, supernatural beings and objects are presented.

With a comparative, independent and thorough examination of a large material collected from different ethnographic regions the study clearly distinguishes and describes the donor and adviser characters: God, angels, various old men and women, kings and viziers, animals, birds, characters from flora and fauna.

Thanks to the donors and the reward-assistants given by them to the main characters, the latter are able to solve their tasks, to fill the initial gap, which is the main impetus and goal of the fairy tale plot development.

Worth mentioning is the author's aspiration to put the large and heterogeneous material in pre-defined methodological-analytical templates, but, as is often the case, this tendency inevitably leads to a certain schematism. The latter is mainly conditioned by the structural-functional method chosen for the fairy tale studies. In the case of each fairy tale these characters have the peculiarities of a fairy tale plot, separate motives, which in the case of a functional approach are not entirely viewable. The adviser and donor characters and their functions are distinguished and described, however in some cases their origins are disregarded or their ancient origins or their mythological prototypes are just mentioned, which is not always true and it is necessary to at least give some additional details.

However, within the chosen approach and in the context of the research issues, the character classifications are clear and logical, the examples given are appropriate.

In the second chapter, entitled "The Supernatural Assistants of the Fairy Tale Main Character", a separate reference is made to the assistant characters and items with magical qualities. Characters with physical power and various features and magical items help the fairy tale characters where the advisors and donors are not able to help. As in the previous chapter, here they are clearly classified and described.

In the two subsections of the third chapter, "Partial Manifestation of the Donor and Adviser Character's Functions", a special reference is made to the tales recorded by Garegin Srvandztyants and to the manifestations of advising and donations in dreams. The connections between fairy tales and dreams, as well as fairy tales and ancient beliefs are examined. Examples of help given to the fairy tale characters through a dream are shown.

The second part of the work, entitled "Index of the Functions of the Donors and Advisers of the Armenian Fairy Tales" is extremely useful for further fairy tale studies, where the types, kinds and functions of the advisers and donors, supernatural assistants, as well as the results of quantitative analysis of the fairy tale character assistants are given in three separate subsections. With a quantitative analysis of 605 donors, advisers, other supernatural characters and magical objects of 234 fairy tales, it is shown that in Armenian fairy tales from 1 to 16 assistants can be introduced. And a remarkable fact too: advising characters are predominant in the studied fairy tales, as it is not in all cases when advice ends with a donation.

The monograph has indisputable merits and small shortcomings that do not overshadow the large research. In particular, in our opinion, little attention is paid to the realistic tales, of course this is dictated by the demand of the issue, but it would be interesting to study the nature of advice in this type of tales.

We are sure that the monograph would have benefited if a bigger reference had been made to the advisers and donors found in the fairy tales of other peoples. There are some few references and it is noteworthy that in almost all cases the numbers of this or that function or motif are given in accordance with the international indexes of fairy tales. It would be remarkable to compare other genres of the Armenian epic legend, in particular the "Daredevils of Sasun" epic, motifs corresponding to various legends. In some cases, there are such links in the footnote.


Such problems, however, do not overshadow the high-quality and thorough scientific work done. On the whole, Marine Khemchyan has created a serious scientific study that can be useful and interesting to both philologists and folklorists, as well as to a wider range of readers interested in the Armenian folk tales and folklore.

HAYK HAMBARDZUMYAN

Senior researcher in the Mashtots Matenadaran,

PhD in Philology

hhambardzumyan@yahoo.com



“ARCHAEOLOGY OF ARMENIA IN REGIONAL CONTEXT”

EDITED BY P. AVETISYAN AND A. BOBOKHYAN

(Institute of Archaeology and Ethnography, NAS RA, Publishing House of IAE, Yerevan 2021, 432 p.)

In 2021 the second volume of ‘‘Archaeology of Armenia in Regional Context’’ was published by the Institute of Archaeology and Ethnography, NAS RA. It sums up the results of discussions at a conference dedicated to the 60th Anniversary of the Institute held in Yerevan in 2019. The volume consists of 432 pages and contains 30 articles. The articles are presented by the representatives of 30 scientific and educational institutions (8 of which from the Republics of Armenia and Artsakh) from 10 countries. The volume reflects recent achievements of Armenian archaeology realized by local and international specialists. It includes studies from the Stone Age to the Late Middle Ages. The papers are listed in chronological order and, according to their content, can be divided into two major groups: research history and research results.

